

Բարսի

ՄԵՊՏԵՐԵՐԸ 85

ՄԱՐԵՏԻ

ՎԱՐՆ ԹԵՐԵՆԻ

Պարկի զաւո՛ր, գոյ մնաց,
Անտառքն մնաց գոյ,
Երբ քաղիչ չսննցոյ:

Ու մի այն Լոյս ճննցաւ,
Լեռն ածաւիտ, մրգաւ
Պայծառացաւ, իսկուցաւ:

Պարկի զաւո՛ր է՛ն, մտնոյ
Երբ քաղիչն սննցոյնս
Չի՛ ճոյնն մի հասարակոյ:

Ո՛ր հնամայր, բարձր
Արբիւններն իսկուցան
Այլ ունի հոգ եր հասան:

Պարկի, հազար հոգ զաւո՛ր
Երբ բնամին հասանց
Եղաք յանկարծ քաղիչներ:

Օգնեալ աշխարհ բաժանին,
Բունց զիմաց բնամին
Հանցաւ հայր սիրուն աշխարհ:

Ընծեալ մի հոգի բուն մտնոյ,
Չի հարստանն աւսրոյ
Ընդին հանցաւ մի մտնոյ:



Բ Ա Վ Ա Ն Դ Ա Կ Ա Ռ Ի Թ Ի Ի Ն



1-	* * *	Քառասուն օրերը...
2-	* * *	Ֆրանց Վերֆել
7-	Տ. Տիև Ֆոն Բոնիե	Մովսեսի լեռան հայերու ազատագրումը
8-	XXX	Վիպալուքի մեք
9-	* * *	«Քառասուն օրեր»-ու բարգմանչական պատմութենէն...
11-	ՅՐԱՆՑ ՎԵՐՖԵԼ	Մուսա տաղի քառասուն օրերը (բարգմ. Տոֆ. Բ. Փափագեան)
21-	Կ. ՊԱՆՃԵԱՆ (Վազգէն Ա. Կաթողիկոս)	Մուսա լեռան հայերը
24-	ԵԳ. ՊՈՅԱՆՅԵԱՆ	Գիցագնամարտը
27-	ԴԱՐԵԳԻՆ Բ. ԿԱԹՈՂԻԿՈՍ	Հերոսներու ուղիով
33-	Ա. ԶՕՊԱՆԵԱՆ	Ֆրանց Վերֆելի գիրքը
36-	Ա. ԵՐԿԱԹ	Մուսա տաղ
38-	Հ. Գ. ՂԱԶԱՐԵԱՆ	«Մուսա տաղի քառասուն օրեր»-ու անգլիերէն բարգմանութիւնը
45-	Գ. ԱՔԳԱՐԵԱՆ	Դանիէլ վարուժան եւ Ֆրանց Վերֆել
49-	* * *	Յաղաւտած հատուածներ
52-	ՅՈՎՀ. ՇԻՐԱԶ	Մուսալեռացիներին
54-	ՍԻ. ԻՍԱՀԱԿԵԱՆ	Ֆրանց Վերֆելի «Մուսա տաղի քառասուն օրերը»
57-	Մ. ՓԻՐՈՒՄԵԱՆ	Կանայք Ֆրանց Վերֆելի «Մուսա լեռան քառասուն օրը» վէպում
63-	Ե. ՊԵՏՐՈՎՍԿԻ	Ահագանգ, որին չանսաց աշխարհը
69-	Մ. ԴՈՒԴԻՆ	Արիութեան բարձունքից
73-	«ՅՈՒՍԵՔԵՐ»	Բաց նամակ Ֆրանց Վերֆելին
76-	Ն. ՃԱՊԻ	Ճէպէլ մուսա

Բազմ

ԱՅՍԱԳԻՐ ԳՐԱԳԱՆՈՒՐԵԱՆ ԵՎ ԱՐՈՒՅԱՏԻ

ԲՆ. ՅԱՐԱ. ԻՐԱՆ ՍՊՊՏՈՄԱՐԻ 1966 ՎԵՐՔԱՐ

ՔԱՌԱՍՈՒՆ ՕՐԵՐԸ...

1985 թուականը մեծ եղեռնի 70ամեակը չէ միայն, 70ամեակն է նաև մահուամբ մահը կոխելու տղամարդկային մեր կամքին, որ գրեթե անցյալ վա- նայ ու Մասնոյ, Ռոբֆայի եւ Գարահիսարի եւ այլ վայրերու մէջ:

Նոյն շարքին կը գտնուի նաև Մուսա լեռան վրայ պայքած ինքնապաշտ- պանութեան խոյանքը, որ ունեցաւ բացառիկ բախտ մը՝ կոխիլն մէջ ինկած հե- ռոսներուն սակաւաթիւ համբաւըով թէ բարեղէպ իր ելքով: Նաև առաջին օ- լէն իր շուրջը ծառայած համաշխարհային համարումով: Անոր խորհուրդը նը- փրագործուեցաւ նոյնպէս արուեստի աշխարհին մէջ, դարձաւ բանաստեղծա- կան ներշնչող ուժ, վերածուեցաւ երգի, համանուագի եւ, մա՛նաանդ՝ վէպի: Տրանց Վերֆէլի «Մուսա լեռան քառասուն օրերը»:

Համաշխարհային գրականութեան մէջ շատ քիչ են թերեւ այն գոր- ծերը, որոնք իրենց հրատարակութեան առաջին տարին դեռ չբողոքած՝ երե- սունէ առեղի լեզուներու բարգմանուած ըլլան եւ ըլլան արժանացած այնքան մեծ թիւով վաւերական ղէմքերու անվերապահ գնահատանքին: Անոցին գրա- կանութիւն մը կայ այսօր Վերֆէլի վէպին մասին, վերլուծումներ, խորհրդա- ծութիւններ, ընդհանրացումներ, որոնց համաձայն ընթերցողներու մեծ թիւ մը համար յայտնութեան գիրք մը եղած է «Մուսա լեռան քառասուն օրերը»:

Այս արդիւնքը, բնական է, որ պիտի ունենար անաբեկիչ անդրադարձ մը դարաւոր մեր ոտիին վրայ, եւ ունեցա՛ւ անաբեկիչ անդրադարձ մը, ու թուրք պետական շրջանակները մեր մղած միւս պայքարներուն կարգին փոր- ձեցին հարուածել նաև «Մուսա լեռան քառասուն օրեր»ուն մղած պայքարը, դիւանագիտական խուճապով ու դրամին ուժով, բայց արուեստով յազեցած գոր- ծերը շատ չեն պարտիք նժան միջոցառումներէ, չազդուեցաւ նաև Վերֆէլի վէպը, որ կը շարունակէ իր յաղթական երթը վերիտարակութիւններով, նո- րանոր բարգմանութիւններով, բեմերու վրայ թէ ժապաւէններու մէջ:

«Բազմ»ի ներկայ թիւը փորձ մըն է վերաբարմացնելու Վերֆէլի վէ- պին խորհուրդը եւ անոր «արարչագործ պատճառը» — համատարած սուգին վրայ բացուած ինքնապաշտպանութեան մեր ոգորումներուն ծիածանը...

digitised by 10096-86p A.R.A.R.®

ՖՐԱՆՑ ՎԵՐՓԷԼ

(1890 — 1945)



Բանաստեղծ, թատերադիր, վիպասան և և էսսեյիսթ Ֆրանց Վերֆելի դրամատուրգները, իր այլազանութեամբ և, յաճախ, անհասարութեամբ, հետաքրքրական ամբողջութիւն մը կը կազմէ, ուր որոշ հարցեր, ինչպէս հակառակմապաշտութիւնը, հայր-որդի յարաբերութիւնները, անառակ որդիին վերադարձը, միսթիք միութեան մը ստեղծումը Ատտուժոյ հետ, և այլն, կը յայտնուին շարունակ։ Եթէ ասոնց վրայ աւելցնենք այն իրողութիւնը, որ Վերֆելը հրեայ մըն է, որ կը փորձէ կաթողիկէ մարդու կրօնական ըմբռումները կիրարկել, և արդի մարդ մը, որուն համար 13րդ-14րդ դարերու ասպետական արժէքները նուիրական են՝ կը հասկնանք մտածող ու ընտանգծազործ Վերֆելի արժարժան հարցերուն բարդութիւնը։

Ֆրանց Վերֆելը ծնած է 10 Սեպտեմբեր 1890ին, (Ձեխուսլովաքիա), հրեայ մեծահարուստ ընտանիքի մը մէջ։ Անիշխ է, որ ինք զերմաներէնով ստեղծագործած է, սակայն իր գրականութիւնը աստիճանաբար աստիճանաբար և չեխուսլովաքիան չընթացաւին հետ աղերս ունի, եթէ վայր-

կեանի մը համար մոռնանք իր հրէական ծագումը։ Պարզ է, որ իր հակառակմապաշտ արամադրութիւններով՝ ան հոգեկան անմիջական կապ պիտի չզգար 'Իբրմանիոյ նկատմամբ։ Մինչդեռ, ինչպէս «Աշխարհի մթնշաղկը» պատմուածքներու անպիտան թարգմանութեան ներածականին մէջ կը խոստովանի, իրեն համար նախապատերազմեան Աւստրիոն տարբեր ցեղերու և կրօնական տարբեր հաւատարկութիւններու խաղաղ գոյակցութեան միջավայրը կը հանդիսանայ։

Եւ ինչպէս այս միջավայրին, նոյնպէս և իր ընտանեկան մթնոլորտին հետ ծանօթացումը կարելի է՝ Վերֆելի գրականութիւնը հասկնալու համար, Վերֆելի հայրը, ձեռնոցներու գործարան մը ունէր և որուն արտադրութիւնը լայն ճանաչում գտած էր Ձեխուսլովաքիոյ և Աւստրիոյ մէջ, եղած է լաւ դաշնակահար, օֆերայի երկրպագու և զեղանկարչութեան սիրահար մը, սակայն ապառայ գրողին մէջ տեսած է միայն գործընկեր մը և, ընդհանրապէս, միտական զիրգորոշում ունեցած է անոր գրական հակումներուն նկատմամբ։

Վերֆէլ կը յանձնէ Փրակայի գիմնասիւնը, ապա, 1909էն 1910՝ Վիեննայի Համալսարանը: Այս շրջանին՝ իր ընտանիքին եւ շրջապատին մէջ ան անգործնական եւ ոչ մէկ բանի պիտանի անձ մը կը նկատուի: Համալսարանին մէջ առաւելաբար բանաստեղծութիւններ եւ էսսէյներ կը գրէ եւ զանոնք կը յանձնէ ծանօթ գրողներու ուղարկութեան, այսինքն՝ իր մեծ հայրենակիցներէն Թրանց Քաֆքայի, վիպասաններ՝ Կիւթաւ Մէյրիքի ու Մաքս Պրոտի, եւ այդ օրերուն հաշակաւոր բանաստեղծ Օթթաբար Պրէզինայի, որուն բանաստեղծութիւններէն մաս մը, տասնամեակ մը ետք, կը թարգմանէ գերմաներէնի:

1910ին լոյս կը տեսնէ իր առաջին թատերախաղը, որմէ անմիջապէս ետք կը մտնէ հորինական տունը, ուր միայն ժրտական արամադրութիւններ գտած էր իր նախապիտութիւններուն նկատմամբ, եւ կ'երթայ քնակիլ Համպտրի, աշխատելով ծովային փոխադրութիւններու յատուկ ընկերութեան մը մէջ: Այսպէսով կը ըստինքն ստեղծագործական բեղուն շրջան մը Վերֆէլի համար. նոյն տարին իսկ լոյս կ'ընծայէ բանաստեղծութիւններու հատոր մը:

1911էն 1912՝ իր պարտադիր զինուորութիւնը կը կատարէ, սակայն յաճախ հարցեր կ'ունենայ իր մեծաւորներուն հետ, անիշխանականութեան հասնող խառնուածքին պատճառով:

Առաջին Համաշխարհային պատերազմի ընթացքին զինք կը գտնենք հակառակապայտներու շարքին: Այդ արամադրութիւններէն թելադրուած պատմուածք մը կը հրատարակէ, որ առաջին հակառակապայտ գործերէն մէկը կը նկատուի: Եռսով խմբակ մը կը կազմէ՝ Մարթին Պուլլերի, Կիւթաւ Լանտլորի եւ Մաքս Եիլլերի հետ, որոնք տարբեր խառնուածքներու եւ ըմբռնումներու տէր մընտաւորականներ կը գրողներ էին, սակայն կը յատկանշուէին իրենց ուժականութեամբ եւ պատերազմի դէմ դիրքորոշումով: Ինք բազմաթիւ յօդուածներ կը ստորագրէ այս շրջանին, սակայն իր հակառակապայտութիւնը կը բխի ոչ թէ քաղաքական յատակ ուղեղի մէջ, այլ՝ միտ-

թիք հաւատքէ մը, թէ բոլոր կենդանի գոյիները հաղորդակցութեան-կապի մէջ կը գտնուին եւ, հետեւաբար, կարելի չէ զիրար ոչնչացնել: Սակայն այս շրջանին իր ամէնէն կայուն կոմ արժեքաւոր գործը կը մնայ Einanderը, հրատարակուած՝ 1915 Փետրուարին, որ այս արամադրութիւնները գրեւորելով հանդերձ, իր քերթողութեան մէջ առանձին տեղ կը զբաւէ:

Հոս կ'արժէ պահ մը կանգ առնել իր էսսէյներուն վրայ: Վերֆէլ ընթացիկ հասկացողութեամբ էսսէյներ չի ստորագրեր: Իր գրութիւնները կը քողարկուին պանդակներ կամ ներկայացումներ են իր ըմբռնումներուն, գիտական հարցեր ըլլան անոնք, գեղարուեստական, քաղաքական թէ կրօնական: Լոր Ծովթէն եւ Ճան Սփայէք միանաբար յօդուած մը ստորագրած են այս աւանդութեամբ, Վերֆէլի հետեւեալ յօդուածներէն մէջ, 1968ին, «Ծրանց Վերֆէլի Էսսէյները — Քիմուա Բիւմ մը» խորագրով, ուր կ'անդրադառնայ այս հարցերուն:

Ինչպէս այս երկուքը կը վերլուծեն, Վերֆէլ ամէնէն առաջ կենսական կը ընկատէ հոգեկան զարթոնքի մը անհրաժեշտութիւնը՝ մարդկութեան փրկութեան համար ու, այս շրջանին մէջ ալ, կը քննէ երաշխական եւ քրիստոնէական կրօններու յարաբերութիւնները: Ինք մարդկութեան փրկութիւնը կը գտնէ ո՛չ ընկերակցութեան, ոչ ալ յիպոփոսութեան մէջ, այլ մարդու ներս: Խարհին մէջ խորացման: Կ'ամբաստանէ ընկերակցութիւնն ու քաղաքական միտ շարժումները վերացականութեամբ (դասակարգային պայքարը եւս նկատելով վերացական արժեքային): Ամէն պարագայի, այս բոլորին մէջ Վերֆէլի մարդասիրական եւ հակառակապայտ արամադրութիւնները պէտք է նկատի ունենայ առաւելաբար, որովհետեւ մտացեալը՝ ենթակայական գիտահետազոտութիւններ կու գան եւ մտածողական աւժուր համակարգ մը չեն ներկայացներ:

Այս կարճ փակադիմէն ետք պէտք է նշել, որ այս հակառակապայտ երիտասարդն ալ չուսով կը կանչուի ծառայութեան Միլիտար Լայֆցիլէն Փրակ փոխա-

զբոսական ատեն շոգեկառքի արկած մը կ'անցընէր եւ երկու ամիս կը մնար Պոզընի հիւանդանոցը, Ահմետեան կ'ըլլայ աւելս տարիական բանակի նահանջին (Օգոստոս 1016, ժէզիրենա)։ Ետնէկանը այն է սահայն, որ այս շրջանին իր ստեղծագործական թափը երբեք չի կտորր։ 1816ին, պերլինեան թատերախումբ մը, աւելի րան 60 անդամով՝ կը ներկայացնէ Ռուրիփիուսի «Այս Տրովպայի» կիկերրո թատերախաղին իր մէկ պատշաճեցումը, Գերմանիոյ եւ Աւստրիոյ տարբեր քաղաքներուն մէջ։

1917 Օգոստոսին՝ բարեբախտութիւնը կ'ունենայ փոխադրուելու պատերազմական լրատութեան բաժանմունքը, Վիեննայի մէջ։ 1918ին կ'ամուսնանայ եւ արագ այցելութիւններ կու տայ Գերմանիա եւ Վենետիկ, Աւիյի երկար ճամբորդութեան մը պիտի ձեռնարկէ աւելի ուշ միայն, 1925ին, շրջապտոյտ մը կատարելով Սզիպտոսի եւ Պաղեստինի մէջ, շեռտարբարակներէն, Վերֆէլ այս շրջանին կը յարինէ իր քնարական ամենայաւելոյ բանաստեղծութիւնները, որոնք 1919ին կը հրատարակուին Gerichtsag խորագրով։ Սակայն արդէն իր նոխարութեան թիւերը սկսած են բարձրել թատերականի եւ վիպի ուղղութեամբ, նոյն տարին լոյս կ'ընծայէ արտայայտազարտ վիպակ մը՝ «Ո՛ր» սպաննողին մերնադրով, որ կ'արժարժուի հայր-որդի տաղանաւոր։

Բանաստեղծութիւնէն թատերին ու վէպին շանցած՝ կ'արժէ կարճ ղնահատական մը կատարել Վերֆէլի քերթողութեան։ Անոր մէկ մասը, ինչպէս ըսինք, իր հակա-ազգայնապաշտ ապրումները կը գրեւորէ։ Մնացեալը, ընդհանրապէս, քնարական նկարագրի գործեր են։ Վերֆէլի մանկութիւնը կարեւոր թեմա է հոն, կարեւոր հարցեր են նաեւ այլազան փորձառութիւններու մէջ նետուելու իր միտումը, բացուածութիւնը աշխարհին, մահը, եւայլն։

Վերֆէլի քննադատներէն էրիխ Քաւալըր կ'ըսէ, որ ան ամէնէն աւելի ինքզինը հանգիստ կը զգայ բանաստեղծութեան մէջ, ասոր համար ալ հոն շատ աւելի անկեղծ է, բաց եւ ուղղաբան։ Ըստ Քաւա-

լըրի՝ անոր հարցերէն են նաեւ լեզուի սահմանափակութեան տաղանապը եւ յիշողութեան շրջանցումը, առաւել՝ քնարական խորքով այս բանաստեղծը, յաճախ դիմանական պարտք քերթողութիւնը կ'ըլլան։

Ուշադրաւ է այն պարագան, որ քաւաստեղծութիւնէն թատերգութիւն Վերֆէլի այս անցումը, կարգ մը քննադատներ կը մերադրեն ներքին հակասութիւններու եւ ներգաւնակ աշխարհահայացրի մը պակասին։ Նման զգայնութեան մը պակասը կը զժողովարացնէ քերթողութիւնը, սակայն, թատերական մարզին մէջ Վերֆէլ այդ այլազան եւ յաճախ հակադրուող մղումներուն պատճառաւ, թատերական տարբեր կերպարներ կ'ստեղծէ, որոնք այդ տաղանապները կը զբնուորեն։

Թատերական գործերուն մէջ առաջին շնորհալից յարողութիւններէն մէկը կ'արձանագրէ Spieglmonach, որ միտաժամանակ կը ներկայացուի Հայրիցիկի, Շթուլիարտի եւ Տիւսլըտոյֆի մէջ։ Այս չափածոյ ետարար թատերախաղը, մէկ ժամանակակից տարբերակ է «Տաուստ»-ուի, որ մարդու հակադիր երկու ներքին մղումները կը բախին շարունակի լեյծնմարդու երզն (1922), Պանի կերպարին ընդմէջէն տաղանապը կը բերէ ճատնիսեան մարդուն։ Խորհրդանշական այս տիպարին միջոցաւ կը տեսնենք մարդ արարածին որոշ չափով տիրական, այլ մութ երեսները։ Այնտեղ են՝ ըմբոստութիւնը, յափշտակութիւնը, խենթութիւնը, գինեմութիւնը, սեռային ու ինքնաքայքայումի մղումները, եւայլն։ Հինգ արարնոց այս թատերախաղը մեծ յաջողութիւն կ'արձանագրէ Վիեննայի մէջ, նոյն խանդավառութեամբ չի դիմաւորուի Ֆրանսիոյ թի մէջ, սակայն Վերֆէլի անունը կը հասցնէ Նիւ Եորք։ Պննադատութիւնները դիտաւորաբար կը բխին, այս պարագային եւ այլուր, իր գործերուն արտայայտապաշտ-խորհրդապաշտ նկարագրէն, ինչ որ պատճառ կը հանդիսանայ, որ իր տիպարները որոշ չափով տարտամ կամ մերացական մնան, եւ իր խօսքը յստակօրէն չհասնի հանրութեան։

տերական կենտրոն տիրական անուններին է՝ Վերֆէլ, Schwoiger (1923) կը բացուի Փրակայի եւ Շթուիլարտի մէջ եւ կը շքի աւելի քան 80 թատերասրահներու մէջ, Պերլինի մէջ միայն աւելի քան 50 անգամ խաղցուելով: Եռուով կը բեմադրուի Նիւ Յորքի մէջ: Նման բախտ մը կ'ունենայ նաեւ գծուարկը եւ Մախիմիլանը, որ նմանապէս յաղթական շքանկարներու մը կը կատարէ հին ու նոր ցամաքամասերուն վրայ:

Մինչեւ 30ական թուականներու կէսերը, Վերֆէլ կը շարունակէ թատերախաղ դրիւ, ընդհանրապէս կրօնական, Հին կտակարանի թեմաներով, որոնք որոշ չափով նախաժողովրդած ըլլալու տրամաբանութիւնը կը ձգեն եւ մնայուն արժէք չեն ներկայացնիր իր ժառանգութեան մէջ: Մական պէտք է ըսել, որ այս շքանկարներն Վերֆէլի հետաքրքրութիւնները սկսած են շարժել վէպի ուղղութեամբ:

Այս մարդին մէջ առաջին հիմնական նուաճումը կ'ըլլայ «Վերտի» (1924), որ ինչպէս խորագրերը կը մատենէ, նիւթ ունի օգիւտայի համաշխարհային անուաներէն Վերտի կենտրոն: Գործը միաժամանակ քննական-կենսագրական եւ պատմական սիրովէպ մըն է, ատոր համար աչքերականն ու հեքիաթայինը կը միախառնուին եւ կ'ունենանք վէպ մը, որ երկու մակարդակներու վրայ կը զարգանայ՝ պատմական եւ բանաստեղծական:

«Վերտի» կը յաջորդեն երկու յաջող վէպերներ՝ «Մարդը» որ յազրասարից մահը» (1928) եւ «Երգամաւարտներու հանդիպումը» (1929):

«Մրտով (Մախիմիլան) հաւանաբար Վերֆէլի ամենակարեւոր վէպերէն մէկն է: Անոր հերոսը՝ Թերտինանս Բ. չի կրնար պահել այն հաւատքը, որ մանկութենէն կու գայ իր մէջ: Վէպը, մէկ կողմէ, բախտամէն է անհատին եւ ընկերութեան (ինչպէս «Վերտի»: մէջ՝ առուեստադէտին եւ ընկերութեան): Այստեղ երիտասարդ հերոսը ինքզինք կը գտնէ պատերազմի մը եւ անոր յաջորդող յեղափոխութեան մէջ եւ, հարկադրաբար, ինչպէր կ'ունենայ զազաքական, զինուորական եւ յեղափոխական ուժերու հետ:

Որքին մէջ հոգեբանական այս վէպը տաղանակը կը բերէ հաւատացեալ մարդուն, որ այլեւս չի կրնար իր հոգեկանն ու բարոյական հակասութիւնները կիրարկել՝ տարբեր արժէքներու հետամուտ ժամանակաշրջանի մը մէջ: Վերֆէլի պատգամը բանական յստակ է՝ Տէրդ վերադառնելու համար նախ պէտք է կորսնցընես դայն, եւ հաւաքող վերանորոգելու համար՝ անպատ մը իյնաս այդ քարսին մէջ:

«Թաստարտիլաններու ընտանիք» մէջ (1932) Վերֆէլ կու գայ հիմնականօրէն քննելու ընտանիքի եւ հայր-որդի յարաբերութիւնները, որոնք միշտ տաղանակեցուցած են դինք: Կարգ մը գործերու մէջ նախապէս անդրադարձած է արդէն այս թեմային (ինչպէս «Ո՛ր սպաննողին» եւ որոշ չափով մը «Վերտի» մէջ): Այստեղ մեր գիմաց կը պատկերացուի բռնատէք Եօր մը ձգած աղքեցութիւնը իր երեք տղոց եւ երեք աղջիկներուն վրայ:

1933ին լոյս կը տեսնէ Վերֆէլի ամենակարեւոր գործերէն «Մուսա տաղի քառասուն օրերը»:

Տարի մը հոտք, Լուի Քրոնշեյլերը ընդ նորէ թայնգ պառլիմենտի մէջ «Մուսա տաղի մասին կ'արտայայտէ հետեւեայ կարծիքը (Դեկտեմբեր 2, 1934):

«[Այս մէկը] գիրք մըն է, որ մէկ անգամ պէտք է կարդացուի: Պետք չէ վերադառնալ անոր, ինչպէս կը վերադառնալ Մանիմ կամ Փրուտտիմ ... Մական ՎՄուսա տաղի մէկ ընթերցումը բաւարար է՝ մնայուն կերպով բաժնելու պատմական ցնդի դէպքի մը զգայնութիւնը: Հեղինակը արդարօրէն, նայլիսով անխուսափելիօրէն, Մուսա տաղի պաշտպանութիւնը կատարած է հերոսական չափանիշերով, որովհետեւ ասիկա պատմաբան է՝ Վերտի մը, որ կ'ընդունի մակապատգիրը հերոսներու աւերարդութիւնը, եւ մնամ հարցի մը հետ աւելի համեստ չափանիշերով մտեցումը պիտի նշանակէ զայն սխալ ըմբռնել ... Այս սեռով մը՝ այս պատմութիւնն է մարդու մը, որ իր իր ստար կը վերադառնայ իր հայրենի ձողը, եւ ինչպիսիք կը գտնէ իր պատկերացուցածէն շար աւելի սեփեղ ցեղային կա-

պերով կապուած շրջապատին հետ, հետեւաբար՝ հարկադրուած կ'ըլլայ ինքզինքին համար ընդունելու ա'յն՝ որ վիճակուած է իր ժողովուրդին: Ասիկա այն ձեւն է, զոր Վերֆէլ իրել հեղինակ ըմտրած է՝ պատմութիւնը պատկերացնելու համար»:

Հէնրի Լիա, 1965ին կ'անդրադառնայ այս վէպին, «Ճերմանիք Բիլիու» Հանդէսին մէջ, Բազրատեանի Հարցը քննելով Վերֆէլը ընդհանուր թեմաներէն՝ առնուակ որդիի վերադարձի շրջադիմին մէջ: Բնականաբար անտակը պէտք է նկատի ունենալ չակերտուած, կորսուածի առումով:

Լիա կը նկատէ, որ Գարրիէլ Բազրատեանի վերադարձը Հայրենիք, առաջին իսկ էջերէն, զգալիօրէն նախաինամական է: Հազիւ վերադարձած Հայրենի դիւղ, Բազրատեան քունի կ'անցնի եւ երազ մը կը տեսնէ, ուր ժողովուրդը կ'առաջնորդէ զէպի լեռները: Կարծէք յայտնատեսութեամբ կը զգայ, որ առտուածային կողմէ մը սասցած է եւ իր առաջնութենէն չի կրնար Հրաժարիլ:

Բազրատեանի վերադարձը Հայրենի դիւղ, օտարացումէ ետք, ամբողջ շրջանի (cycle) մը ամբողջացումը կը կատարէ, զոր կը սկսի դիւղի իր մանկութենէն, կ'անցնի փարիզեան իր աշխարհիկ կեանքին եւ օտարացման, եւ կը լիանայ իր վերադարձով, ուր իր ապրած տառապանքին ու տաղանայներուն ընդմէջէն կը Հասնի ինքնադիտակցումի եւ անհատական Հարցերու շրջանցումին:

Յաջորդող գործերը՝ «Ձայնին ռուլընդիրը», «Յափտակուած դրախտը» կամ «Պեմատեքի երգը», Հակառակ իրենց արձանագրած ժողովրդական յաջողութեան, կրօնական թեմաներ կ'արժարծեն եւ Հեռու կը մնան իր Հիմնական երկերու մակարդակէն:

Իր կեանքի վերջին տարիներուն՝ Գալիֆորնիոյ մէջ կը գրէ կարեւոր երկու գործեր՝ «Ձծնածին աստղը» եւ «Ժառանգութիւն»-ը: Ասոնցմէ առաջինը վէպ մըն է, որուն Հերոսը կու գայ մեր ժամանակներէն 100,000 տարի ետք եւ դատուենք կը կատարէ մեր ժամանակներու հողեկան եւ մարդկային արժէքներու:

Իրեն կապակցութեամբ: Իսկ «Ժառանգութիւն»-ը գոյնգէլը թատերախաղ մըն է, ուր Հեղինակը կը փորձէ սահմանել Հայտնածանքի եւ աքսորի ազդեցութիւնը մարդարարածին վրայ: Պարզ է, որ Վերֆէլ այս գործերուն մէջ իր վերջին խօսքը կ'ուզէ ըսել:

Յրանց Վերֆէլը կը մահանայ 1945ին:

Ինչպէս կը տեսնենք՝ Վերֆէլի ժառանգութիւնը այլազան, այլ անհասարակ ամբողջութիւն մը կը կազմէ: Ան կը յաջողի իրագործումներ արձանագրել իր կ'իրարկած երեք մարզերուն՝ բանաստեղծութեան, թատերագրութեան եւ վիպագրութեան մէջ: Ճիշդ է, որ իրեն համար Հիմնականը Հարցերը կամ դադարեցնելն են, եւ ճիշդ ասոր համար ալ, իր թատերական անձնաւորութիւնները կամ վիպական հերոսները յաճախ դադարեցնելը կը ներկայացնեն, քան միս ու արեւնով մարդիկ: Ճիշդ է նաեւ, որ Վերֆէլի կարգ մը գործերը, մասնաւորաբար կրօնական թեմայով թատերախաղերը եւ վէպերը, իր ծանօթ գործերու մակարդակին վրայ չեն մնար:

Սակայն Վերֆէլը կը յաջողի իր տաղանայները քանի մը բանաստեղծական, թատերական ու վիպական ամուր գործերու մէջ խտացնել: Պարզ է, որ իր նախադիտութիւնը կ'երթայ այն տիպարներուն, որոնք իրենց անձնական չահը կը գրհեն Հաւաքական մտահոգութիւններու եւ ձրգտումներու սիրոյն:

Պէտք չէ մտնել նաեւ, որ Վերֆէլը, իրեն ստեղծագործ մարդ եւ մտածող, այս դարու առաջին մարդասէրներէն է, որ կը ծառանայ ռազմապաշտութեան եւ ցեղապաշտութեան դէմ, եւ Հողեկան ընդհանուր զարթոնքի մը կենսական անհրաժեշտութիւնը կը տեսնէ՝ անհատի եւ ժողովուրդներու վերկուրեան համար: Եւ ի դուր չէ, որ Վերֆէլը, իր գործերուն մէջ, յաճախ կը վերադառնայ նախապատեարզմական Աւստրիոյ, ուր ցեղային ու կրօնական տարբեր Հաւաքականութիւններ, մտածելու եւ արտայայտուելու ազատութեամբ՝ կ'ապրէին Համերայն Համակցութեան մը մէջ:

A.R.A.R.©

digitised by



Սեպտեմբերի առաջին օրերուն, — կը գրէ ծովակալ Կիլին, — յաճանաւը Կափիթէն տը Ծրէկաթ Պոխտնի հրամանատարութեամբ Անտիօքի հիւսիսը ծովազերքին երկայնքը կը շրջէր, երբ ցամաքի վրայ նշաններ նշմարեց:

Նաւակ մը զրկուեցաւ ծովեզերք եւ տեղեկացաւ, որ ձեռքէլ Մուսայի (Մովսէսի լեռ) բարձրավայրերուն վրայ հաստատուած հայերը թուրքերու կողմէ ջարդուելու սպառնալիքին տակ կը զբոսնէին: Լուրը ստացայ անթելով, Սեպտեմբեր 6ին, եւ իսկոյն շտաբի տ.Արքայի հրամանով շտաբայտի: Հայ պետերէն մին՝ Պնարոս Տըմլաքեան բարձրացաւ նաւուն վրայ: Խնդրեց, որ ոչ-մարտիկները այլուր փոխադրուին, վստահութիւն յայտնելով, որ կրնան վեց ամիս եւս դիմանալ թրքական զորքի յարձակումներուն, եթէ իրենց հայթայթուի ալիւր, ազ, վառօք եւ կապար: Մովսէսի լեռան գիւղացիները՝ իրենց արեւակիցներուն սովորական կը բաւարարուին: Իրենց լուրին: Ինքնապաշտպանութեան կը դիմեն եւ նոյնիսկ ունին զործիքներ՝ իրենց փոխարինելու:

ՄՈՎՍԵՍԻ ԼԵՐԱՆ ՎԱՅՆՈՒ ԱԶԱՏԱԳՐՈՒՄԸ

ըր Վորոտիքու համար: Բայց կացութիւնը ծանր է: Պաշտպանութեան հրամանատարները կը պաշարին լեռը, կը յառաջանան հետզհետէ, կ'առեւանդեն երկիւղները եւ կ'իյնալը կը տանին դէպի ներսը: Անասնականութեան ահաբեկ տեսարաններ կը զրոնկորուին այդ եղբորական տեղահանութեան իւրաքանչիւր հանգրուանին: Երևում կ'ըմբռնեն, որ պէտք է այդ դժբախտները այլուր փոխադրել: Ժամանակը ստիպողական է եւ ինչ ալ ըսեն իրենք՝ պէտք է ամէնքը փոխադրել: Այնտեղէն կը մեկնիմ Ծամակուտա, կը հարցնեմ Կիւրոսի եւ Եգիպտոսի բարձր պաշտօնատարներուն, թէ արդեօք կրնան ապաստան տալ Մովսէսի լեռան հայերուն, որոնց կը սպառնայ ամբողջական ընաֆնջում մը: Կիւրոսի պաշտօնատարը կը պատասխանէ, թէ չի դիտորուց տեղափոխել զանոնք, իսկ Եգիպտոսի պաշտօնատարը կը պատասխանէ, թէ Լոնտոնէն պէտք է այդ մասին հրահանգ ստանայ: Խնդրին տեղեակ պահելու համար Մովսէսի նախարարութիւնը՝ կը հեռագրեմ անոր:

Սեպտեմբեր 10ին, կը հասնիմ Փոք Մախտ եւ 12ին համբայ կ'ելլինք դէպի Տարտանէլ: Մովսէսի լեռնիցէն բաժնուելից առաջ, իրեն հետ որոնցիցնք պարպել Մովսէսի լեռը: Տրամադրել իրաւոր նաւերը հոն զրկուեցան եւ Սեպտեմբեր 13ին, հայերը արգէն նաւուն վրայ էին:

Գործողութիւնը կատարուեցաւ թէեւ դժուարութեամբ, բայց առանց միջադէպի: Կը վախճայինք, որ մեր զործին արդեւ հանդիսանար թշնամի ընդծովեայ Մովսէսի լեռը: Տրամադրելի բոլոր նաւահանողիստին առջեւ, ընկղմած էր մեր օժտնդակ փոքր յաճանաւը՝ «Էնտիկէն»: Սակայն ընդծովեայ լեռեցաւ եւ 4980 հոգի նաւ ընդունուեցան:

ՏԱՐԹԻՉ ՏԻԻ ԶՈՒՐԵՆԻ
Պրամսական Պաւտարմի
Երանաստար ծովակալ
A.R.A.R. ©

ՎԿԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ

Յիբ Կարալիսե ձգտում է սո-
սիալական վեպին, որ Համաժողովու-
րին սուսաններով ներկայացներ կերթին
ևս արտաքին անցուղարձը ճարգիւյին
Հասարակական թեման: Եւրոպական ամ-
ժող իրականութեան մէջ թերեւս արեւ-
դե ցարտան չի երեւցել այդ ճղգ-
տումը: Ինչպէս Պրազա թեան Թրանց
Վերթէի վեպին մէջ, երա շխալատում
օրջ մէկ յունչով ու իտալի բարձրե-
րով գրել է: առաջինը գտնի է Համաշ-
խարհային պատերազմի բարբոսին ան-
ժանոթ մէկ ժառը: Երկրորդը՝ ձուլման
(assimilation) գրաման եւ ոչորորու-
թիւնն է: ևս երրորդը՝ ամբողջ ժողո-
վուրդի ոչորորութիւնը: Հայ ժողո-
վուրդի ոչորորութիւնը:

ՊԱՌԵՆ ԱՍՄՆԵՐ

Գիրքը գրուած է սրտի արիւնով.
այստիպ է ամի խոր ու անբոճիկ աշ-
պատութիւնը, որ ինքնորոշուին կը-
րակոտ գրիներով տալիս է արեւրպա-
կան եւ Հերոսական պատմութեան մի
ժառը:

(ԵՅԵՆԸ ԼԵՐԱԸ)

Ամենաբարձր տեսակի արեւրպա-
գրութիւն: Գրուած աշխարհի Համար
ևս պիտի չլինի անի աշխարհի մէջ:

(ԳՐԱԳՅՈՐ ՊՐԵՍՍԵ)

Հարուստ եւ Հարուստեղ գիրք:
Ազգային ճակատագիրը՝ խորագրուած
բարբոսական ժառի մէջ՝ վերաբերում է
ամեն մի ժողովուրդի:

(ԵՍՎԵՆՍՍԱ ԳԱԳՐԱՅԵ)

Այս գիրքը կը յուշէ ժողովային
սրտերը: Մարտաւեր է ևս Հերոսական:
Բայց Եւթարտութիւնները կարծեալ է
մէկ: Ինչպէս որ կարող է տալ իրական
կենտրոն:

(ԵՆԻ ՎԵՆՈ ՄՄ ՉՐԱՍԵ)

Թրանց Վերթէի վարպետութեան
բարբոսութեան է Ետնի: Այս գիրքը բե-
խել է իսկական բանաստեղծի սրտից:

(ԵՎՐՆԵՐ ՑԱԳԵ)

ՄՈՒՍԱ ԼԵՐԱՆ
ՔԱՌԱՍՈՒՆ ՕՐԵՐԸ
Գրքի գիրքի լուսանկար
ԿԱՅԻՐ ՈՒ
ԵՍՎԵՆՍՍԱ ԳԱԳՐԱՅԵ

Կարեն թէ մէկը անյուր Համաշ-
խարհային փորձի է բունայ վիպա-
կանութեան բայց անկունները եւ ամ-
փոփել երանք մի ջրամբարում: Այդ
ազնիւ գործը իր ճակատին ունի փայ-
լուն նյութ, որի առջեւ պիտի բացուին
լայնորեն այն գուները, որոնցից անցել
են ազգերի ամենաթանկագին զանգերը
— երանք Եւթարտութիւնը, առաջադիւնը
են Հերոսական երգերը:

(ԵՆԻ ԵՈՐԳ ԹԱՅՐԵ)

Մենք բանաստեղծի գրքի է: Եւթը՝
հաւատքն է զեպի բարձր սերը:

(ԵՆՈՅԷ ԹՐԱՅԷ ՊՐԵՍՍԵ)

Գիրքը սեկունտներին իրական է: Երա
մի յուշարձան է հայ օրիստանեայ ժող-
ջողովուրդի եւ երա Հերոսական գործի,
որ առաջ եկան է իր հասարակից եւ աշ-
գային պայտուսից:

(ԵՄԱԹԵՆԵ)

ՎԱՌԱՍՈՒՆ ՕՐԵՐՈՒ

ԹԱՐԿՄԱՆՉԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԵՆԵՆ...

Փրանսիայի լեզուով գրուած Օրանի Վերֆայի ընտան անդի շատանս օրերը մեր մէջ եւս արժանազատ թաղանթի վերաբերումով մը: Վիհիւնայի մէջ հասարակ դասին հաս-
 զին տարի մը անց, Սոֆիայի մէջ լոյս տեսաւ Օրանի Տէր Անդրէասեանի կողմէ կատար-
 անս անոր արձանագատ, ինչ թարգմանութիւնը, որ մեր թերթերուն կողմէ շատով հե-
 րճեկատուեցաւ իբրև թերթիկի երկրորդ անգամ վերածուեցաւ արձանագատերէն, հարց
 լինի մտաւարական Պարոյր Միգայիշեանի կողմէ, լՍՊԻՆ, յիստս հարց տպագրանկով:
 Անցաւ տարի, Պիլոտի մէջ լոյս տեսաւ անոր երրորդ թարգմանութիւնը, այս
 անգամ Փրանսերէն օրինակին, Տօգթ. Բ. Փափազեանի կողմէ, երկ հասարակ:

Հայ գիրքը տպագրանկերու մէջ անկրկնը, պարտաւորութիւնը մէջ կամ հեղինակե-
 րու մտ լծուած մտալու տխուր արտադրէ մը ունի, ոչ ունի, կ'ընէ՞ր համաձայութեամբ,
 յար եւ նման է անոր անպատեհութեան արտադրելը: Կեղ աւ հարցադրող չկայ կ'ըսենք ու
 կը կ'ըսենք միշտ, բայց երբ հարկ կ'ըլլայ երկն հրատարակութեան ցանի մը տարի ետ
 մէկէ կամ միւր աշտ անցընել, մարդ անպայման դժուարութեան կը բախի:

Նոյն կենսագրութիւնը սակ նաև Փրանցի Վերֆայի ընտան անդի շատանս օրե-
 րը վերջին հասիլին թարգմանութիւնը: Երկն ամէն տեղ էր, այստեղ ոչ մէկ տեղ կը գտնուի:
 Հասկնալի է, որ յիստս տարի առաջ Սոֆիայի մէջ լոյս ընծայած Օրանի Տէր Անդրէաս-
 եանի թարգմանութիւնը չկարենայ ձեռք ձգել այստեան շնորհը, բայց մեր գրաթա-
 րակներուն մէջ կարելի չէ գտնել նոյնպէս ցանի մը տարի կամ աստեանով մը առաջ
 լոյս տեսած անոր թերթեային տարբերակները, իսկ ցան տարի առաջ Յիւնանի մէջ հրատ-
 արարուեցաւ Պարոյր Միգայիշեանի թարգմանութեան յիստս հարց տպագրանկին չնայ
 կարծեր, որ մեր գրաթարակներէ իւրաքանչիւրէն Ս օրինակին աւելի յաջին անուան ըլլայ:
 Այս անպատեհները առաջին պատճառներն են հաւանարար, որ Տօգթ. Բ. Փա-
 փազեան ձեռնարկած ըլլայ Փրանցի Վերֆայի վերջին երկ թարգմանութեան, իսկ աւելի հա-
 ւաստի պատճառը արձանագատած է ժողովարարական խօսքի մէջ:

Ե. Սֆիւռայի մէջ մնած եւ ազլին Ոսկայապոլիս թերթով դնա ով զիտէ արձան ժա-
 ւանսկ այնտեղ ապրելու դատապարտուած հայ ինքնաբեր արտոնողներուն որմանգրաբեան
 տակ զին մնում աւ լեզուով իրենց մտալովի թարգմանութիւն մը:

Արդէն անգամ մը կամ երկու անգամ թարգմանուած գրքի մը երրորդ կամ աւելի
 անգամներ թարգմանելու փորձը թաղանթած չէ զիսկանութեան պատճառներն մէջ: Մաս-
 նագրեանց այդ պարագան կը թաղանթեն անով, որ թարգմանական լեզուն արագ մաշող
 գործիքներէն եղած է միշտ, եւ երկրորդ՝ առաջին թարգմանիչներուն թոյլ տուած սխալ
 վերածուածներուն պատճառով, որոնք հարուստ կը երևային չնչ եղած, չին: թարգմա-
 նիչները, սակայն, երկու պարագային ալ կը զգնեն ուղղակի թուգորին եւ ոչ թէ կողմա-
 կէ ազդերներու, որոնք անխուսափելիօրէն փորձութիւններու զուր թաղանթ են, մինչև
 իսկ առգրքի թարգմանութիւններէն ետք, ինչպէս յանախ կը կարգանք հայրենի մեր մաս-
 արակներուն ստորագրած գրութեանց մէջ:

Տօգթ. Բ. Փափազեանի թարգմանութիւնը, որ Փրանսիայի կատարուած թարգմա-
 նութիւն մըն է, այնքան՝ քարզամտութեան քարզամտութիւն մը, զեր չէ մտայն այդ
 փորձութեանն ու ստաղուած է իտայի գրքի մը: մասնաւորաբար Փրանսիայի թարգմանիչին
 մտուածաւոր յարաւումները որ լրիւ մտով վերականգնած ըլլալու թերութեամբ: Թէ՛ իր
 ձեռքին տակ գտնուած անպիտան թարգմանիչ փոփոխ Տօգթ. Բ. Փափազեանի թարգմանութեան եւ թէ
 Փրանսիայի թարգմանիչին էջերուն գիմաց՝ Տօգթ. Բ. Փափազեան զգացած է վտանգը, բայց
 կասկածիկ ազգու թելադրանքին աւելի՛ բարեմտութեամբ առաջնորդուած ըլլայ կը թուի
 ան, կա՛մ ինչով հաւանարար, որ հայութեան անագիտութիւնները տարփոզող ու իրտութեան
 իրտութիւնը խորանող գուծ մը թարգմանելու ձեռնարկած անպիտանի ու փրանսիայի կըր-
 անս գտնի Աստուծոյ ըլլալ, ա՛յն աստեանս, որ անոնց վերաբերումին ստաղութիւնը ձգած
 է հաւանակութեան փրկի մէջ:

Ճշտամբար վերջ աւելի աշխոյժ դարձնելու, ամոր վիպական կողմը աւելի ու-
 շագրու պահելու մտադրութեամբ է որ փրանսերէնի ու անգլիերէնի թարգմանողները կա-
 տարած են այդ յարաւումները, որոնք երբեմն ձեռնարկական էրն են, երբեմն ալ վերջին
 ընթացիք զանազանող կրկնութիւնները:

Տօգթ. Բ. Փափազեան անգրագրած է, որ նշուած շարժումները մեծ գնը չեն
 ունենցած անգլիացի ու Փրանսիայի թարգմանիչներուն կատարած յարաւումներուն մէջ եւ

զգուցիչ յայտարարեմքն չեն հաստատում յայտարարեմքը, ևս որովհետև ա՛յց է իրականութիւնը, նորի համարմտ է ծրուածք Տէր Անդրէասեանի ևս Պարոյր Մխչադեանի գէթ ճանկերէն հասարած Քարգմանութեանց Հիմանը վերակոնցնել կարգ մը յայտարարեմք, ըմտամտաբար հո՛ն՝ ուր հայ նոր սերունդի ընթերցողներուն համար կարեւոր պիտի ըլլար վերֆէլի վէպին ընդմէջէն ծանօթանալ իր ժողովուրդի պատմութեան հակասացրական մէկ պատճառ ստոր պատահաններուն նկարագրութեանց:

Յուշ, վերակոնցնուած բաժինն, և եղած են զիչ ևս համարադասարան կարեւորութեան արժանացած չեն աչն էջերը, որոնք կրնային նոր սերունդներու ընթերցողներուն շատ քան իմացնել վերֆէլի վէպին ընդմէջէն:

Ոչո՞ւ նոր Քարգմանութեան Բ. հատորին Բրիտորդ զուտին մէջ (էջ 88) վերակոնցնուած գույրգուրանքին պիտի յարժանանար, որմանկ, սա հատուածը, ուր նկարագրուած ինտելեկտի կամ վէպին ընթացքը զանդողեցնող այլ տարրերու փոխարէն՝ կայ ուրիշ բան, կայ՝ հայուն սիրազարմութիւնը, թու. զին հայալինն թրջութիւնը ևս աշխարհի զարգակաճած խիղճը նոր սերունդներուն միամտանակ ծանօթացնելու ուժով Հիւսուած արգարտ յոյճ պատկէր մը:

«...Այս նարուածը աւելի ծանր կընց Քարգմանութեան վրայ, քան վառի ևս Ուրֆայի յայտնի ճարտարածները: Որովհետև ինչպիսիք հոն բազմամեայ Բաղամբրու շտրք կը դասնար, որոնք ապստամբութիւնը ռուսական ղառակին յառաջխաղացուածին ընդմէջ եղած էր, վառի յաւանաստակալ ընտանոցութիւնը, Ոկտայի, որ թուրքիայ սոսիլը՝ Ռուսիա արգել իսկ յառաջադաս շարժումի մը մէջ կը գտնուէր, փափաքուածն աւելի անխաղաղութեան կամ էր, որովհետև աշխարհի ապրելու թուրքերուն ձեռքը կըզօնէ մը ընծայեց, ա՛յն մտնով, թէ կ'արգարտանար Քարգմանութեան յոյճը հայ ժողովուրդին վրայ, իբր թէ շարք ու արգարտութիւն հետեւեալ ըլլային ընթացաւորութիւններու, մինչ զնարտութիւնը ընթացան իսկապէս առնուէն: Ասա՛ւ — ըսիմ Քարգմանութեան — յայտնի ապացոյց է, թէ հայերը դառնան են, թէ մեզ վարտարուած էինք ինքզինքնին սպասել անօնցմէ: Պատմութեան մէջ որեւէ պետական ապստամբութիւն փաստ այսքան շնորհակալ չէր գործուած, երբեք չէր եղած այսքան վայելուլ անարարութիւն զատմանին ևս արգիւնման մէջ: Բայց ասկէց աւելի գէշը աշխարհին պակաս ինչպէս է, դատարար, իրենցիկ համար Ոկտայ ինչպէս, այն ամուսնուած պետութեաններէ մասնալիմ միջոցաւ արգիւնուած ընթերցողներուն ուզեցմ է, որոնք իրենց շանուն, իրենց պիտեմքուն համեմատ անեցին իրողութեանները (ծրուածք Տէր Անդրէասեան, էջ 577):»

Մենք Փրանսիոյն Քարգմանութիւնը գերմաներէնի աղբիւրին հաստատուած Քարգմանութեաններուն հետ անբողջական թաղադասութեան մը լինեալեցնենք, Գ. Վարդանանի ընտանեկաններուն որոնք ստուգելու համար զո՞վ զո՞վ ընթերցել համարադասարան էջերը ու նոր ստուգելիք բանաստեղծութեան գրեմքները, համեմատեցնել ստոր որոնք էջերը միայն, Բ. գերմաներէնի աղբիւրը զուտը, որուն հոփանաստան էջերուն վրայ երևումն աւելի անզամ յայտարար հաստատուած է, երկու ստղին միմեկու տանուից ու քան ստղ ու երկու, երեք, միմեկու անզամ լինու տասը էջ: Տա՛ւր էջ: Այնպէս որ, անզխաղի Քարգմանութեան ժողովուրդի աշխատանքը ընտրելու զիչ անզին տրուած (էջ 88) Հայկազն Գ. Վարդանանի ուսումնասիրութիւնը ուղիւ գնով կը վերաբերի նաեւ Փրանսացի Քարգմանիչ Փոլ Հոֆեր-Պուրիի Քարգմանութեան: Կը թուի, թէ Փոլ Հոֆեր-Պուրի ընաւ յոյնութիւնը յոյնն չէ ասած վերֆէլի վէպին գերմաներէնի աղբիւրին գիտելու, այլ ուղղակի պատմականանեմ է ժողովուրդի ճշմարտի գործը, ծայրէ ծայր, հայտնի շաննով ստոր յայտարարեմքը, ներառուած նեկափոխութիւնները, ընդ ուս ևս՝ Վարդանանի ընտանեկաններուն որոնք ընդգրկած հատուածը, որուն պիտի անդիպի ընթերցողը մեր ԿՅԻ՞ր էջն վրայ:

Այնուտ Փրանսացի Քարգմանիչին մեղքերուն պատասխանատուն Տ. Գ. Փափազեան ինք չէ, զայց վերակոնցնուած գործին անզամ մը ձեռնարկել նոր, ընաւ ընթանել չէ, որ իր ապրումներով ու մտածումներով տարապաղ մասարական մը նման աշխատանքին գուրս զան ըլլայ վերջ մէջերուն հատուածը, ինչպէս նաեւ կայ որոնքին մէջ սպասմանք յայտարարող Վարդանանի յանտեսողութիւնը ընդգրկած բաժինը: Ինչպէս նաեւ Նոյնարեւոյթ տանեակ ու տանեակ ուրիշ պարբերութիւններ, հաստատանք, էջեր ու էջեր: Այս բայերը անպարտաքի մը հետեւեալ են կարծես, զինք՝ ժամագրութեան յարգելու իրարանցումի մը: որուն պատմաբանով տեղ-տեղ անհարթ է նաեւ Քարգմանութիւնը, ու վերաւոր՝ երկանցնող լեզուով, երկանցնող ուղղարարութեան մը, նաեւ վերակոնցնելու թու ու բուժով ևս վերակոնցնելու աներգանակութիւններով:

Սխալ տարի հաստատանք որոնք փնտռուած ու կարգադրուող վէպ է ու մտանալու բար շուտով պիտի սպասուի: Զէ մտքն պիտի փափաքելիք, որ երկրորդ տպագրութեան ասան, Տ. Գ. Փափազեան վերակոնցնելու Փրանսացի Քարգմանիչ Փոլ Հոֆեր-Պուրիի հասարած ըստ յայտարարեմքը ևս արագարութեան աւելի մտանակ յատկանցներ, ընծայել վերջապէս աչն ծայրադէն ինամքը, զոր կը պահանջեն մեզմէ զաստական գործերը:

Ֆ Ր Ա Ն Յ Վ Ե Ր Ֆ Է Լ

Մ ՈՒՍԱ Տ Ա Ղ Ի
Ք Ա Ռ Ա Ս ՈՒ Ն
Օ Ր Ե Ր Ը



Ղեկավարներու խորհուրդը յանկարծ լսեց: Օտար ձայներ կը ծառնային. ամէնքն ալ սարսափուեալ ուռչի ելան. Քուրքէ՞րն էին արդեօք: Պաւարին մէջ շատ մը լալաւորներ կը շարժէին: Քամիքանիներուն կողմէ դըրկըւած պատուիրակութիւն ժըն էր. եկած էին յաջորդ օրուան համար անհրաժեշտ հրահանգներ ստանալու: Անոնք ըսին, թէ իրենց ամբողջ խումբէն միայն մէկ հոգի սպաննուած էր եւ երկու հոգի ալ դերի ինկած էին. թէ իրենց ոչ իսկ ըսուէ մը լքած էին իրենց դիրքերը: Անոնք միաժամանակ տեղեկացուցին ժողովին, թէ թրքական զինուորական ուժերը գաղտագողի կը հեռանային շրջանէն, — բացի պահեստի փոքր ուժէ մը, — ու կ'երթային կեդրոնանալ Գալար կաղնիներու հեղեղատին մէջ: Իսկ անոնց կողմէ դրատուած հարկական խումբներուն ու իրենց ուժերուն դիտար կեդրոնին միջեւ կայր կը պահպանուէր պահակներով ու շրջուն փոքր խումբերով: Քուրքերուն նպատակը յստակ էր. արեւուն նման պայծառ:

— Այո, մենք պիտի օգտագործենք այս դիշերը, Տէր Հայկազուն: — Այնքան բարձր ձայնով ըսաւ Գաբրիէլ, որ ամբողջ ժողովուրդը կրցաւ լսել զինքը:

Նոյն պահուն միւս ղեկավարներն ալ կը թուէին յաղթանարած ըլլալ իրենց մեռելային վիճակը: Նախ քան Բազրատունեանին բառ մը իսկ արտասանելը, նոյն մտածումը անցաւ բոլորին ալ մտքերէն՝ աղէտը իրենցմէ հեռացնելու համար միակ միջոցը դիշերանց, թշնամին անակնկալի բերելով, կա-

տաղօրէն յարձակելն էր թրջական ուժերու հանդստեան կայանին վրայ: Սա-
կայն կռուողները լատ յոգնած էին նման գործողութիւն մը կարենալ իրական-
նացնելու համար: Անվերջանալի եւ արիւնահեղ օրուան կռիւները սպառած
էին դիրենք, Պէտք պիտի ըլլար, որ ամբողջ ժողովուրդը, կիներն ու երիտա-
ներն ալ, այս կամ այն ձեւով մասնակից դառնային կռուին, որպէսզի քանի
մը հազար հոգիի մարմնական ուժին նպաստը բերէին մարտնչողներուն:

Հիմա խառնաշփոթ աղմուկ մը կը տիրապետէր ու բոլորն ալ բարձրա-
ձայն կը խօսէին: Իւրաքանչիւր մուխքար եւ սառուցիչ կը փորձէր իր առա-
ջարկութիւնը առաջ քաշել. մինչեւ որ Գարբիէլ, հրամայական լեչտով մը
լռութիւն պարտադրեց բոլորին:

Բազրատեան՝ Նուրհանը դրկեց իր շրջանը, որպէսզի այդ դիրքերը
պաշտպանող քան խուճրկուն մէջէն ընտրելով հետը բերէ այդ օրուան կը-
ռիւններուն քիչ մը մասնակից, նուազ յոգնած հարիւր յիսուն առաջին գիծի
կռուողներ: Հարաւային ամբողջեանց եւ եզերային դիրքերուն վրայ գտնուող-
ներէն ալ երկու հարիւր հոգի առնուեցան եւ այդ բոլորը, յաջորդող երկու
ժամերուն, եկան եւ առանց աղմուկի հաւաքուեցան խորանին առջեւի հրա-
պարակին վրայ: Այսպէսով Բազրատեան իր թուղզ պահակաբաններն ու զո-
միթաճիւններուն հետ, հինգ հարիւր դիւնալ ուժ ունեցաւ իր տրամադրութեան
սակ:

Այդ բոլորը տեղափոխելը բաւական ժամանակ կը խլէր, որովհետեւ
պէտք է տեղի ունենար անաղմուկ, կարգախօսներն անգամ կարելի չէր բարձ-
րածայն արտատանել: Ամենակարճ բաներով, փոփոխութիւն է, որ իրարու կը
փոխանէին բացարձակ անհրաժեշտութիւն եղող կարգադրութիւններն ու
հրամանները: Հակառակ թանձր խաւարին, Բազրատեան կամաց-կամաց կըր-
ու երկու մասերու բաժնի յոգնած ու մեռած մարդոց այդ զանդուածը: Ա-
ռաջին ու ամենակարեւոր մասը դրուեցաւ զոմիթաճիւններու հրամանատարին
ղեկավարութեան սակ: Քիչ մը ուտելիք ստանալէ եւ փամփուշտներու պա-
շարը նորոգելէ ետք, այդ խուճրկ ուղղուեցաւ դէպի Հարաւի դիրքերը. ա-
պա, հազար ու մէկ զգուշութիւններով, ուրուականներու նման թեթեւ, սա-
հեցաւ դէպի կողմնակի արահետ մը, որ հազիւ տեսնելի էր, եւ անտանն-
րէ, մացառուներէ, երբեմն ալ լերկ զատիթափներէ կ'անցնէր: Այդ արա-
հետով այդ խուճրկ կռուողները պիտի մօտենային թուրքերուն գիշերային
կայանին:

✓ Այս առաջելութեան ընթացքին լատ մը իրողութիւններ օգնութեան
հասան զացողներուն, նախ այն՝ որ իրենք լատանսօթ էին, ընտելացած էին
լեբան ու իրենց անցած վայրերուն. ապա՝ զիշերող զօրքին խարոյկները, որ
նիւզայաշին վառել տուած էր Դալար կաղնիներու հեղեղատի եզերքին: Աին-
տրները այդ խարոյկները վառած էին ժայռոտ կէտերու վրայ, որովհետեւ
ուրիշ ամէն տեղ, հակառակ կիրճին մէջ տիրող խոնաւութեան, այնքան չոր-
ցած ճեղքեր ու փայտեր կային, որ հրդեհ առաջացնելու վտանգ կար: Հակա-
ռակ այդ խարոյկներուն, զոմիթաճիւններուն հրամանատարները յաջողեցան
պաշարումի ենթարկել ձուածու ամբողջ կաղնուար: Հայաստանի զուակները
հիմա անշարժ նստած էին ծառերու կատարներուն, կամ խիտ թուփերու հե-
տին դետինը պառկած էին. ուրիշներ ալ հոս ու հոն, անբաւարար ձեւով պա-
տըսպարուած, սեղմուած էին ծառերու ծոռումուռ ու հաստ արմատներուն
հետեւը: Անոնք իրենց հանդարտ, անայլալի նայուածքը սեւեռած էին թշնամիի
կայանին, որ հանդարտութիւնը քիչ-քիչ կ'աւելնար: Հայ զոմիթաճիւնները
իրենց հրացանները արդէն դրած էին իրենց այտերուն, հակառակ որ կրակե-
լու հրամանը, որ լեբան քապթէն պիտի զար, կրնար մէկ ժամէն աւելի ու-
շանալ:

Միևս, իրենց ձեռքէն խլուած խրամներուն վրայ յարձակումին հրաժանատութիւնը Գարրիէլ վասակած էր Նուրհան Ձաւուչին, անոր տարով երկրորդ, հարիւր յիսուն կուսակներու խումբը: Զաւուչ Նուրհան ժայռակուտներուն ետին հաւաքուած ուժերը առաջացուց զխաւոր խրամներուն ժոռերն ու կողքերը: Գրեկերուան խաւարը ու թեթեւ հովի մը սվովոցը այնքան լաւապէս ծածկեցին գետնին վրայէն սողալով յառաջացող մարդոց շարժումը, որ հայերը կրցան մինչև անգամ երկու կողմերէն զիջ մը աւելի եւս անցնիլ խրամները եւ շրջապատել զանոնք: Իրողութիւն մը շատ նպաստեց հայերուն,— այդ դիրքին վրայ գտնուող թրջական ուժը, որ բաղկացած էր օրուան բնթացքին շատ շարշարուած դասակէ մը, անբարենիթ սխալը գործած էր քանի մը քարալիտի լամբեր վառելու: Հետեւարար, այդ լամբերուն զօրաւոր լոյսը օքանելիօրէն կը լուսաւորէր թուրք զինուորներուն զլուխները ու բացարձակ մութին մէջ կը ձգէր այդ դիրքերուն անմիջական շրջապատը: Հետեւարար, հայերը, լաւ նշանաութեան մը համար իրենց արամադրութեան տակ ունէին՝ բոււրացի ժամանակ, հանդարտութիւն եւ ցանկալի ամբողջ լուսաւորութիւնը: Կրամները շրջապատողներէն կարծէս ոչ մէկը կը շնչէր. անոնց մարմիններուն ոչ մէկ անդամը կը շարժէր: Կը թուէր, թէ դիւերը իր ծանրութեան տակ ձգած էր կեանքի ամենայնոին հետքն անգամ, այնպէս՝ ինչպէս փչւող հանքի մը փլատակները կը ծածկեն հանքախորշին մուտքերը:

Հոն՝ ուր աւերակուած պատերով եղբուած արահետը կը հեռանար լեռան առաջին զառիթափէն, հեղեղատէն վեր բարձրանալու համար, զօրակայանի վարի եղբորին կանգնած՝ զԱյնազամն ու հրամանատարը կը խօսակցէին: Քանի մը զինուորներ, լապտերներով ու ջահերով, զիջ մը հեռուն կը սպասէին: Երկուպայտին նայուածք մը նետեց իր թեւի արդիական ժամացոյցին, որուն թուանշանները տնտուած էին մութին մէջ փայլող նիւթով մը:

— Գրեթէ ժամն է,— բաւա,— կը մտածեմ զորքը արթնցնել արեւածաղէն ժամ մը առաջ:

Պայմազամը մտահոգ կը թուէր հրամանատարին առողջութեամբ:

— Պիտի շնայնորէի՞ք արդեօք գիշերը անցրնել ընդհանուր հրամանատարութեան կեդրոնը, երկուպայտ: Այսօրուան օրը բաւական ծանր եղաւ. աղուար անկողին մը մեծապէս օգտակար պիտի ըլլայ ձեզի:

— Ո՛չ, ո՛չ. քեանալ կարենալու չափ հանդարտ մի՞նակի մէջ յեմ:

Պայմազամը հրաժեշտ աւաւ, լապտերները բռնած զինուորներուն ընդհանրութեամբ հեռացաւ. տակայն, երկու քայլ յառած՝ ետ դարձաւ:

— Մի նեղուիր, երկուպայտ, եթէ հարցում մը եւս տամ: Կրնամ արդեօք վստահ ըլլալ, թէ յառաջիկայ ժամերուն ամենախառտեցի դէպքեր պիտի չպատահին...

Հրամանատարը մեծ դժուարութեամբ զօպից ասելովառ պատասխան մը: Մն զաղաքայինը իր անտեղի հարցումներով ուղղակի անասնելի էր. ու մեղադրող շեշտով մը պատասխանեց.

— Բնականաբար ապահովութեան համար անհրաժեշտ բոլոր միջոցները ձեռք առած եմ: Պէտք չունէիք ետ դառնալու, զայնպէս. որովհետեւ գծն զիջ առաջ, անգամ մը եւս, հետախուզական խումբ մը գրկեցի՝ մեր կազմուածին յորս կողմը թննելու:

Ամէն ինչ տեղի անեցաւ երկուպայտին բառին նման: Սակայն հետախույ խումբը, որ կազմուած էր յոգնարեկ ենթասպաներէ ու զինուորներէ, կէս մը դիտակից, կէս մը անդիտակից մի՞նակով քայլով, համբուն վրայ գտնուող զանազան խորհրդոտներուն զարնուելով, ինչոյսով-եւլլիւսով կ'անցնէր շատ մօտերը հասած հանրու ըմբէ — որոնց պէտքը, կազմիներու տերեւ-

ներուն մէջէն, կատուններու աչքերուն նման կը փայլէին — ու չէր նշմարեր զանոնք: Քիչ ետք այդ թուրք զինուորները կը վերադառնային իրենց կայանը ու պահակ սպային կը զնկուցէին, թէ չորս կողմը մարդ չկար եւ վախճալիք ոչ մէկ բան կար:

Գարրիէլ Բազառտեան սրկարէթը վառելէ ետք դեռին նետնոց բոցալուա լուցկին: Փոքրիկ բոցը անմիջապէս լիզեց դեպիները, տարածուեցաւ եւ խուս՝ բոս խուրձ մը բանկցուց: Իսկուհի, որ չէր հետանար Գարրիէլէն, ստքով մարեց սկսող կրակը:

— Ամէն ինչ այնպէ՛ս չոր է, — ըսաւ:

Լուցկիի այդ փայտիկը եղաւ Գարրիէլի ուզելին մէջ յանդուգն մտածուածին ծնունդ տուողը: Պահ մը ամբողջովին մոլորած մնաց: Իր ունեցած ներշնչումը երկասյրի էր. կրնար նոյնքան գնասել իր ժողովուրդին, որքան թըր-նամիին: Բազառտեան թաշկինակը Լաննց, դրօշակի մը նման բացաւ եւ ուղեց ճշգիւ ուղղութիւնը հովին, որուն ուժգնութիւնը երթալով աւելցած էր: Արեւ-մբասն չով մըն էր. ծովէն կու դար եւ ճիւղերը զէպի վարի հովիտը կը ծը-ռէր... Ո՛չ զնկազարներու խորհուրդը, ոչ ալ ինքը՝ Գարրիէլ, կրնային ատ-նանմին նման որոշում մը տալ: Ժողովուրդին գերագոյն տառապանքին՝ Տէր Հայկազունին կ'իյնար այս կամ ոչ ըսելը:

Պահ մը անուղ ծանր լուսթեղէ ետք, Տէր Հայկազուն ըսաւ.

— Այո՛:

Այդ միջոցին, զինեալ բոլոր ուժերը արդէն հետացեր էին Թորանի հրա-պարտէն ու Վարդաբի հովիտէն: Յարձակողականին պատրաստ երկու դռն-դերը, շունչներին բռնած՝ կը սպասէին ազդանշանին: Կուռուկներու՝ յաւել-եալ գին մը հաստատուած էր յըջապատուած իրամներուն եւ ժայռակոյտէ պատնէշներուն միջեւ: Այդ գիծին նտին՝ ալ կեդրոնացած էր ժողովուրդին ամբողջ պահեալ տօբը:

Այդքանով չէր լրանար Ստեփան, որ վաղուց փախած էր մօրը կան-պանութենէն. հակառակ աղէտին մօտենալուն՝ դերագրելու գիճակի մէջ էր: Մութին մէջ տեղի ունեցող փոփոխութիւնը, անհելլով կատարուող երթ-եւեկները, անմիւթենէն դողազող այդքան մեծ թիւով մարմիններու իրո՞ւ ըջապատը, ըր՞ող լապտերներու պարբերական արագ լուսաւորումներն ու նոյնքան արագ մարումները ու հարիւրաւոր նման գիտական մանրամասնու-թիւններ կ'ազդէին Ստեփանի լարուած իրողութեան վրայ, առաջացնելով յան-կարծ կեանքի եկած արբեցնող անիրական այնտեղի մը սպաւաւորութիւնը: Այն բոլորին աւելնալու կու դար պատտններու գունդին ստացած տարօրինակ հրամանը, եւ մինչ այդ իրենց համար դեռ մութին մէջ մնացած ծրագրին — որուն համար կ'ընէին, թէ ժողովուրդի պաշտպանութեան վերջին պնտուարն էր — ժառանգելու կոչուած ըլլալուն հպարտանքը: Ահա թէ ինչու շատ հաւ-կեմալի էր Ստեփանի ու իր ընկերներուն յուսով ամէն յնգնութիւն մտնալն ու միտնուիլը արբեցնող սպասումներու գիւրկը:

Արդ չայդքան տարօրինակ այդ հրամանը կը վերաբերէր քորիւղի պա-հուաններուն: Անանց յաւելեալ բացատրութեանց՝ Թորանի հրապարակը բեթ-ւեցան Տամբաքըի վրայ դանուող քարիւղի բոլոր թիթիղները, ներառեալ Բազառտեաններու ընտանիքին պատկանող երկու տակաւները: Աճապարանմա-քով հոն փոխադրուեցան նաեւ այդ պահուն մարած սնանկներուն քով պատ-րաստ գտնուող բոլոր ճիւղերը, բարակ ու հաստ փայտերը, Ապա տղաքը՝ Ծերունիները, կիները եւ ինը տարեկանէն վեր երեխաները զացին փայտերու զէպերուն մէջէն գաւազաններ զատելին, որքան կարելի էր բարակ ու ասկուռ Պէտք էր ճիւղերը մինչեւ իրենց կէսը միտնել քորիւղի մէջ ու լու՛ւ մը դար-

մընել, Երեք հազար հոգի էին ու այդ դործողութիւնը բաւական ժամանակ առաւ: Մարդիկ դեռ մեծ թիւով խոնուած էին քարիւղի տակաւններուն շուրջը, երբ Հնչեց յարձակողական նշանի երկարատեւ ուռուցք եւ կրակոց սկսաւ թուրքերուն կողմէ դրաւուած խրամներուն վրայ նոյն բազէին իսկ: Վարք, Հեղեղատին շուրջ եւս հարիւր նման ձայներ արձագանդեցին վերի կրակոցնեւրուն: ու այդ աղմուկին կը միախառնուէին Հիմա ստրտափի աղմուկը ճիւղի վրայ, քնաթաթախ վիճակի մէջ անակնկալի եկողներուն ձայները, որոնք այնքան խուլուտ էին, որ այլեւս ճարդկային ոչ մէկ դրոշմ ունէին:

Պարբիէյ Բագրատեան կանգնած էր խրամները շրջապատող դիմին ու ժայռակոյտերու դիմին միջեւ տեղ մը, ժայռէ պզտիկ բարձրուածքի մը վրայ: Կտուի այդ պզտիկուտ թռչուումն էին ընթացքին, որ բոլորովին օտարեր էր մինչ այդ դործադրուած յարձակողականներուն թռչուումն էին, Հայկական բանակի Հրամանատարը, գերագրգիւտ երազանքի մը մէջ միւրմուտ՝ ոչ մէկ թառ ուղղած էր իր ետեւ կանգնած ու սպասող ճարդոց: Այսպէս անցան քանի մը վայրկեաններ: Ետտ մօտէն լուռօղ կրակոցները Հետզհետէ նուաղեցան: Պարբիէյ կրկին Հուլուտայ չէր կրնար, թէ այդ անակնկալ յարձակողականին առաջին քայլը այդքան տրագորէն յաջողած ըլլատ: Ասկայն Չաւուշ Ետերան արդէն կը փոխանցէր իրենց միջեւ ճշդուած պարձանական նշանը, Հոյերուն դէմ պատրաստուած լամբով բազմիցս ութի ձեւով շարժումները դժելով խուսարին մէջ: Խրամները Հիմա վերտարին հայոց ձեռքը կը դանուէին: Պայտապանուողները մինչեւ իսկ յաջողած էին խրամներէն անդին այ անցնել ու փախչող թշնամին Հետապնդել մինչեւ վարերը: Թուրք զինուորներուն մէկ ժասը կորսուեցաւ եւ ինկաւ դիրենք Հետապնդող Հայերուն ձեռքը: Այլ մաս մը սկսաւ թափառիլ: Ինչպէս-եւ ինչ ու շտապով, օտանով վազել դէպի Հեղեղատը, մինչ Հայերն այ իրենց ետեւէն կը վազէին, Հրացանի կոթիւրով կամ սուրճաններով Հարուստեւրու Համար գիրենք:՝

Պարբիէյ Բագրատեան ետեւ դրկեց Մամուէյ Աւարեանը, պահեստի ուժերուն փոխանցելու Համար կարգախօսը՝ «Ձէնքի ու յուսմը» ու սպասեց որ բազմութեան ոտքի ու խօսակցութեան ձայները մօտենան իր դիրքերուն: ապա անցաւ իր աժներուն գլուխը:

Բոլորը մէկ, խիտ թաւուտներու մէջէն դանդաղութեամբ շարժելով, բազմաթիւ դիակներու առջեւէն անցնելով, յառաջացան դէպի բարձրաւանդակի եզերքը ու սկսան իջնել դէպի անառածածակ Հեղեղատը, որ պոռոցներու մօնիւնով կը զզրվար:

Դայար կարծիներու այդ Հեղեղատին մէջ տեղի տնկողը որտրդական Հետապնդումներու կը նմանէր: Ամենաբարձր սպաները, օճաղիներն ու դիւարները շարունակ կը փորձէին իրենց իսկ վառած խարոյկներուն մօտենալ, դանոնք մարտիւտ Համար, սակայն խարոյկ մարել փորձելով կը մարէին իրենց կեանքը: Հեղեղատին շրջապատը շրջանակաձեւ տեղաւորուած ջրծիթաններուն կրակոցները բոլոր թշնամիները կը քշէին դէպի Հեղեղատին խորքը: Ապաները, պոռուկանչելով, Հակառակահարմաններ կը տեղացնէին ու այնքա՞ կարեւորութիւն կու տար անոնց: Չինուորներն ու գաղպիւնները կատարի միջերով իրենց Հրացանները կը փնտռէին, սակայն անգամ մը ձեռքերին առնելէն ետք զանոնք՝ չէին գիտեր, թէ ի՞նչ ընէին, երբմիտեւ կրակուած իւրաքանչիւր Հարուած կրնար յնկեր մը կամ եղբայր մը սպաննել: Անոնցմէ շատեր գիրենք խոնարհող զինքերը նետեցին ու մէկ օտարեւով վազեցին դէպի անանցանելի, խոչընդոտներով ու փոս մացառներով ի թաւուտները: Հայկական շերան կեանքը եւս կարծես մասնակից էր այդ անպուժ ոչնչացումին: Թաւուտները Հեռզհետէ աւելի ու աւելի բարձր, աւելի թշնամական եւ անանցանելի կը դառնային: Ետեւրք՝ կարծես շարացած՝ կ'ուռէին: Մարդոց

բոյսեր ու զանազան ճիւղեր կու գային մարզարէին զաւակներուն երեսները մտրակելու: Բազմաանման բոյսերը կ'ուրուէին փախչողներուն շուրջ ու պատճառ կը դառնային անոնց տապալման: Գետին ինկողը եղած տեղը կը մնար: Մահուան հանգիւյս այդ ցեղին ունեցած անտարբերութիւնը գիրենք կը մղէր եղած տեղերին մնալու եւ իրենց դուրսը աւելի եւս մխրճելու բուսա-
կանութեան մէջ:

Ծնորհիւ իր զօրաւոր պաղարիւնութեան եւ սուրին տափակ կողմով տը-
ւած հարուածներուն, երկզպաշին յաջողած էր խելայեղ միճակի մէջ դռնուող իր գինուորներէն առաջացնել որոշ խումբ մը: Երբ սպաններն ու ստորագաս
աստիճանաւորները, ինչպէս նաեւ Հին գինուորները, մարմրող խորոյի լոյ-
սով իրենց հրամանատարը ճանչցան, անոր շուրջ հաւաքուեցան: Այսպէսով
դիմադրութեան կորիզ մը, կամ աւելի ճիշդ՝ նոր յարձակողականի մը կորիզը
կազմակերպուելու վրայ էր: Հրամանատարը իր սուրին ծայրով բարձրաւան-
դակը ցոյց տալով, պոռաց.

— Յառաջ, հետեւեցէ՛ք ինձի:

Երկզպաշին, չափազանց գերազգուած՝ իր ժամացոյցին Փոսփորաս
փայլ թուանդաններուն կը նայէր: Յանկարծ չիւնց դալմազամին իր ըսածը՝
«Եթէ՛ մինչեւ վաղը իրիկուն հայկական կայանին տիրապետած չըլլանք, կը
հրատարի՞մ կեանքէն»: Աւ այդ պահուն իրապէս այլեւս չէր ցանկար տպրիլ:

— Հետեւեցէ՛ք ինձի, — կը կրկնէր, հեւտով:

Երկզպաշին իր մէջ կը զգար աղէտը միւ-մինակը յաղթական յարձա-
կողականի մը վերանկելու անհրաժեշտ կամքն ու ուժը: Իր անձնական օրի-
նակը տուաւ պէտք եղած պտուղը: Դժոխքի վերածուած այդ անտառէն դուրս
գալու ցանկութիւնը գինուորները զէպի առաջ մղեց: Անոնք հրամանատարին
հետեւեցան խանդավառ ճիւղերով եւ ողջ-առողջ հասան հեղեղատին վերի ե-
զերքը: Բարբախտ սիրտերով, ուժասպառ իրականութեանց ամբողջ գիտակ-
ցութիւնը կրօնցաւած ու տատանելով կը մարտնչէին զառիթափն ի վեր, դէ-
պի հայերուն դիւրեային լապտերներն ու հրացաններուն որոտումը, որ
զրկարաց դիմաւորեց գիրենք: Բոլորն ալ անկենդան մարմիններու նման ետ
նետուեցան: Երկզպաշին սկիզբը շանդարդարձու իր ստացած վէճքին, միայն
թէ գարձացաւ, որ յանկարծ այդքան մէնակը մնացիւ էր, լքուած բոլորէն:
Յետոյ գարձացաւ, որ իր աջ ձեռքը այդքան ծանր էր: Երբ զգաց ցաւը ուս-
րիւնին հոսիլը տեսաւ՝ զո՛ւ մնաց. դրեթէ երջանիկ էր: Այժմ իր կրած ամո-
թանքն ու կորուստները շատ թեթեւ կը թուէին իրեն: Աչքերը զոցած, ա-
նանց ըստ մը արտասանելու, զէպի հանձն քաշկոտուեցաւ: Կը յուսար որեւէ
տեղ փլիչ, անկէն մը մնալ եւ այլեւս ոչինչ տեղեակ ըլլալ...

Երբ կրուին ազմուկը հեռացաւ մերազրաւուած խրամներէն, զէպի
վար, զէպի հովիտը իջնելու համար, աղբանջանը տրուած էր նաեւ զՔաղաքի
հովիտառի ժողովուրդին: Հրահանի մը բոցը ժայթքեց. քարիւղով թաթխուած
լահերէն մէկը ճարձատելով բոցալստեցաւ ու յաջորդող քանի մը վայրկեան-
ներուն մէջ հազարաւոր այլ ջահեր ստալիներէն կրակ աննելով բոցալստուե-
ցան: Կայանի բնակչութեան մեծ մասը հետեւեցաւ Հայկի ու Սանճանի օրի-
նակին, որոնք իրենց իւրաքանչիւր ձեռքին մէջ վառած ճիւղ մը բռնած էին,
ու սկսան երկար շարանով մը քալել: Այնպէս լոյսերու նման թափօր տեսած
չէր: Ծարձատող ջահ բռնած իւրաքանչիւր քալող, իր հոգին խորիւր թա-
փանցած կրօնական վե՛հ ապրումի մը գիտակցութեամբ կը արթաւար: Այդ
լոյսերը գիրիւրային մթութիւնը աւելի եւս շեշտաւորող անջատ բոցեր չէին,
ամբողջ ժողովուրդի մը խորհրդանիշ լուսաւոր կրակ մըն էր, որ տարածու-
թեան մթութեան մէջէն ու զայն պատռելով, յաղթական ճեղք մը կը բանար
հոն: Փայտղներուն խումբերն ու շարքերը վե՛հաշուք դանդաղութեամբ մը

կ'առաջնային, կարծես իրենց երթին վախճանակէտը կուրի դաշտ մը լըլլար, այլ՝ խողովի ու աղօթքի վայր մը:

Վարը, գիւղերուն մէջ, Եողունոյւթի ու Պիթիաթի մէջ, Հապիւլի եւ Ազիբի մէջ, Վազըֆի ու Խըռըր Պէկէ մէջ, նոյնիսկ աւելի հեռուն գտնուող Քէպուսիէի մէջ հայերուն կորսնցուցած տուներուն ու հողերուն տիրացողներէն ոչ մէկը կրցաւ աչքերը փակել ու քնանալ, Երբ կատաղի կրակոցներուն ձայները հովիտ հասան, տղամարդիկ իրենց ղէնքերը աւին ու ճամբայ ինկան: Այժմ կը գտնուէին լեբան լանջերուն վրայ, թէեւ, Տիշու է, չէին համարձակեր բարձրանալ մինչև Դայար կաղնիներուն կիրճը: Իսկ կիները տեղաւորւած էին պարտէղներուն մէջ կամ տանիքներուն վրայ ու անձկագին սպասումով կը հետեւէին կատաղի կրակոցներուն: Ու անոնք յանկարծ տեսան, թէ առտուան ժամը մէկին արեւը Տամյահըթի կոնակէն կը ծագէր, լեբան միջին կատարը կը գծազուէր նուրբ վարդազոյն լուսաւոր խորքի մը վրայ: Երկնային այդ արտակարգ երեւոյթը, իր նմանը չունեցող հրաշքի նմանող իրողութիւնը, այդ գիւրհաւատ կիներուն մէջ տակնուվրայութիւն մը առաջացուց. կարծես Վերջին Դատաստանի ժամը հասած ըլլար: Ու երբ քիչ ետք լեբան ծիրը սկսաւ կարմրել եւ բոցեր արձակել, այլեւս բնական որեւէ բացատրութիւն փնտնելու ատենը չէր. Յիսուս Քրիստոս, անհասանելուն մարգարէն, իր ուժին շնորհի ու նաև Մուսա Տաղի հայ միմերը, զաշնակցած իրենց եկեղեցիներու սուրբերուն, Պետրոս, Պօղոս, Թովմաս եւ միւս սուրբերուն հետ, արեւը բարձրացուցեր էին լեբան ետեւէն ու օգնութեան հասեր իրենց ժողովուրդին: Այն հին հաստաբը, թէ դերբնական ուժեր կը պաշտպանէին հայերը, այժմ ահա կը հաստատուէր աւելի քան երբեք: Միլլաներն անգամ, որ այդ պահուն Եողունոյւթի զանգակատունէն կը դիտէին հրաշքը, անպարանօք հեռացան զձերչտակապետաց յատկացուած այդ սրբավայրէն, որ մզկիթի վերածուած էր:

Տպաւորութիւնը, որ այդ անդիմազրելի Հրեղէն պատը գործեց զեռեւ լեբան լանջերուն վրայ գտնուող թուրք զինուորներուն վրայ, նուազ դերբնական եղաւ անշուշտ, սակայն շատ աւելի զարհուրելի ազդեցութիւն ունեցաւ: Այդ ջահերը կը տեսնէին թուական ճշտող գերակայութեան մը տպաւորութիւնը: Կարծես ամբողջ հայ ազգը, կայսրութեան զանազան անկիւններէն տեղահան եղած բոլոր կարաւանները այդ պահուն հաւաքուել էին այդ կէտին վրայ, իրենց զնգակներով ու ջահերով գերիշխան ժողովուրդի մէկ փոքրը մասնիկէն լուծելու համար իրենց հասցուցած Հրէշային բոլոր զարհուրանքներուն վրէժը, Դիրքերուն գիմաց տեղաւորուած թրքական ուժերուն փոքրաթիւ զօրախումբերը սրբնթաց փախան լեռն ի վայր: Ոչ մէկ սպայ կրնար կեցնել զիրենք: Անոնք՝ որոնք զեռ ողջ էին կաղնիներու անտառատի շրջանին մէջ, վազելով կ'անցնէին մացառներուն մէջէն, ոչ մէկ կարեւորութիւն տալով հայոց զնգակներուն. ու կ'աշխատէին լեբան սուրբտը հասնիլ:

Հայերուն թիւը բաւարար չէր, որպէսզի կարենային ամբողջովին փակել հեղեղատին մուտքը: Քանի մը սպանիւր ու զինուորներ, որոնք բաւարար չափով արտուաւանդէր ու քաջ էին, իրենց երկզգայիին բացակայութիւնը տեսնելով, համարձակեր էին վերադառնալ մտանդաւոր շրջանը եւ ուշակորտայ վիրաւորը դուրս էին անտառի եզրին: Չայն փոխադրեցին Բազրտտաններուն տունը: Այդ քաւազին փոխադրութեան ընթացքին հրամանատարը ուշքի եկաւ: Հիմա կը գիտակցէր, թէ ամէն ինչ կորսուած էր այլեւս. թէ քրիստոսանները ամբողջովին փնայուցեր էին իր զինեալ ուժերը եւ որ այլեւս չէր կրնար յուսալ վերականգնել կացութիւնը կամ վերադառնալ իր նախկին կեանքին: Ու անկեղծօրէն անիծեց ոյն զնգակը, որ միայն փչրեր էր իր աջ

թեւը, փոխանակ աւելի արժանազան լուծումի մը յանգեցնելու: Հիմա միայն մէկ բան կը ցանկար՝ վերստին մարիչ:

Կրակի թափօրը այլեւս ոչ ոք ունէր իր դիմաց: Բոցավառ շարքերը զանգաղօրէն իրարու եկան ու մօտեցան Դաւթը կաղնիներու կիրճին եւ մերձակայ անտառներուն: Տէր Հայկազուն կեցուց թափօրը եւ հրամայեց բոցավառ ջահներուն մնացորդները մացառնելուն մէջ նետել ու շտապով ետ դառնալ: Այրող ճիւղերը ինկան թուփերուն վրայ, որոնք սկսան միտլ, սպա, քանի մը վայրկեան ետք, ամէն կողմէ լռելի եղաւ աւաւոր ճարձատիւնը, որ սկիզբ ունէր, սակայն վերջ չունէր այլեւս: Կարծես ամբողջ Տաճարը պիտի սկսէր լռել: Կարգ մը կէտերու վրայ անտառին հրդեհումը կատաղի շարժում հասած էր: Վայ էր եկեր հայերուն... Եթէ յաջորդ մամերուն կամ օրերուն հովը ուղղութիւն փոխէր: Վտարաքի հովիտը մօտ էր բարձրաւանդակի եզերքներուն ու կրնար ենթարկուիլ թռչող կայծերու վտանգին՝ ու հրոյ ճարակ գտնալ: Բարեբախտաբար Բազրատեան բաւական լայն տարածութիւն մը մերկացուցած էր, այդ շրջանին դիմաց զանաւոր թուփերն ու ծառերը կտրել տարով:

Անտառին հրդեհը այնպիսի արագութեամբ կը տարածուէր եւ Տաճարը մտնողները կ'ընդլայնէր, որ իր կատաղի բոցերը այլեւս չէին նմաներ երկբային նրթերէ սնունդ աննող երկրային բոցերու: Քոմիթանիներն ու առաջին գիծի կռուողները հազիւ ժամանակ ունեցան սպառնալ տեղ փոխադրելու: Իրենց յարձակումներով մեղք բերուած աւարը՝ աւելի քան երկու հարիւր մասնազոր հրացաններ, մեծ քանակութեամբ ռազմամթերք եւ շարժական երկու խոհանոցներ, բնա կրող չինգ էշեր, բոլորն ալ պարէնով բռնաւարուած, ու վրանի կտուներ, ծածկոցներ, լամբեր ու ամէն տեսակ իրեր՝ մեծ քանակութեամբ:

Երբ իրական արեւը ծագեցաւ, Տաճարը վրայ իջած էր քարի նման ծանր քուն մը: Կռուողները կը քնանային հո՛ն՝ ուր ըստ բախտի թմբու-ինկեր էին: Անոնցմէ շատ քիչերը միայն ուժը ունեցան քաշկուտուելով հասնելու իրենց ծածկոյթներուն: Տղաքն ալ կը քնանային բացօթեայ, դետիքը կծկուած: Իսկ կայանի հիւղերուն մէջ, կիները փախթներուն վրայ նետուեր էին, այնպէ՛ս՝ ինչպէ՛ս էին. առանց նոյնիսկ զբաղելու իրենց փոքր երեխաներով, որոնք անօթութենէն կը տքային:

Բազրատեան կը քնանար: Բոլոր դեկավարներն ալ կը քնանային: Տէր Հայկազուն եւս ուժը չէր ունեցած աւարտելու գոհարանական պատարագը. որբազան արարողութեան աւարտին մօտերը, ամբողջովին սպառած, դիմովի նման գետին ինկած էր: Մտիթարները կը քնանային՝ առանց հօտերուն մէջէն զատած ըլլալու յաջորդ օր մորթուելիք կենդանիները: Մտադործներն ալ կը քնանային. կ'թուրուէինքը նոյնպէս: Ոչ ոք իր ամէնօրեայ այլախառնութիւն կ'երթար: Խոհանոցներուն օճախները վառուած չէին: Աղբիւրներէն ջուր բերուած չէր: Ոչ ոք կը զբաղէր խրամներուն մէջ ոգեվարող վիբրատորներով կամ անձնացմով՝ որոնք կրցէր էին մինչև հիւանդանոց հասնիլ:

Վերաւոր բառը պաղ բառ մըն է, որուն ետին ամէն տեսակի օտարամ գաղափարներ կը ծուարին: Արդ, այնտեղ, այդ պահուն, կարելի էր տեսնել Վիբրատոր բառը գորհուրանքով լի իր ամբողջ իմաստով: Դէմքեր՝ առանց չիթի, առանց աչքի. արիւնաթաթախ ու ճղմուած կզակներ. տում-տում զնդակներէն պատուած ժարմիներ. փորը պատուած տքացող մարդիկ, որոնք ծարուէն կը մեռնէին: Պետրոս ճէֆիլը չէր, որ պիտի կրնար օգնութեան հասնիլ այդ թշուառներուն. այլ՝ մահը միայն: Մահն ալ, երբեմն, այդ դիմբախտներէն մէկուն կամ միւսին վրայ հակելէ առաջ, բարեբախտաբար ա-

նոնց կը շնորհէր շահեցնող տաքութիւն մը, որ կ'օգնէր այնքան դանդաղօրէն անցնող վերջին ժամերը անցընելու՝ անդգայ թմբիրի մը մէջ:



Վարը, հովիտին մէջ կը քնանային սպանդէն ազատած կանոնաւոր բանակի զինուորները, զապթիէները: Սպաները կը քնանային Բազրատեանի տան սենեակներուն մէջ, Բանի մը ժամ առաջ, առողջապահական կառքով մը արդէն Անտիօք փոխադրեր էին նախորդ օրուան առաջին զօճը՝ Հալէպի գլխաւոր շտաբ: Հիմա, նոր վերաւոր մը՝ երկզպային, կը քնանար Ստեփանի անկողնին մէջ, Գայմազամն ալ Ժիւլիէթի սենեակը կը քնանար: Գայմազամը Հալէպի վալիին ուղղուած տեղեկագրի մը պատրաստութեան սկսեց էր, բայց չէր կրցեր ոտքի մնալ: Սակայն քունին մէջ եւս իր դիտակցութիւնը կը գործէր, շատ աւելի յստակ անգթութեամբ մը, քան արթուն վիճակին մէջ, երբ ժամածումները ստիպուած են որոշ ունայնամիտ վայելչութիւն մը պահպանել: Գայմազամը իր ասպարէզին սմենածանր ճախողութեան ենթարկուած էր: Իւրաքանչիւր ճախողութեան մէջ, սակայն, աստուածային շնորհի մը տարբերը կան, որովհետեւ ճախողութիւնը, հեղինական ժպետով մը, միշտ ալ կը յայտնարերէ մարդկային յաւակնութեանց ամբողջ ճիծաղելիութիւնը: Արդ, այս գայմազամը, բարձրաստիճան պաշտօնատարը, Իթթիհատի ազգեցիկ անդամներէն, համոզուած ու զոռոզ օսմանցին, խորապէս համոզուած ռազմունակ ցեղին եւ իշխանաւէրներու գերակայութեան, ի՞նչ կը սորվէր Հիմա՝ ի վնաս իրեն... Թէ՛ տկարները ուժեղներն էին եւ որ ուժեղները բան մըն ալ չէին արժեք. այս՛, ճիշդ այն մարդին մէջ իսկ, հերոսներուն մարդին մէջ իսկ — որուն պատճառով իրենք կ'արհամարհէին տկարները — երեւան եկած էր, որ բան մըն ալ չէին արժեք... Գունին բերած յայտնաբերումները իրենց արմատները շատ աւելի հետուններն ալ կը խրէին: Մինչ այդ, գայմազամը ոչ իսկ բուպէ մը կատկածած էր, թէ կնիկն ու Քալաթը իրաւունք ունէին Հայ Ժողովուրդին հետ վարուելու հաւատարմ չունեցող պետական մարդոց հանձնարել ժամեցումով: Ու Հիմա, ահա, գայմազամի դիտակցութեան մէջ կ'արթնար կատաղի կասկած մը ինչի՞ր փաշայի ու Քալաթ պէյի վերաբերմամբ. որովհետեւ անյալողութիւնը նաեւ Հայրն է ճշմարտութեանց. ու անողոք Հայր մը: Մարդիկ իրաւունք ունէին արդեօք ամբողջ նուրբ ծրագիր մը մշակելու, պարզապէս ուրիշ ժողովուրդ մը բնութիւնը համար: Մնաց որ, կա՞ր արդեօք բաւարար օգուտ մը՝ արդարացնելու համար նման ծրագիր մը, ինչպէս գայմազամը ինք եւս պնդած էր, հարիւրաւոր անգամներ... Ո՞վ կրնա՞ր վճռել, թէ այս կամ այն ժողովուրդը աւելի լաւ է, թէ աւելի թշուար իրաւ...: Մարդիկ չէ, որ իրաւունք ունին նման վճիռներ կայացնելու: Իսկ Աստուած, ինքը այդ օր յուսակօրէն արտայայտուած էր ի նպաստ Տաւլանքի վրայ գտնուողներուն: Գայմազամը ինքզինք տեսաւ կարգ մը կացութեանց մէջ, որոնք խորապէս յուզեցին զինք: Նորին Վսեմութիւն վալիին գրեւոր վրայ էր իր հրատարականք եւ այդպէսով իր ամբողջ կենսքին կառոյցն է, որ կը խորտակէր: Խաղաղութիւն ու Հայտութիւն կ'առաջարկէր Հայերուն, յանձին Գարբիէլ Բազրատեանի, որ բողոքի անձեռոց մը փաթեթելու վրայ էր իր մէջընդ: Իթթիհատի կեդրոնական Կոմիտէի ժողովին կը միջամտէր, որպէսզի անդահանուած Հայերուն անմիջական վերադարձը ապահովուի: Պուէտարկել կու տար ընդհանուր տուրք մը՝ կատարուած անարդարութիւնը դարձանելու համար: Սակայն գայմազամի հողին միայն ամենախո՛ր քունին մէջ կը յաջողէր բարոյական նման բարձրութեան մը վրայ կանգնիլ: Արքան թեթեւեւ իր քունը, այնքան աւելի իր մտածումները կը ժամանային զերեկուան մտածումներուն եւ այնքան աւելի ստատնայարար կը հեռանային նման համարձակ որոշումներէն: Ի վերջոյ գայմազամին քունը լաւ մը թեթեւացաւ

եւ դիւրին ելքի ճամբան տեսնելի դարձաւ. բնաւ հարկ չկար նման ինքնամեղադրական տեղեկազորներ զրկելու կեդրոնական իշխանութեանց : Ատոր վըրայ դայմադամը մինչեւ կէսօր քնացաւ :

Մեռնայինքն ալ, քրիստոնեայ կամ մասճեաական, կը քնանային՝ ցըրւած հեղեղատի թուփերուն տակ, լերան անտառածածեկ լանջին : Հսկայ հըրդեհին լավող լեզուները պարելով-խաղալով կը մօտենային անոնց : Ու կրակը կարծես կ'արթնցնէր քնացողները, անոնց տակէն վեր կը հանէր զիրենք. ու անոնք, սարսափէն բարացածի նման, ուղիղ կը նստէին. յետոյ՝ իրենց մարմինը կը պայթէր ու կ'երթար նետուելու մաքրագործող խարոյկին դիրկը :

Ժամէ ժամ հրդեհը կը մեծնար ու կը տարածուէր դէպի հիւսիս եւ դէպի Տաճարճքի հարաւը : Կրակը կանգ առաւ ժխյն երբ հասաւ Հարաւի ամբարութեանց ստորտը զտնուող մերկ աւերակներուն եւ Հիւսիսի կերճին ժայռոտ մէկ խոռոչին, որոնք արդէլք հանդիսացան իր ներխուժումին :

Հազար աղբիւրներու ջուրերով սոռզուած կանայ մարդազեւոյններու զալար փարթեամբիւնը, որւրիական ծովափի այդ հրաշալիքը, օրերով իր յաղթանակը տօնեց մառ գոյնի դրօշներով, մինչեւ որ իր չորագին, հրդեհէն մոխրացած ընդարձակ արդելաղաշտ մը մնաց : Այսպէսով՝ Մուսա Տաղը հրաւէկ աւերակներով ու բոցեղէն լեզուակներով կուսուած զբաւ մը կ'առաջացնէր, ի պաշտպանութիւն իր զաւակներուն, որոնք մահուան չափ յոգնարեկ, անլափելի խորութեամբ ջունի մը մէջ մխրճուած՝ տեղեակ չէին, թէ այլեւս երկար ժամանակի համար ազատուած էին զիրենք հայածողներուն յարձակումներէն : Ոչ ոք իրենցմէ զհտակցեցաւ, թէ բարեկամ հով մը, մեծ բարեացակամութեամբ մտանգը կը հեռացնէր ՎՊաղաքի հովիտէն, դէպի լերան ստորտը զլելով ամէն կայն կամ բոցավառ հիւղի կտոր անգամ : Կռուողներն ու ժողովուրդը քնացան մինչեւ յետմիջօրէի աւարտը : Այդ պահուն, ղեկավարներու խորհուրդը որոշեց ծառերէ մերկացնել բարձրաւանդակին եղբրքներուն վրայ գտնուող որեւէ կէտ, որ կրնար մտանդի աղբիւր դառնալ : Եւ այդ որոշումը եղաւ հսկայական աշխատանքի մը սկիզբը :

Բոլորն ալ իրենց օրը անցուցեր էին քնանալով. բացի մէկ հոգիէ, մէկ կնոջմէ. որ անարթ նստած էր իր անկողնին՝ վրանին խորքը : Եւ ի զուր կը փորձէր դառնալ փոքր ու խոնարհ, պահուրտի իր բնաւորութեան անպատում օտարութեան եւ անաղբելի յանցանքի պատեանին նտին :

Տրամսերեմէ քարզմանց՝
ՏՈՔԹ Բ. ՓԱՓԱՋՆԱՆ

(Հատուած)

Կ. Պ Ա Լ Ճ Ե Ա Ն

Մուսա Լերան Հայերը
Ֆրանց ՎերՖելի
Վէպին Մէջ



Համաշխարհային համառ ունեցող վիեննացի գրագէտ Ֆրանց ՎերՖելի, 1933ին հրատարակեց իր վէպերու գլուխ-գործոցը՝ «Մուսա լերան քառասուն օրերը»:

Հեղինակին մասին, մենք՝ հայերս, շատ բան չենք գիտեր: Գիտենք սակայն, թէ ան մեծ, անդուգական ծառայութիւն մը մատուցեց հայ ժողովուրդին: Մտաայութիւն մը՝ որուն համար հայ ժողովուրդը երբեք պիտի չկրնայ հաւասար չափով մը իր հրախտագիտութիւնը յայտնել այս մեծ մարդուն՝ Ֆրանց ՎերՖելիին:

Մեծ Եղեռնի մասին ոչինչ ունինք նոյնքան արժէքաւոր՝ ինչքան այս վէպը: Զարմանալի է, եւ սակայն իրական, թէ՛ մեր գրագէտները եւ բանաստեղծները, որոնցմէ ոմանք նոյնիսկ ապրած են այդ տարագրութեան սեւ օրերը — ցարդ չեն կրցած տալ պատկերը այն ողբերգութեան, զոր ապրեցաւ մեր ժողովուրդը:

Ճիշդ է, մեր յետպատերազմեան գրականութիւնը լեցուն է յիշողութիւններով, նկարագրութիւններով եւ սակայն անկեղծ ըլլալու համար պէտք է խոստովանինք, թէ անոնք ոչ մէկ մնայուն արժէք կը ներկայացնեն:

Որովհետեւ, միայն արուեստը կրնայ դէպք մը անմահացընել:

Որովհետեւ, միայն արուեստը յաւիտենական կենդանութեան գաղտնիքը գիտէ:

Որովհետեւ, միայն արուեստը կրնայ տալ ճշմարիտը եւ իրականը. աւելի իրական, քան թէ ինքը՝ իրականութիւնը:

Ըսուած է, թէ եթէ պատահի, որ ֆրանսական Ժէ. գարու

մասին բոլոր պաշտօնական տեղեկութիւնները, բոլոր պատմական արձանագրութիւնները, վերջապէս բոլոր հետքերը անյայտանան՝ միայն Մոլիէրի գործը բաւական պիտի ըլլար վերականգնականցնելու այդ դարը՝ իր ճշմարիտ եւ իսկական դիմագծով:

Մենք, այո՛, Մեծ Եղեռնի մասին ունինք բազմաթիւ յիշողութիւններ, պաշտօնական փաստաթուղթեր, օտար վկայութիւններ եւ սակայն այդ բոլորը կը տօգունին այն կենդանի գործին առաջ, որպիսին է Ֆրանց Վերֆէլի ստեղծագործութիւնը:

Ֆրանց Վերֆէլի հայերը յաւէտ պիտի ապրին աշխարհի գիտակցութեան մէջ, անկախ յետ այսու պատահելիքներէն: Եւ թող շատ զարմանալի չթուի, եթէ ըսենք, որ գուցէ օր մըն ալ գայ, երբ հայն ու թուրքը, հաւասար յափշտակութեամբ կարգան այս վէպը, ողբալով իրենց նախահայրերու ճակատագիրը, որ թէեւ նոյն հողէն շինուած մարդեր՝ չեն ճանչցեր զիրար ու փոխանակ իրար սիրելու եւ Աստծոյ՝ իրենց պարզեւած կեանքը իմաստուն եւ գեղեցիկ կերպով ապրելու, անոնք ատեր են իրար ու մէկը փորձեր է միւսին հոգիին լոյսը մարել եւ անոր արիւնն ալ քամել:

Մեծ է արուեստի ուժը: Օ՛, եթէ մարդկութեան եւ պետութեանց ղեկավարները դաստիարակուած ըլլային արուեստի բարձր հասկացողութեամբ, գուցէ մեր ճակատագիրն ալ տարբեր ըլլար:

Եւ սակայն այդ օրը պիտի գայ: Մարդկայնօրէն դատելով, ան պէտք է որ գայ, քանի որ մարդկային անհրաժեշտութիւն մըն է:

Մոլորութիւնը շունենանք խորհելու, թէ Ֆրանց Վերֆէլի վէպը գրուած է թուրքին դէմ, որ հակաթուրք փրոփականտին ծառայող գործ մըն է: Այ: Ձեռ կարծեք, որ Ֆրանց Վերֆէլ թուրքին թշնամի է եւ չեմ կարծեք, որ ան իր մեծ վէպը գրած է այդ գիտակցութեամբ:

Սորհել այդպէս՝ պիտի նշանակէր վէպին արժէքը չհասկընալ եւ հեղինակը վիրաւորել:

Ֆրանց Վերֆէլ շատ մեծ արուեստագէտ մըն է, իր ստեղծագործութեան մէջ շատաշնորհուելու համար «փրոփականտի», «հակաթուրք» կամ «հայասէր» մանր զգացումներով:

Հայ ժողովուրդի ողբերգութեան մէկ պահը Ֆրանց Վերֆէլի համար՝ մարդկային բարձր արժէք ներկայացնող տարերային երեւոյթ մըն է, զոր ան իր հանճարով անմահացուցած է: Իրեն համար, արուեստի տեսակէտէն նոյնքան արժէք կը ներկայացնէ թուրքը՝ ինչքան հայը: Այնպէս՝ ինչպէս Շէյքսպիրի տերամներուն մէջ, օրինակ, Եակոն նոյնքան մարդկային է՝ ինչքան Օթէլլոն, եւ ինչպէս որ Օթէլլոն Օթէլլօ չէ եւ չի կրնար ըլլալ, առանց Եակոյին, նոյնպէս եւ հայը հայ է՝ որովհետեւ ճակատագիրը անոր դէմ հաներ է թուրքը, մին ընելով նահատակ, միւսը՝ նահատակող, եւ սակայն երկուքն ալ հաւասարապէս խաղալիքներ իրենց ճակատագրին մեռքը: Երկուքն ալ հաւասարապէս մարդեր են, որոնք իրենց վիճակուած ձեռով կը տառապին:

Վէպին աշխարհը դժոխք մըն է, ուր մարդիկ կը տանջուին: Հայը կը փրկուի սակայն մեռնելով, իսկ թուրքը մեռնի՛լ ալ չի կրնար:

Վէպին մէջ հայն ու թուրքը մարդկային հոգիներու երկու բուռներ են: Հեղինակը կրցած է հասնել այդ բուռներուն, թափանցած է անոնց էութեան ու սուած անոնց հոգիները իրենց խոր իսկութեամբ:

Փրանց Վերֆէլ ինքը բնաւ չի փորձեր բան մը փոխել մէկուն կամ միւսին հոգիէն, բնաւ չի փորձեր դատել մէկուն կամ միւսին վարժունքը: Փրանց Վերֆէլ միայն կը դիտէ այդ հայ-թուրք աշխարհը, կ'ապրի գայն խորագէտ ու մարդկութեան ընծայ կու տայ հոյակապ ողբերգութեան մը կենդանի պատմութիւնը:

Փրանց Վերֆէլի վէպը, ինչպէս ամէն մեծ գործ, կրնայ իր պակասները կամ նոյնիսկ թերի կողմերը ունենալ գեղարուեստական դանաղան տեսակէտներէ զիտուած. սակայն ինչ որ վէպ մը մեծ կ'ընէ, անոր՝ իրական կեանքը տալու ուժն է: Եւ իբօք, Փրանց Վերֆէլի «Մուսա յերան քուսուսուլ օրերը» ամբողջ աշխարհ մըն է, կեանքի հոյակապ կառուցուածք մը: Ամուր, իրական, ճշմարիտ եւ կենդանի աշխարհ մը, բարձունքներով ու խորխորատներով, խաւարով եւ արեւով, թանձր ամպերով եւ վարդազոյն հորիզոններով:

Աշխարհ մը՝ որուն մէջէն անցնելով կը զգաս, թէ կարծես կեանք մը եւս ապրեցար ու դարձար աւելի մարդ, եւ մանաւանդ աւելի՛ հայ:

(Հատուած)

ՎԱԶԳԷՆ Ա. ԿՈՅՈՂԻԿՈՍ

Յ Դ . Պ Օ Յ Ա Ճ Ե Ա Ն

Դ Ի Ի Ց Ա Ղ Ն Ա Մ Ա Ր Տ Ը



Յր. Վերձեւին

Տեղ մը, հեռում, մշտապատ, լեռ մը կրա՛կ է առեր,
Եւ լուր աշխարհը չունի, այնքան մութ է, անծանօթ՝
Մարդոց համար սարն այդ հին, որում վրայ հսկաներ,
Ըմբոստագեղ եւ կտրի՛մ՝ կը մղեն մարտ արիւնտ:

Առանձնութիւն: Վե՛հ կռիւ: Մո՛ւնջ է աշխարհն ու դաժան,
Կր կռուին ա՛փ մը հայեր ռոտի՛ն դէմ մեմգազօր,
Մարին վրայ հայրենի, որում եղան անբաժան
Երգախ ընկեր, մեծ պահնորդ ու գինակից ահաւոր:

Ա՛փ մը մարդիկ... ու կիներ, գեղջուկ տղաք դեռ պզտիկ,
Ըմբո՛ստ, ըմբո՛ստ եւ աղուոր՝ պոռթկացին դուրս, գայրացամ
Իշխանութեան դէմ գազիր, ու մուրմամբ բացառիկ,
Գրո՛ւ տուին, յաղթեցին թշմամիին մեր գազան:

Ճայռե՛ր աշտոնդ, անվերջ քար, թեղանօթի խո՛ւլ որտտ,
Կ՛իջնէ անձրեւ, չկայ հաց, չկայ փամփուշտ գրեթէ,
Տասնեակներ են, կանգնած դէմ բիրաւորաց ժամտահառ,
Ու մէկն ահա, է՛յ աշխարհ, հարիւրներու կը յաղթէ:

Կու գամ օրեր, չեն անցնիր, կ'ըլլայ ամէն շաբաթ՝ դար,
Ոչ մէկ կողմէ ոչ մէկ յոյս, սեւ լուսիւն աշխարհէն.
Պապեր, ինչ բախտ ձերն եղաւ, ի՛նչ մեծ տրամ դեռ վատթար,
Միլիոն մ'անդին դեռ անթաղ՝ իսկ կը կռուի՛ք դուք մորէն:

Սնօքի մեռել սուրիական հեռուներու մէջ մտայլ,
 Խաւար լուրեր Տէր-Ջօրէն.— կը խողխողեն կին ու կոյս,
 կը պղծեն ցեղը ամբողջ, կը լափեն գայլն որպէս գայլ,
 Մեր պատմութիւնը կ'ընեն մահուան կեդրոն ու հանգոյց:

Իսկ դուք կ'իշխէք ձեր լեռնէն աստուածներու պէս ցասկոտ,
 Մոնղոլի ցուրտ բնագոյով բանա՛կ կազմած խուժամին,
 Որ կատաղի, որ մտայլ, որ միշտ վիշա՛պ արհաւիրտ՝
 կը մագլցի լանջն ի վեր բարձունքներու պանծագին:



Աշխարհն ինքզինք յօշոտեց, ամ չունեցաւ ձեզմէ լուր,
 Ա՛հ, դուք միմակ կոռուեցաք, եւ այդպէս լա՛ւ էր, պապե՛ր,
 Մեր պատմութիւնն արիւնտ, մեր պատմութիւնը տխուր,
 Հօրացաւ, նոխացաւ, զի սուրբ՝ կոհն եղաւ ձեր:

Թշնամութեան մութ օրէնքն իր դաւադիր լուցկին հոս
 Քսեց անհուն մեր լերան ապառաժուտ կողերուն,
 Եւ անդունդները խորունկ՝ ոտքի ելան եւ անխօս՝
 «Կը զինակցինք՝ ձեզի հետ» ըսին մեր քաջ պապերուն:


Արդ հայ ռզիմ ապստամբ, բարձրացաւ լեռ ու կնքեց
 Զինակցութիւն մը հսկայ ժայռերուն հետ ամրալանջ,
 Անտառներուն՝ եւ յետոյ, գեհեհախոր, երկընկէց,
 Ահատեսի՛լք վիհերուն ա ծովուն հետ ցատականջ:

Եւ ամրացա՛ծ, ժայռացա՛ծ, պրո՛նգ եղած հայ հոգին,
 Վերցուց ձեռնոցը կոռին, նետուած դառով շնական
 Ու ելաւ լեռ, մեռնելու կամ փրկելու իր անգին
 Տան ու հողին եւ ցեղին պատին անեղծ — հին՝ խորան:

Ժայռէն հոգի՛ եւ, պապե՛ր, ձեր հոգիին մէջ կար ժայռ՝
 Եւ ձեր գնդակն ամէն հեղ տախտապարեց դիտապատ
 Մարդ-ճիւղակներ անհատնում, յետոյ կամքի սուր կայծքար՝
 Խիզախեցիք աներկիւղ, վեհ արարի միշտ պատրաստ:

Ահեղ էր ան, քշնամի՛ն, սեւի հնոց՝ հայուն դէմ,
 Տեղակումէէ, հին օրէ, ցեղարմատէ իսկ քարոյզ,
 Միկն եղած դուք ծառացեալ, քաջորդի բո՛րբ ու վսեմ,
 Մաքառումին մէջ ձեր սուրբ, յաղթութեան կամք լուսաշող:

Բարձրացաւ լեռը, քայց դուք՝ սլացաք մինչեւ երկինք.
 Պապե՛ր, պապե՛ր, նահատակ, երբք գնդակն շտխին
 Գտաւ ձեր կուրծքն արմենի, ըրաւ գնդ սուրբ անձինք,
 Լեռը մեծցաւ մարտին մէջ, անհունացա՛ւ ձեր հոգին:



Գուպարն անեղ ձեզ շատցուց, բազմապատկեց բի՛ւր անգամ,
 Ձեր դիրքերուն վրայ դուք դադրեցաք մարդ բլլալէ,
 Եղաք ստուե՛ր Աստուծոյ, անհուն կամփի ուրուական,
 Պապեր, հո՛գն իսկ ձեր վրայ, անմահութիւն թող շնչէ...

Քառասուն օր, աւելի՛, Պատուոյ լերան կատարին,
 Թնդաց ձայնը ձեր երգին, զէնքի ձայնին խառնուած,
 Քառասուն դար, բի՛ւր դարեր, յախտեաններ թող ենչեն
 Անունը ձեր, բառը ձեր, իսէա՛լը ձեր լուսամտ:

Քառասուն օր, աւելի՛, անեղ լերան ժայռերէն,
 Բարձրացաւ կամփը հայուն բռո՛ւնցք-բռո՛ւնցք եւ եղաւ
 Բռնութեան ծեր քամակին՝ վրէժի մուրն հրեղէն,
 Քառասուն ուժ ու աստուած հիւսն ձեզի թող հաւքաւ:

Քառասուն օր, աւելի՛... ապա նաւե՛ր փրկութեան,
 Ծովն է ուրախ, լեռն ուրախ, լսած է մեզ, փութացած,
 Ապետական, գերապանձ, անհունապանձ Ֆրանսան,
 Պիտի մեկնիմք, ձեր հոգին անյաղթ պահակ հոս ձգած:

Հայաստանի՛նն էք դուք ալ, կը պատկանիք լոյսերու
 Հսկայական այն գիրքին, որ պատմութիւնն է հայուն,
 Կը պատկանիք անցեալին, բայց մա՛նուանց դարերու՝
 Տրանք մեզի պիտի տան յաւերժական մեծութիւն:

Գ Ա Ր Ե Գ Ի Ն Բ . Կ Ա Թ Ո Ղ Ի Կ Ո Ս

Յ Ե Ր Ո Ս Ն Ե Ր Ո Ւ Ո Ւ Ղ Ի Ո Վ



1985ը ողջ Հայութեան կեանքին մէջ, ի Մայր Հայաստան եւ ի սփիւռս աշխարհի պիտի մնայ բարձրակէտ տարի մը՝ ներշնչողական ուժով օժտուած, թիմորի պէս մեր Հայութեան զանգուածը խմորող այն տարին, որուն մէջէն մեր ժողովուրդի ազնուազոյն ապրումները, արդարազոյն ձգտումները եւ իր իղձերուն, երազներուն եւ տեսիլքին իրականացման լճակամուծիւնը պիտի ռոպէն, պիտի ջրդեղեն, պիտի գօտեպնդեն եւ պիտի կենսաւորեն Հայ կեանքը ամէնուրեք եւ՝ յարանձն ընթացքով:

Եօթանասունամեակն է Եղեռնին: Ըսինք, կ'ըսենք եւ դեռ պիտի ըսենք այս ամբողջ տարին, մինչեւ ՅՆ Դեկտեմբեր: Եօթանասունամեակի առիթով, ինչպէս ամէն տարի Ապրիլ 24ի առիթներով եւ կ'երեւակայեմ ու անձնապէս կը վկայեմ, թէ աշխարհի մէջ չեղաւ ու չկայ տեղ մը, ուր Տէր-Զօր բառը չարտասանուեցաւ: Պէյրութի մէջ թէ Պարսկաստանի, Միջին Արեւելքի մէջ թէ Եւրոպայի, Հիւսիսային Ամերիկայի մէջ թէ Հարաւային Ամերիկայի, մէկ խօսքով՝ ամէն անկիւն, ուր Հայութիւն կայ Սփիւռքի մէջ եւ մեր Հայաստանի սիրտը եղող Երեւանի մէջ, Հայաստանի ժողովուրդի շրթներուն վրայ՝ Տէր-Զօր, Տէր-Զօր, Տէր-Զօր՝ խորհրդանիշ Հայ տառապանքի, նշանակ Հայութեան Գարդի եւ վկայարան ցեղասպանութեան: Վերապրողները Տէր-Զօրէն ու Տէր-Զօրներէն մեր պարմութեան Հաւաքուեցան ամէն տարի եւ

ամէն տեղ եւ իրենց զեռ շնչող վկայութեամբը վկայեցին, թէ ցեղասպանութիւնը իրականութիւն է մեր կեանքին մէջ, վէրք է մեր մարմիններուն վրայ տակաւին արիւննոլ, եւ թէ անոնք՝ որոնք տակաւին կը ջանան, կը ճգնին, կը տապնապին ցեղասպանութիւնը ուրանալ, տեսան — կոյր պէտք է ըլլային չտեսնելու համար, յիմար պէտք է ըլլային չիմանալու համար — թէ ցեղասպանութիւնը տակաւին թարախով արիւննոլ վէրք է հայութեան կեանքին մէջ, մա՛նաւանդ սփիւռքեան մեր պայմաններուն ներքեւ:

Ես խորհեցայ, որ ինչպէ՞ս կրնայինք մենք Տէր-Զօր բառը արտասանել իբրեւ անուն, ոգեկոչել իբրեւ յիշատակ, զայն հոչակել իբրեւ խորհրդանիշ, առանց անոր թանձրական ներկայութիւնը չօշափելու եւ զայն զգալու, տարբացնելու մեր գոյութեանը մէջ: Եւ ատոր համար ցանկանալով ցանկացայ երթալ Տէր-Զօր, իբրեւ Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ եւ անցնիլ այն ճամբաներէն, ուրկէ անցան անոնք՝ որոնք էին ու չկան եւ որոնց ըլլալուն համար մենք կանք այսօր. որոնք էին ու չկան եւ որովհետեւ իրենք չեղան՝ մենք կանք ու իրենք չեղան, որպէսզի մենք ըլլանք:

Իբրիոյ թեմի Առաջնորդ Սրբազանին եւ Ազգ. Իշխանութեան անօրինութեամբ եւ Սուրիական Արարական Հանրապետութեան բարեխնամ կառավարութեան հոգածութեան ներքեւ գացինք այնտեղ եւ հայութեան անունին ու պատիւին, վերապրումի իրաւունքին անունով պետեղեցինք եւ օժեցինք հիմնաքարը նախապէս շինուած, բայց այժմ խարխուլ այն մատուռին տեղ նոր եկեղեցի մը կանգնելու համար, իբրեւ վկայութիւն հայութեան վերածննդեան եւ զայն կոչելու համար ՆԱՀԱՏԱԿԱՅ ԵԿԵՂԵՑԹԻ: Մեր յարգանքի եւ ուխտի խօսքը ուղղելէ ետքը նահատակներուն եւ այնտեղ համախմբուած բազմահազար ժողովուրդին, ելանք ու գացինք Տէր Զօրէն 15 քիլոմեթր անդին, անապատը, ուր ո՛չ ջուր կար, ո՛չ բոյս կար եւ ոչ շունչ կար: Քաղցինք երկու հազարէն աւելի ժողովուրդով, քաղցինք կէս ժամ անապատին մէջ եւ այնտեղ հոգեհանգիստ ընելէ ետք, բոլորս ալ այրող այդ աւազին վրայ ծունկի եկանք եւ զգացինք մեր ծունկերուն մէջ հողէն վերյատնող այն ողին, որուն ակնարկեց «Յառաջ» զպրոցի սնօրէնը քիչ առաջ, եւ ըսաւ. «Մեր մէկուկէս միլիոն նահատակներուն աչքերը Ձեր մէջէն մեզի կը նային»:

Այո՛, նայեցան եւ այժմ ձեզի՛ կը նային իրենցմով լեցուած իմ աչքերէն:

Այնտեղ ըսինք «աղբամ մեռելոց» եւ այժմ եկած եմ այնտեղ՝ Այնճարի մէջ, եւ վաղը Անթիլիասի մէջ, բոկու «կոչեմ ապրողաց»: Այնտեղ, սիրելիներ, հայոց սուրբ միւսոնով օժուած քարին տակը Մենք զետեղեցինք Հայաստանէն բերուած բուռ մը հող եւ պատաստիկ մը Հայաստանի պազալդ քարէն, որպէսզի գետնին տակ ամփոփուած մեր բոլոր նահատակներուն ոսկորները զգա՛ն հայրենիքի հողին ջերմութիւնը, ներկայութիւնը եւ ուժը իրենց մէջ: Տարինք Մեզի հետ նաեւ, եօթանասուն տարի անապատին մէջ արցունք չտեսած մեր նահատակներուն հողերուն վրայ, Անթիլիասի Ապրիլեան Յուշարձան-Մատուռին քովէն պոկուած բուռ մը հող, որուն մէջ կար ամէն տարի հայ ժողովուրդին արցունքէն զոտացած այն գովութիւնը, որ կենդանութեան շունչին ներկա-

յութիւնն էր այդ բուռ մը հողին մէջ եւ զայն ալ զետեղեցինք օծ-
 եալ քարին ներքեւ եւ ըսինք նահատակներուն, — ձեր այն եղբայր-
 ներէն, որոնց ոսկորները այժմ Անթիլիասի մէջ թաղուած են, ա-
 նոնց արցունքներով օծուած հողէն ձեզի կը բերենք այս մէկ բու-
 աբ, որուն մէջ նահատակ բանաստեղծին բառերով «հիւլէ մը կայ
 Հայկէն, փոշի մ'Արամէն», «Կարմիր հողը»ի դոյութենապաշտ
 երգիչ՝ բանաստեղծին գրիչովը նուիրականացած:

Այսօր, չէինք կրնար Մենք վերադառնալ Անթիլիաս եւ Ան-
 թիլիասէն՝ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան կայքէն Մեր
 Խօսքը ուղղել ողջ Հայութեան, առանց անցնելու... Այնմարէն,
 որովհետեւ այստեղ կան ուրիշ նուիրական ածիւններ, որոնք ու-
 րիշ իմաստով նոյն խորհուրդէն ծուէն մը շունչ կը բերեն մեզի:
 Անոնք՝ Տէր-Չօրի մէջ նահատակուածները, եղան նահատակ հե-
 րոսներ, լուս Հերոսներ, կամաւոր զոհեր, կամաւոր պատարագ-
 ներ, իսկ Մուսա տաղի բարձունքին պայքարող, թշնամիին դիմաց
 Հայուն կամքը, ոգին ստնակոխ ընել շուշող զաւակներուն ածիւն-
 ներն այսօր կը կոչեմ հերոս նահատակներու ածիւններ: Անոնք նա-
 Հատակ Հերոսներ էին, իսկ ասոնք եղան Հերոս նահատակներ, ո-
 թովհետեւ, կրցան մինչեւ իրենց վերջին շունչը վկայել իրենց մա-
 շատումին մէջէն, իրենց արիւն-լեզուով Հայութեան, անոր ան-
 մեռ եւ անընկճելի կամքին իբրեւ վկայ: Այսօր, Տէր-Չօրէն, իրենց
 նահատակ Հերոսներէն, լուս, անմայն եւ պարզ այն խոնարհ Հե-
 րոսներէն, անապատի աւազներէն այս բուռ մը հողն եմ բերած
 իրենց ածիւններուն իբրեւ զով օդ, բսելու Համար իրենց, թէ ա-
 նոնք ալ թէեւ չկուուցան, բայց մեռնելով կուուցան, մեռնելը
 յանձն առնելը եղաւ հոմանիշ ձեր կուուելով մեռնելուն եւ աւաւա-
 սիկ դուք՝ Մարգարեան Մամուէլ, Մարգարեան Պաղտատար, Տա-
 նայեան Յարէթ, Գոմանեան Յովհաննէս, Լուրջեան Յովհաննէս,
 Պայրամեան Միսաք, Նգրուրեան Գրիգոր, Անաէքեան Պօղոս, Գա-
 րակէօզեան Յակոբ, Պօյաճեան Մամուէլ՝ ընդունեցէք հողն այս
 Տէր-Չօրի անապատէն, իբրեւ շունչը անոնց, որոնք մեռան կա-
 մաւորապէս թէեւ կրաւորապէս, ձեզի՛, որ Հերոսաբար ինկաք
 ձեր ժողովուրդին Համար, սրգէսգի իրենք եւ դուք ապրիք եւ դառ-
 նաք նոր վկաները անմահ Հայութեան:

Այսօր այն նոյն հողը, որ Հայաստանէն տարի Տէր-Չօր եւ
 Անթիլիասէն արցունքոտած հողը խառնեցի Հայաստանի շնչող եւ
 շունչ տուող հողին, այդ նոյն հողէն աւաւասիկ կը բերեմ փոքրիկ
 բուռ մը, զարձեալ իբրեւ վկայութիւն մեր Հաւատարմութեան՝
 մեր Հերոսութեան հանդէպ, եւ իբրեւ սէր՝ այն Հայրենիքէն, ո-
 թրոն Համար դուք ինկաք. ու չկայ երկու Հայրենիք, կայ միայն
 մէկ Հայրենիք, այլապէս՝ չկայ Հայրենիք: Հայաստանի ու Անթի-
 լիասի հողերէն այս բուռ մը հողը ընդունեցէք իբրեւ մեր սիրոյ
 եւ Հաւատարմութեան կնիք եւ ներշնչողական ուժ, ձեր մատուց-
 ներուն իբրեւ խունկ:

Այսօր, Ծօթանաստուածմեակի այս Հանդրուանին, մենք՝
 որ այլեւս վճռած ենք իբրեւ Հայութիւն չնայիլ, չմխիթարուիլ
 միայն անցեալին մեզի ներշնչած դաղափարներուն, ոգիին, ձրգ-
 տումներուն, ապրումներուն շունչովը, այլ նաեւ այդ շունչը տա-
 բածել մեր նո՛ր կեանքին մէջ, ու մեր զայիբքին Համար, այսօր ե-

կած են նաև այստեղ յատուկ կերպով, ո՛չ միայն յարգանք ընծայելու իրենց՝ կամաւորապէս կամ Հերոսաբար նահատակուածներուն, այլևս պատիւ եւ պարտք դնելու ձե՛ր վիզերուն: Մա՛նաւանդ դուք՝ դպրոցականներ, դուք՝ արեւոյշներ, արիներ եւ երիտասարդ հայութիւն, եթէ մենք, պահ մը առողջ կերպով մտածենք, թէ այստեղ կենալով, այստեղ ճառ խօսելով, հողեհանդիստ կատարելով պահանջատիրութեան շեփոր ու փող հնչեցնելով հայութեան դատը կրնանք շահիլ, կը սխալինք: Այս բոլորը անհրաժեշտ են, սխալ մի հասկնաք դիս, բայց այս բոլորը բաւարար չեն: Աստուած տուած է մեզի մեծ կարելիութիւն, մեծ առաւելութիւն, զոր կ'ուզեմ ձեզի հետ բաժնել:

Աստուած ու մեր ժողովուրդը տուած են ինծի կարելիութիւնը ճանչնալու մեր ժողովուրդը քիչ մը ամէն տեղ Սփիւռքի շորս տարածքին վրայ: Եղայ գրեթէ Միջին Արեւելքի բոլոր երկիրները. եղայ Եւրոպա, դացի մինչեւ Աւստրալիա, հասայ մինչեւ Նոր-Ջուրնտա, դացի Գանատա, դացի Հիւսիսային եւ Հարաւային Ամերիկաները, երեք անգամ եղայ Հայաստան, աշխարհը քիչ թէ շատ լայն Նորիզոնով ճանչնալու բարտը ունեցայ, եւ կ'ըսեմ ձեզի.— Մենք սակաւին պէտք ունինք, կարիք ունինք, կենսական հրամայականը կը հնչէ մեր ականջներուն՝ այնպէ՛ս գորանալու, միջազգայնորէն այնպէ՛ս արժէք գառնալու, որ մեր ձայնը միայն Այնճարի այս կանանչացեալ անդաստանին մէջ չհնչէ ու չարձագանդէ իմ ու ձեր ականջներուն մէջ, այլ հասնի հոն՝ ուր պէտք է որ հասնի, այստեղ, ուր աշխարհի հարցերուն համար որոշումներ կը տրուին, խաղեր կը խաղցուին: Մենք պէտք ունինք մեր երիտասարդութեան այնպիսի զարգացման, այնպիսի բարձրացման, որ անոնք կարենան օտարին հետ անո՛նց լեզուով, անո՛նց հաւասար եւ երբեմն անոնցմէ աւելի արժեցնել մեր ներկայութիւնը եւ պարտադրել մեր իրաւունքը եւ ոչ թէ հողեկանօրէն հրճուիլ միայն ճառ խօսելով. ո՛չ. աշակերտներ, դուք լաւ կը զգաք, որ աշխարհի մէջ կը տիրեն անո՛նք՝ որոնք աշխարհի պտուտակները դիտեն զարմնել: Այսօր, դիտութեան մէջ, քաղաքադիրտութեան մէջ, ճարտարագիտութեան մէջ, մէկ խօսքով այն բոլոր բաներուն մէջ, որոնք աշխարհին վրայ ազդեցութիւն կը ներգործեն, հայութիւնը ներկայ պէտք է ըլլայ. եւ՝ այդ ներկայութիւնը ձեզմո՛վ պէտք է ըլլայ, նո՛ր սերունդով: Մենք եթէ երբեք չկարենանք այդ հրամայականը զգալ նահատակներէն, հաւատացէք, պիտի շարունակենք նոյն «Տէր ոգորմեա»ն երգել. լաւ է, եւ միշտ պէտք է երգենք, նոյն «Ի վերին Երուսաղէմ»ը երգել, լաւ է եւ միշտ պէտք է երգել, նոյն «Կիլիկիա»ն, լաւ է որ երգենք, ու միշտ պէտք է երգենք, նոյն «Սարդարապատ»ը, լաւ է ու միշտ պիտի երգենք, բայց ո՛չ հոն կենանք. պէտք է վեր բարձրանանք եւ այնպիսի ներկայութիւն դառնանք, որ մարդիկ չկարենան այլեւս խաղ խաղալ դրան հետեւ ու մենք դուրսը մնանք եւ դուռը բացենք: Պէտք է ներս մտնենք, միջազգային կազմակերպութեանց մէջ, ամէն տեղ: Ուժ ենք մենք՝ ուժ Սփիւռքի մէջ. անոնք որոնք կ'ըսեն, թէ Սփիւռքը կը մայեցնէ մեզ, ճիշդ կ'ըսեն, եթէ մաշիլ ուզենք: Բայց եթէ կամք ունինք, ու հակակամք՝ մայելուն դէմ, Սփիւռքը մեզի համար լայն, շատ լայն կարելիութիւններ կ'ընծայ-

յէ, Եկէք այսօր առարկայապաշտ ըլլանք, իրապաշտ դառնանք եւ կարենանք մեր երիտասարդութեան ըսել:— Մեր Հայաստան Հայրենիքի ժողովուրդը, երիտասարդութիւնը, գիտութեան բարձր աստիճաններուն բարձրացող, չունի յարաբերութեան այն լայն կարելիութիւնը, զոր Սփիւռքի Հայութիւնը ունի այսօր: Անոնք ամփոփուած են մեր Հայրենիքին մէջ, սիրտը տրիւնով լեցուն է, կը տրտիէ ուժեղ, բայց քաղաքական պայմաններուն բռնամտով անոնք չունին այն լայն կարելիութիւնները, որոնք ընծայուած են մեզի այս աշխարհի չորս տարածքին վրայ, եթէ միայն գիտնանք Հայօրէն օգտագործել եւ ոչ թէ անոնց զոհ երթանք անգիտակցօրէն:

Ինչ որ Ապրիլեան Եղեռնի զոհերը Տէր-Չօրի անապատներուն մէջ — ու կը յիշեմ մեզի տեղերը, որովհետեւ երկու տարի առաջ այ այդ տեղերէն անցայ ես — Ռաւ-ուլ-Այն, 120.000 զոհերով: Եստատօրիէ ձորը, 70.000 Հայ ժողովուրդի զուակներու զոհերով: Տէր-Չօր, 200.000 Հայ զուակներու Եփրատ գետին մէջ ջրամոյն կամ անապատին մէջ աւազին վրայ ջարդուկոտոր վիճակի մէջ: Մէսքէնէ, 60.000 Հայութեան զոհերով, եւ տակաւին Միջագետքի եւ աքսորի ճամբաներուն վրայ միլիոնները երբ ինկան, անոնք կըրցան գոնէ ըսել:— Մենք մահաւնայով կըրցանք վկայել Հայութեան անմահութեան մասին, իսկ դուք երիտասարդներ, դուք կեանքով պիտի վկայէք այն բանի մասին, որուն Համար մենք միայն մահով կըրցանք վկայել: Մենք մեր արիւնք տուինք, դուք մեր խելքը պիտի տաք: մենք մեր շունչը տուինք, դուք մեր կամքը պիտի ընծայէք: մենք մեր գոյութեան արմատները ցամքեցուցինք աւազներուն մէջ, դուք մեր գոյութեան ու այդ գոյութեան տիրական ուժովը, այսինքն՝ զործով պիտի ըսէք, թէ մենք այլեւս մահուան դացող ժողովուրդ չենք ուր այ ըլլանք:

Երբ անապատին մէջ էինք, ու ա՛յլ պիտի բաժնուէինք, «Սարդարապատ»ի երգը երգելէ առաջ դարձայ եւ նահատակներուն խոստում մը տուի եւ ուխտ մը կատարեցի: Ըսի:— Այլեւս այնքան ատեն որքան շունչ կայ մեր մէջ, մենք պիտի չթողունք, որ ջարդ եւ սպանդ ըլլայ մեզի Համար: Մենք ոչխար չենք, որ մորթը թրւինք, մենք մարդ ենք, մարդ՝ կամք ունեցող, Հոգի ունեցող, գաղափար ունեցող, Հաւատք ունեցող: Այլեւս այս ժողովուրդին Հետ, վեց դարերու ստրկութեան ոչխարացնող ոգին թաղեցինք, թաղեցինք խոր, անյարութիւն թաղեցինք: Հաշտուածութիւն, Համակերպութիւն, կամատր սպանդ վայել չէ Հայութեան: Օսմանեան, թրքական լուծին մեր երեսին դրած լայակն էր, որ պատմա, դուք սեւ գոյնն էր, որ սրբեցինք անապատին մէջ: Եւ Հիւսի դաշտին մէջ, ինչ բրիք. անապատը պարտէզի վերածեցիք, անտառութիւնը կեանքի փոխակերպեցիք: պատիւ՝ մեզի: Բայց պատիւը բաւարար չէ. մի՛ գոհանաք, երբեք մի գոհանաք. գոհացումը նահանջ է՝ տեղաբայլ է: Դուք պէտք է այնպէս ըլլաք, երիտասարդներ, երիտասարդուհիներ, որ կարենաք ըսել, թէ մեզի Համար վերածնութիւն կոչուածը մահուրնէ վերածնիլ մը չէ, անցեալէն վերտին ներկային գայ մը չէ, այլ՝ ներկային գէպի ապահով երթալ մըն է: Մենք այլեւս մահուան թափօրներուն գացող

ժողովուրդը չենք, յողթանակի թափօրին ակնդէտ ու մանակից հայերն ենք:

Այսպէս, երբ յարգանք ընծայեցի Եօթանասունամեակին տախտակով, յանուն հայ ժողովուրդին, Տէր-Չօրի մէջ նահատակուած հերոսներուն, ուղեցի նաեւ յարգանք ընծայել Մուսա տաղի դաւակներու հերոսութեան այն կամքին, գոյամարտի այն պողպատեայ կամքին, որուն խորհրդանիշն են ձեր հերոսները: Ո՞վ պիտի յիշէր տանտութեբը, ո՞վ, եթէ իրենք ալ եաթաղանին տակ իննստին մէկուկէս միլիոնին հետ միասին. չինկան, տեսան մահը, չտարտափեցան. հակադարձեցին. եւ այսօր, Եօթանասուն տարիներ ետք, իրենց անունները քանդակուած կը մնան իրրեւ ներշնչման աղբիւր մեզի համար: Պարզ գիւղացիներ էին իմ հայրերուն ու մայրերուն պէս, ինծի եւ ձեզի պէս մարդիկ էին, անուսում թերեւս, բայց հայութեան այն պայքարի ոգին՝ Հայկէն ժառանգուած ազատութեան կամքը ինչին չենթարկուելու հայտն ձեր կեանքին, վարդանան կամքը, Անդրանիկեան հոգին եւ մեր Ֆեոտայիներու ոգին իրենց մէջ կ'ապրէր. կ'ապրէր այնպէս՝ ինչպէս արիւնը երակներուն մէջ: Լեռ ելան ու լեռնէն լերան պէս ծառացան սելի պէս եկող թուրք խուժան բանակին դէմ. ինկան, բայց չկորան եւ այսօր կան ահաւասիկ ձեր դիմաց պայծառ ու պայծառացուցիչ կերպարով:

Հետեւաբար, Հայրապետական իմ պատգամս Տէր-Չօրէն Լուք այլեւս իմ պատգամս չէ, պատգամն է մեր Տէր-Չօրի նահատակներուն: Անոնք կ'ըսեն. — «Ինչէք, բայց մեզի պէս մի իննստը. ինկէք Մուսա տաղի հերոսներուն պէս՝ եթէ պէտք ըլլայ, վանի հերոսներուն պէս՝ եթէ պէտք ըլլայ, Երպին Գարահիսարի, Սարդարապատի, Բաշ Ապարանի, Ղարա Քիլիսէի — եւ չեմ գիտեր դեռ զալիք ինչ օրերու օրհասական պայքարներու մէջ — հերոսաբար նահատակուեցէք եւ ոչ թէ մեզի նման զոհուեցէք, մորթուեցէք, ջարդուեցէք, եաթաղանուեցէք»:

Այս է Տէր-Չօրի պատգամը ձեր բոլորին. քալեցէք այս ուղիով եւ, հաւասացէք, հայութեան կամքը կը յաղթէ, որովհետեւ եթէ մենք գիրենք ողբանք եւ ողբալով գոհանանք, գիրենք յարգած չենք ըլլար: Մենք այսօր կ'ըսենք մեզի, կը կոչենք մեզի՝ ապրողներու. քալեցէք իրենց ուղիով, քալեցէ՛ք աշխարհի մէջ նոր ու, մանաւանդ՝ ազդեցիկ դիրքերու եւ միջոցներու ձեռքբերումով, որպէսզի կարենաք հայութեան դատը արդարօրէն, ազդուօրէն եւ արդիւնաւորաբար հետապնդել եւ ոչ թէ անով միայն խօսիլ ու զոհանալ: Քալեցէ՛ք Մուսա տաղի հերոսական ոգիին լուսացոյց ճանապարհով դէպի մեր լուսեղէն ապագան:

Այննար

ԳԱՐԵԳԻՆ Բ. ԿԱԹՈՂԻԿՈՍ

Ա. Զ Օ Պ Ա Ն Ե Ա Ն

ՖՐԱՆՑ ԱԵՐՓԻԼԻ

Գ Ի Ր Ք Ը...



ՕՏԱՐ ՀՆՂԻՆԱԿՆԵՐ ԵՒ ՀԱՅ ԱԶԳԸ

Ուրախութեամբ իմացանք, որ Յրանց Վերֆելի հոյակապ վէպը («Ճն-
պել Մուսայի քառասուն օրերը»), որուն թարգմանութիւնը կը հրատարակէ
Եղիպատտի «Արևի»-ը, անգլիական թարգմանութեամբ հրատարակուած է Ա-
մերիկայի մէջ, եւ ամերիկեան մեծ թերթերուն մէջ արդէն անոր նուիրուած
են թէ՛ այդ գործը եւ թէ՛ հայ ժողովուրդը փառաբանող յօդուածներ:

Կարելի է չգործանալ, թէ ինչպէ՞ս հայ վիպագիր մը չխորհեցաւ այդ
աջանելի նիւթէն գրական գործ մը հանել, ու նոյն օտան կարելի է հրախ-
տագրութիւն չզգալ այդ աւսարիացի յայտնի գրողէսին հանդէպ, որ իր
տաղանդն ու իր հոյակն ի նպատակ դրեր է մեր ցեղի ժամանակակից պատմու-
թեան ամէնէն իրապէս դիւցազնական ու ամբողջութեամբ մէջ գեղեցիկ ու
յուզիչ դրուադին: Երանի՛ թէ գտնուէին հայեր, որ դիւցազնական գրուա-
ֆրանսերէն թարգմանութեան մը հրատարակուէր: Այդ դիւցազնական գրուա-
դը հայկական ու ֆրանսական է միանգամայն ու հայ ու ֆրանսացի ժողո-
վուրդներու բարեկամութիւնն ամբողջելու լուսագոյն միջոցներէն մին է այդ-
պիսի գրքերու տարածումը: Այդ գիրքը նոյնպէս մեծ զինք մը կրնայ ըլլալ
մեր օտարաբարտու նոր սերունդին մէջ հայ ցեղի կանոնէպ սիրոյ եւ յարգան-
քի, հուշատարմութեան զպատմաները վառ պահելու համար («Ամսօր»,
1935, թիւ 1-2):



«Յրանց Վերֆելի գրքիմ առփիս» տխրոտուած յօդուածի մը մէջ, զոր
հրատարակեց Փահիրէի «Արև» թերթը, Միքայէլ Կիւրնեան — որուն կերթ
քրչին՝ Ծուլութեան շրջանէ մը յետոյ՝ ասորիէ մը ի վեր աշխոյժ ու բեղուն
զարթումը հանուշով պէտք է ողջունել — այն կարծիքը կը յայտնէր: Թէ

«Եայ ժողովուրդիմ նակատագիրն եղած է՝ սկիզբէն մինչև այսօր՝ անբախտութիւնք, եւ թէ՛ Հին ու նոր ժամանակներուն մէջ չի կրնար ունեցած ենք ազէտներ — ու զրեթէ միայն ազէտներ է, որ ունեցած ենք՝ ըստ իրեն — «ստոնք հետեւեալն եղած են այ թէ՛ մեր ցեղային քերութեանց, այլ մեր ծննդակից անբախտութեան», ու այս թիւղին իբր փաստ մեր վերջին ժամանակներու պատմութենէն կը բերէ երկու օրինակ, որ երկուքն ալ դէպքերուն իրականութեան համապատասխան կերպով չէին ներկայացուած: Եօդուածին երկրորդ կէտին մէջ, Կիւրճեան կը հարցնէր, թէ հայուն այդ «սեւ ճակատադէրը անարբազրելի» է, եւ այդ հարցման կը պատասխանէր հաւատարմոր ու լաւատես պարբերութիւններով, ուր ի վեր կը հանէր Աղէտէն վերապրող մէկ միլիոն Հայերու «Ռոբորդային Հայաստանի մէջ Ռուսիոյ բարեկամութեան ու պաշտպանութեան շնորհիւ խաղաղ ու սպառնով զոյութիւնը» եւ Վերֆէլի «Մուսա տաղի քառասորեակը»՝ հայր փառաւորող հոյակապ վէպին երեւումը, որոնց մէջ ան կը տեսնէ մեր զարաւար անբախտութեան վերջ գտնելու մօտ ըլլալուն, մեր խժոռ ճակատագրին «ժողովի դէմքին մայրապետի փոխուելու» արամազրութիւն մը ցոյց տալուն ապացոյցը:

Այդ յօդուածը, որուն մէկ կէտին լիովին համաձայն եմ, բայց որուն մէջ յայտնուած ընդհանուր տեսութեանց, Հիմնական դադափարներուն համաձայն չեմ, առիթ տուաւ Տիկին Վիքթորիա Արշարունիին՝ նոյն «Արմուսի» մէջ հրատարակելու յօդուած մը, ուր կը պաշտպանէր Կիւրճեանի թիւղին ներհակ թեզը:



Կիւրճեանի յօդուածին մէջ կայ մէկ կէտ մը, ինչպէս ըսի, որուն համաձայն եմ. այն է՝ թէ Վերֆէլի վէպը խորապէս ուրախապիտ զէպք մըն է, մեծ ու բարեբար իրողութիւն մըն է հայ ժողովուրդի կեանքին մէջ, ո՛չ աւելն տեսակէտով աննախընթաց՝ իբր հայտնաբերուած արտայայտութիւն, այլ իբր հայ դիւցապական ողբերգութենէն ներշնչուած «զօր վէպ» հանճարեղ զրաքէտի մը կողմէ գրուած, եւ իբր արտակարգ տարածում ունեցող հայապաշտպան գործ, իրապէս աննախընթաց, Դիւսիլ տուած եմ արդէն՝ «Անուհիտ» մէջ եւ այլուր, թէ չգտնուեցաւ զեռ հայ զբաղէտ մը, որ Արամիանի եւ Բաֆֆիի, Երեմիայի եւ Քիլիստիցիի արժանաւոր յաջորդ, 1915ի հայկական տրամադրութեանց թոցառիկ, բայց տարօրինակապէս դեղիցիկ էջերուն մէջ՝ լիովին արտայայտէր: Համատեղի «Սպիտակ ձիւտը», որ այնքան ազուր ու առողջ գլուխներով սկսած էր եւ որ կը յաւայինք, թէ պիտի յանգէր ճիշդ այդ մեծ նիւթին արտայայտման ճիշդ մը, թուցաւտարողնեցաւ յաջորդ գլուխներուն մէջ եւ վերջ ի վերջոյ մեաց անաւարտ: Օրական այդ ճիշդ փորձեց «Մնացորդաց» մեծ վէպին մէջ, բայց ան ալ իր այդ գործը, որ օճէր լուսնական կամ ուժեղ մասեր, Եանրաբեռնեց բուն նիւթէն դուրս շափազանց շատ — ու շափազանց երկար ու մանրակրկիտ նկարագրուած — քաններով, ու նոյնպէս գործը թողուց անաւարտ: Եւրոպացիներէն, տանիմարքացի Տիկին Ինկա Նալպանդեանի «Նորօր» արիւնը կը պատայ վէպը, համարեան շրջանի Հայկական տրամէն ներշնչուած, յարգելի գործ մըն էր, որ Ժորժ Պրանտէսի մէկ ներդրումը յօդուածին արժանացած, սքանախեան ներկրներուն մէջ յաջողութիւն գտած եւ բաւական տարածում ունեցած էր, բայց իբր զբաւան գործ՝ Վերֆէլի հսկայ երկին հետ համատեղեան չի կրնար գրուել: Օրիորդ Փօլ Հանքի Պորտոյի «Տրապիզոնցի»

Ամբաստանք ազնիւ ու սրտաշարժ փորձ մըն էր 1915ի Հայկական մարտիրոսութեան ահագնութիւնն ու Հայ հայրենասիրական երազներուն ու պայքարներուն զեղեցկութիւնն արտայայտելու, եւ անոր քանի մը ամիսներուն մէջ — ինչպէս այն ամբողջ սքանչելի դլուխը, ուր տարագրութիւնը նկարագրուած է եւ որուն նմանը դեռ Հայ մըն ալ չէ գրած — երեսն կու գար փափուկ եւ տոհմիկ տաղանդ մը, բայց գործը ունէր թոյլ մասեր, հերոսուհիին հոգեբանութիւնը՝ հակասական տարրերով էր կազմուած ու վերջին դլուխին մէջ մանաւանդ՝ անհարադատ կամ աններդաշնակ կերպով էր պարզուած: Վսեմ նիւթ մը ազնուօրէն արտայայտելու այդ գոգելի փորձն ալ ունեցաւ Փրանսայի մէջ որոշ յաջողութիւն, Լուի Պերթրանի եւ Հանրի ար Բէնեթի պէս մեծ գրադէտներու ներշնչեց գրուածուայից յոգուածներ, բայց հեռու կը մնայ այն բարձրութիւնէն, ուր հասած է Վերֆէլի խորաթափանց, լայնատունջ, բազմատարր գործը: Թէ ինչքան հարազատ ու լիակատար կերպով Վերֆէլ ըմբռնեալ է հայկական տրամին ներքին նշանակութիւնը եւ մուսլի զեղեցկութիւնը, թէ ինչպիսի բարձր հանճարով եւ խորունկ սրտով այդ տրամը երգած ու մեկնաբանած է իր վէպին մէջ, թէ քանի ունի լիզուններու թարգմանուած այդ վէպը ի՛նչ անսահման ծառայութիւն մըն է մեր ժողովուրդի վարկին եւ անոր ազգային դատին մատուցուած, ասիկա ես ինքս ըսած եմ ի պատիւ Փարիզ արուած ճաշկերոյթին արտասանած ճառիս մէջ, եւ ուրիս եմ տեսներով, որ Կիւրճեան նոյն խանդավառ զոհունակութեամբ եւ սքանչացածով ու նոյն խանդավառ երախտագիտութեամբ կ'արտայայտուի այդ կոթողական գործին հանդէպ:

Համաձայն չեմ ասկայն իր յոգուածին հիմնական թեզին, որու համեմատ մեր ժողովուրդը անբախտ ծնած է, անբախտ եղած է իր պատմութեան ծագումէն մինչեւ այսօր, եւ իր բոլոր ճախողուածներն ու աղէտները ոչ թէ իր թերութեանց, այլ միմիայն իր անբախտութեան հետեւանք են:



Գտնուածով Վերֆէլի գործին, պիտի ըսեմ նաեւ — ինչ որ Փարիզ իրեն ի պատիւ մեր տուած ճաշկերոյթին ըսի արդէն իր իսկ ներկայութեան — թէ այդ գործին արտակարգ զեղեցկութիւնը յառաջ կու գայ մեծ ճիւղի մը եւ մեծ տաղանդի մը իրարու համընկելուն: Այդ վէպէն առաջ, Վերֆէլ ուրիշ վէպեր գրած ու հրատարակած էր. անոնց մէջ ալ իր տաղանդը արդէն յայտնուած էր, բայց անոնք՝ եթէ միջազգային ընտրանիի մը մէջ զմահատուած եւ իրեն տուած էին մեծ ու ինքնատիպ գրագէտի գիրք մը, չէին ունեցած Մուսսուսի ճամբարահայտի տարածումը, մեծածաւալ հռչակը, չէին յառաջ բերած անոր յարուցած իրարանցումն ու յուզումը: Մուսսուսի հազուադէպ յաջողութիւնը (բազմաթիւ լեզուներու թարգմանութեան եւ բազմազգային օրինակներով տարածման երեւոյթը) կը բացատրուի այնքան զրազէտին հորինակներով ու մտաւորական ամենաբարձր յատկութիւնները, որքան հայկական տրամին սրտանմանիկ վսեմութեամբը («Ամսիխ», 1935, թիւ 3-4):

ԱՐԵՎԻ ԶՕՊԱՆԵԱՆ

Ա. Ե Ր Կ Ա Թ



Մ Ո Ւ Ս Ա Տ Ա Ղ

Լեռը հա՛ն է, աճյաճըրար, խռավակած,
 Այլ լուսընկան անոր ծոցէ՞մ՝ իբրև բոց
 Սուրբ կանթեղի՛ կը պլպլայ.
 Կողերն ի վար իջեր է հոտը վերջին,
 Աստեղածոր քամուած է սիրտը սրիկզին
 Արցունքի մուշ լինին վրայ:

Լեռը հոգի մ՛ուներ լոյսի եւ ճիւղի
 Անդունդներէն աւելի խոր, ամենի
 Պատըսպարան արծուերնակ.
 Հոգին անանց՝ որ կայծակով գարրմեցին
 Սուրբ վրձնիս ազատութեան երազին
 Յաղթանակէ յաղթանակ:

Լեռը սիրամ էր ցեղին օժուած համբոյրով
 Աստուածներու. երկինքն ի վեր դէպի ծով
 Անհուն աղեղ պրկւած.
 Անոր կրակէն, անոր մետէն գոհարեր
 Դեռ կ'արիւնին ապաստին մէջ կուրծքեր
 Ռազմիկներու մահացած:

Լեռք միշտ համ կարծես ա՛լ խոնջ երագէ,
 Խոնջ ա՛լ յոյսէ՞՞՛ գոր քեւն անցնող կը հիւսէ
 Ամպին մրտայլ արցունքով .
 Կը տեսնէ վարըս զհուզերու ճամբուն վրայ
 Կարաւաններ աւ դեռ բացաւիլը կը զգայ
 Արշալոյսին անվրդով :


Ա՛լ չ՛ըսպասեր . ժամանակին սլաքը մութ
 Շարժում չունի գոզցես ծիրին վրայ կառայտ .
 Ծովը միայն պիտ՛ բսէր,
 Թէ ի՞նչ եղաւ ճիւղաքիւ ճար հետում,
 Որ ծանրաքեւ վընհիտ գանձովն աստղերուն՝
 Ոյծէերն ազին կ՛սկօւէր :

Միայն կը զգայ, որ ծոցին մէջ կարելի էր,
 Ուր ճեղքին աստղաքիւր հերտներ,
 Կը շողայ ցարտ աւ առկայծ
 Լուսընկան որբ՝ մահակ անքեղ ընդունայն,
 Երբ ձեռք մը չիմջ գերեզմանէ գերեզման
 Անոնց անհուն է ժողված :

Երկնատեսիլ միմչեւ իր ծագն է հասեր
 Հրդեհին ծախսն . արշալոյս է քէ բոցեր
 Վրիժառու . լեռն մարտէ
 Կը մայի ծով . աւ կը տեսնէ որ մաւին
 Առագաստները մրրկաքեւ կը բացուին
 Յիշատակա՛վ լուսելէն :

Ու կը սպասէ աւելի խոր աւ մրքին
 Անդունդներով, իր ցաւին մէջ՝ ահագին,
 Որ երբոր ծամը հասնի,
 Իր ծոցը լա՛յն բանայ եւ սո՛ւրբ ստեղծում,
 Ընդունի վեհ դիւցազներու ճոր անհուն
 Իրան կրակներ արհունի . . .

Հ. Գ. ՂԱԶԱՐԵԱՆ



ՄՈՒՍԱ ՏԱԶԻ
ՔԱՌԱՍՈՒՆ ՕՐԵՐՈՒ
ԱՆԳԼԵՐԷՆ
ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆԸ



Գրական աշխարհին մէջ, յապաւելու եւ նենդափոխելու արարգեհեռու ետին մարդիկ միշտ տեսնուած են բռնակալական կարգերուն դիմացած զրոյթներուն ուրուականները, կը պարզուի սակայն, որ նոյն բարեբեր բացատուած չեն նաեւ ոչոքի կոչուած ազատ աշխարհի մէջ, ինչպէս թիւերու անտարկիք լեզուով մը ցոյց տուած է սրբազան մատուցական Հայկազն Գ. Ղազարեան:

Ղազարեան «Էլայրնի» ամսագրին մէջ կատարած է իր անտանտանաջամբ, բոտոսուն ու անլի տարիներ ստալ, բայց կրեւի անոր լոյսին սակ ոչ մէկ բարեփոխում տեղի ունեցած է, ոչ մէկ բարեփոխում կըցած եւք ընել աւել ու վերջին վէպին անգլիքին թարգմանութիւնը կը շարունակէ սպասել ու վերապահել նոյն յապտուածներով, աղաւաղումներով ու նենգափոխումներով:

Այս առիթով, «Բագն» պատե՛հ Համարեց զերտան ուշադրութեան յանձնել Հայկազն Գ. Ղազարեանի կատարած անտանտանաջամբները, ա՛յն յոյսով, որ Հայկական փակ շրջանակէն դուրս ելլելու փորձեր ընող Հայ երիտասարդները այս մարդին մէջ եւս պիտի փութան ձայն բարձրացնել ու փորձեն դարձանել տալ վերջին վէպին անգլիքին թարգմանութեան մէջ թոյլ արուած թղտուկաւ նենգափոխումներն ու Հայազնա յապտուածները...

Ճրանց վերջինի «Մուսա տազի Քառասուն օրեր»ը գրքի մասին գնահատականներ գրուեցան Տարբի Քանֆիլտ Տիրլըրի, Հէնրի Սայալը Քէնպպիի եւ «Թայմ» պարբերաթերթի կողմէն: Իսկ Հէնրիք Վիլլէմ վան Լոււն ըսաւ:

«Ազգերու Լիկը 40 տակաւ լեցուն տեղեկագիրներ ստացաւ Հայկական Հաւանանքներու մասին, որոնք, սակայն, այդ գրքին կատարած դերին մէկ հազարերորդին չափ իսկ արժէք չունեցան: Աշխարհի զգացումը սխալ ճամբայի մէջ էր, պէտք էր որ ուղղուէր, եւ վերջինի դիրքը ըրաւ այդ բանը»:

Ղուխ Կանէթ, Նոյեմբեր 30 1934ին, «Նիւ Եորք Հերալտ Թրիպիւն»ի մէջ գրեց: «Մուսա տազը» մարդկային հերոսութեան պատմութիւն մըն է: Անիկա Հայկական պայքարին այն տեսակ երկայն կեանք մը տուաւ, որ արեւմտեան գրականութեան մէջ ընաւ եղած չէր»:

«Նիւ Եորք Թայմ»ը, Նոյեմբեր 13 1935 թիւին մէջ տեղեկացուց, թէ «Մուսա տազը» արգելուած էր Գերմանիոյ մէջ: Միեւնոյն ատեն, սակայն, Հոս, Ամերիկայի հազար հողին վրայ, երբ նոյն-

իսկ Գոնկրէսը ինքզինքը իրաւասու չի գտար ազատութիւնը սահմանափակող օրէնքներ զուէարկելու, թուրքին թունաստը լուծելը հասաւ մինչեւ այս օրերը եւ արդիւրեւցաւ ՎՄուսա սապի շարժանը կարի վերածուելը:

Հեղինակը՝ Յրանց Վերֆէլ ստացաւ նիւ Եորքի մէջ «Հրէական Պորում»-ի կողմէ Ալյնըլթայնի մետալը, որպէս վեպագիր եւ թատերագիր: 1936 Մարտին ան Ամերիկայէն վերադարձաւ Վիեննա: Բայց շատ շանցած, քաղաքական դէպքերու ստիպման տակ, փոխադրուեցաւ Յրոնսա, Գոթ Երկր, երկու ամիս մընայ Մարտէլլ, ուր գերման կեսթափոն հարածեց զինքը: Վերֆէլ մասամբ քաշուով, մասամբ օթոյով, անցաւ Մարտէլլէն Սպանիա, Պարսելտոն եւ անկէ, օդանւտով հասաւ Լիզպոն (Փորթուկալ), եւ Հոկտեմբեր 14 1940ին եկաւ Ամերիկա երկրորդ անգամ:

Մաղթելի է, որ Յրանց Վերֆէլ իր այս երկրորդ գալուստին յաջողցնէ իր գրքին շարժանկարը եւ շտապ լրացնել տալ նաեւ անոր անդերէն թարգմանութեան մէջ եղած պակաս մասերը, զորս պիտի մատնանշեմ ստորև:



Հայերու համար կարեւոր այս գործին՝ Վերֆէլի ՎՄուսա սապի քառասուն օրերը գրքին գերմաներէն բնագրէն անդէրէնի թարգմանութեան ժամանակ, անգլիացի թարգմանիչը՝ պարոն շէֆրի Տընլայփ դուրս գաւ է գրքին մէջին 312 պարբերութիւններ, որոնց գումարը կ'ընէ 4062 տալ, այլ խօսքով՝ ՎՄուսա սապի ամօրեւորէն քարտուստիւրը կը ներկայացնէ բնագրին միմիայն 89%ը, եւ քարտուստիւրը գնդած կամ զնգած է գրքի պարունակութեան 11%ը:

Ձթարգմանուած պարբերութիւնները, անդերէն տպագրուած էջերու հաւելով, կը դրուեն 90 էջեր, իսկ գերմաներէն բնագրի էջերու հաշուով՝ 110 էջ, Գոան յուկուսածական էջերու տարբերութիւնը յատուկ կու գայ լեզուներու կազմութենէն եւ անոնց տպագրական նկ կամ լայն շարուածքի զանազանութենէն:

Անդերէն թարգմանութեան մէջ սրբապարտած են նաեւ 53 սխալներ, որոնցմէ գոնէ մէկ մասին պիտի անդրադարձանք:

Արդար ըլլալու համար աւելցնենք, որ մօտաւորապէս 1000 էջոց ընդարձակածաւալ եւ ստուարահատոր գրքի մը տաժանելի թարգմանութեան մէջ սխալները թերեւս անխուսափելի եւ ներելի են, եթէ այդ սխալները դիտումնաւոր կերպով եղած չեն, եւ կամ՝ եթէ միայն տպագրական սխալներն են, եւ կամ՝ զի մը տարբեր մեկնաբանութիւններ են, նուազ համազօր բառերով: Բայց երբ կան ստութիւններ եւ նախադասութիւններ, որոնք չեն պատկերացնիր Հեղինակին գերմաներէն լեզուով արտայայտած միտքը կամ կը պակտեցնեն եւ կը փոխեն անոր իմաստը, պէ՛տք է որ մտնան, ենք:

Գրքին կրճատեալ անդերէն թարգմանութիւնը կը բաղկանայ 82 էջերէ, որոնց վրայ էթէ անընդուն շթարգմանուած մասերու 90 էջերը, ամբողջական անգլերէն թարգմանութիւնը պիտի ըլլար 914 էջ:

90 էջերու կրճատումով, տպագրական մեծ ծախքի մը ինչպիսիքութեան մտածումը, իբրեւ արդարացի պարտաւյ մը, չի կրնար որեւէ կերպով հիմնաւորուի: Բնական է, որ 89% ծախք յանձն առնող Հրատարակիչները կրնային 11%ի ծախսն ալ հողալ եւ լոյս ընծայել ամբողջական եւ կատարեալ թարգմանութիւն մը, մանաւանդ՝ որ գիրքը ծախելու զին նշանակած էին երեքուկէս տուար եւ ահագին քանակութեամբ ալ սպասած:

...Ոչ ուժեղը քոյ պարծենայ, ոչ տկարը տխրի, Փռփռակի անցքեր գտնագամ կու գամ ու կ'երթամ: Արեւը առանց վախճալու ցայտում է լոյսը, Ամպերը դէպի ազօքարան կու գամ ու կ'երթամ:

Երկիրը ուսեալ գաւակիմ է փայլալուստ մօր պէս, Անկիրթ ցեղերը քափառակամ կու գամ ու կ'երթան...

Այս երգը Իսկուհու պատասխանն է ժուլիէթի վերաւերանքին, որ նրան զայրացնում է: Ժուլիէթն ընկալում է այս որպէս հայերի մեծամտութեան արտայայտութիւն, ոպք, որ իր իրեն համարում է զաղաքակրթուած, իսկ միւս ժողովուրդներին՝ համբակ: Բայց այս ամէնը սոսկ թւում է նրան, նա կարծում է, թէ ամէն ինչ ուղղուած է իր անձի դէմ, մինչդեռ երգը պարզապէս պատկերում էր հայերի վիճակը օտար նուաճողների դաժան լծի տակ:

Ժուլիէթի եւ Իսկուհու կերպարները յիշեցնում են Ամենրիսին ու Աիդային: Վերդու «Աիդայի այդ երկու Հերոսուհիներն էլ սիրում են Բազումսին: Աիդան ապինքում է նրան իր մարտիրոսութեամբ, իր թշուառ հայրենիքով: Իսկ Ամենրիսը, որպէս յաղթանակած երկրի ժողովրդի ներկայացուցիչ, Բազումսինն առաջարկում է իշխանութիւն եւ խաղաղ կեանք:

Իսկուհին Աիդա է Բազարատեանի համար: Այդ կինն ուժեղացնում ու քրում

է նրա մէջ պարտքի դպացումը ժողովրդի նահատակութեան հանդէպ, իսկ Ամենբխ-ժուլիէթը նրան հանդիսա կեանք է ստարակում Գրանսիայում:

Սակայն Գրանսիան նորնպէս դադարել է խաղաղ երկիր լինելուց: Այնտեղից պատահաբար եկած լուրերը միեմարտական լին, եւ ժուլիէթը երազում տեսնում է իր հայրենիքը խոշտանկուած ու տրւնտու: Մրազում յայտնում են մայրը, հայրը, քոյրը եւ պահանջում վերադառնալ հայրենիք:

Նոյնընտրութիւն մեծ ժողով է, մարդիկ հաւաքուել են իրենց հետագայ նահատակութիւն հարցը լուծելու: Կանանցից եւ շոյթ է ունենում Անթառամ մայրիկը, առում է, թէ կանայք համաձայն չեն կամային իրենց պատիւը անարդանքի մատնելու աքսորի ճանապարհին, այլ պատրաստ են բարձրանալու Մուսա լեռ ու պայքարել յանուն հարազատ ժողովրդի պատուի եւ ազատութեան: Յանձին Անթառամ մայրիկի խօսում է հայ կինը, որ նուիրուել է դիմադրութեան դործին: Անթառամ մայրիկն ինքը ամուսնու՝ բըմիշկ Ալթունու հետ մէկտեղ, խնամում է հիւանդներին ու վիրաւորներին, արհամարհելով համբարում տարածուած վարակելի հիւանդութիւնների վտանգը:

Ժուլիէթը նոյնպէս ինքնամոռաց նըւիրուել է նոյն դործին, բայց նա այդ անում է օրը մեղցնելու, իր զոհարերութեամբ շրջապատի իրազարժութիւնները մոռանալու համար:

Գոնգաղ Մարիսը խանգարում է նըրան անհող կեանքի ձայնի պէս, հրապուրում է ժուլիէթին՝ ներքաշելով իր խրոստ նահիւնը:

Ժուլիէթը պատրաստ չէ այդ կեանքին, բայց սիրում է կեանքը, ուստի եւ հետեւում է Գոնգաղին՝ աւելի ու աւելի իր կեանքը բարդացնելով: Ժամբարում պիտեն, որ նա կապուած է Մարիսի հետ, պիտեն Գարրիէլը, Ստեփանը, բայց ոչ ոք չի դատապարտում նրան: Նրան միայն մերժում են՝ թողնելով միայնութեան մէջ, Բազրատեանն սկսում է հեռանալ նրանցից եւ ձգտում է դէպի Իսկուհին:

Իսկուհու միջոցով նա կրկին վերադառնում եւ վերադառնում է իր լքուած հայրենիքը: Սա արձագանգն է այն մտքի, որ ծնունել էր նրա ուղեղում վէպի սկզբում՝ իւրաքանչիւր մարդ պէտք է լինի իւրայինների հետ:

Երկու կանանց բախճան պատճառը Գարրիէլն է, ինչպէս «Արդաշտում» Ռադամեսը: Ստեփանը, իմանալով ժօր եւ Գոնգաղի կապի մասին, փորձում է հայրի հետ հեռանալ ճամբարից, որեւէ հեռուական արարք կատարել՝ մօր մեղքը քանելու համար: Ժուլիէթը Գոնգաղի հետ չի հեռանում ճամբարից: Նա տուն է վերադառնում մանր հիւանդ: Նրան խնամում է Իսկուհին, որ ասես յանցաւոր է զգում իրեն ժուլիէթի նահատակութիւն: Իսկուհին անում է ամէն ինչ՝ նրան փրկելու համար, մնում է վտանգուտը հիւանդի կողքին, իմանալով, որ կարող է իրեն մահ սպասնալ: Ամբողջապէս նըւիրուելով ժուլիէթին, նա որոշ իմաստով Գարրիէլին է նուիրում, որին եւ ակնարկում է հեղինակը: Գարրիէլ սիրում է Իսկուհուն, բայց պարտք տեսայրենիքն ու կինը խանգարում է նրան՝ արուելու այդ սիրուն:


Մանր այդ օրերին մի ուրիշ կին՝ պատուելի Արամի կին Ովսաննան դաւակ է ունենում: Ժյուսօրէն է պատկերուած նրա կերպարը: Ովսաննան ատում է ամուսնու զբոյժ՝ Իսկուհուն, ատում է, տրոյհետեւ վերջինս սիրում է Բազրատեանին, մի բան, որ անհամատեղելի է Ովսաննայի եւ Արամի նահապետական բժրանումների հետ: Նոր բան չէ՝ կենդանի հողի եւ անհողի նախապայարտումներ: Սակայն Իսկուհին դէմ է դնում նահապետական բարձրին: Մա մարդկային թրթուռն որտի ընդվզումն է անսիրտ պայմանականութիւնների ու նախապայարտումների դէմ: Արհամարհելով թըլնամանքն ու անկոտորները, նա չի թաքցրում իր սէրը, կրկնակոտ հետեւում է Գարրիէլին եւ աշխատում է փրկել ժուլիէթի կեանքը: Այստեղ վերջէլը խօսում է մարդկային սրտի բնական ու ազնիւ իրաւունքի՝ սիրելու իրաւունքի մասին,

որ այնքան յանախ ստնտհարում է նախապաշարումների կողմից:

Վէպում կանացի հետաքրքիր կերպարներից է Հայկի մօր՝ Եռւշիկի կերպարը: Նա խոշորամարմին է, արտաքինապէս կուպիտ, ներամփոփ ու լուակեաց: Եռւշիկը եկել է Արեւելեան Հայաստանից: Վերֆէլի Վերդիլս վէպում այն միտքը կայ, թէ ամենավտանգաւոր պահին կամ մահուան զէմտողէմ է մարդու մէջ առաւելագոյնս բացայայտում լան ու վատը: Այստեղ էլ Վերֆէլը, ճշմարիտ արուեստագէտի խորաթափանցութեամբ, բացայայտում է Եռւշիկի ազնիւ հոգու զաղանարանները: Ճակատամարտերի ժամանակ նա առաւօտից զիչեր օգնում է իւրայիններին՝ ամենավտանգաւոր գործերը մեռնաբերելով, եւ տապնապով սպասում է որդուն՝ Հայկին, որ Ստեփանի հետ անցել է Թշնամու թիկունքը եւ Մուսա լեռան մարտիկներին՝ օգնութեան կան-

չող նամակն է տարել Հալէպի ամերիկեան դեսպանին: Երբ այդ միայնակ կինը առնում է Ստեփանի մահուան լուրը, իր որդուն էլ է պատկերացնում մեռած, բայց երբ իմանում է՝ ողջ է որդին, փառք է տալիս Աստծուն, զնում է վըլտահեծ որդեկորոյս մօր մօտ եւ, ասես իր մեղքը քակելով նրա առաջ, որ ինքը երջանիկ մայր է, սկսում է խնամել հիւանդին: Դասալիքների ապստամբութեան ժամանակ նա իր կրօնով պաշտպանում է Ժուլիէթին մարդասպաններից եւ ինքն է սպանւում: Եւ երբ ափին են մօտենում Փրանսիական «Գիւէն, Վաննա դ'Արկ» նաւերը, որ մարտնչել են ժաննա դ'Արկի նման, բարձրանում են տախտակամած: Նրանց հետ՝ նաեւ Ժուլիէթը: Փրանսիան փրկում է իր դստերը: Սակայն հայուհիների առջեւ դեռ երկար թափառումների ու տառապանքների ուղին է օտար ափերում...

ՄԵՋԻ ՓԻՐՈՒՄԵԱՆ



«ՄՈՒՍԱ ԼԵՈՒՆ ԲԱՌԱՍՈՒՆ ՕՐԸ»՝ ՈՌԻՍԵՐԵՆ

Առաջնահատուկ ճակատագիր է վիճակիկ ակադեմիայի հայկական գրող Յրանց Վերֆելի «Մուսա լեւոն Բաւաստան օրը» վեպին, որին բաշտամանք է հայ ժողովուրդը այդ գրքի անհմուշանագրգռված հասցեատերերից մէկը: Գրական այդ կորույթը, ընտելցողի դասին հաճեցնելուց օրերն անմիջապէս հետո՝ 1924-1925 թթ., բարգձմանկ: է աշխարհի երբեքուս տասնակ լեզուներով, չայց մեծ եղեւեթի հետմանքով աւարտ հատկ մեկ միտն տպագրանակի անմանագրոյ, 1800-1971 թթ. երեք անգամ, «Գրքանքի գիրք» մասնաշարքով յուս ընծայիկ գրողի հայրենիքում: Այն շարունակում է մեզ հրատարակչական տերով շրջանառութեամ մը, որովհետեւ գեղարվեստորեն կատարելով է թմանակարով հրատարակու հաւկիմ աղիական:

Իր կեր վարք ըզրորդ «Մուսա լեւոն Բաւաստան օրը» բարգձմանկեց ճակ տակին: Այն վերջին 50 հազար տպագրանակով յուս ընծայեց «Մուսա լեւոն Բաւաստան օրը» հրատարակչութեամ: Գրքին տիրութեամ բարձրանցից անաւարտ է զգրել: ակիտական ակադեմիայի բանաւանդ, աղիականական աշխատանքի մերս Միխայիլ Դաղիցը, «Յրանց Վերֆելի» և նրա վեպի մասին վերջապէս՝ Մեջի Փրոմովան:

Վեպը բնագիրը գերմաներենից, բարգձմանկ են է. Ղեկիման է Վ. Մազանովը: ՄԻՒՍԱԼԵՈՒՆ ԳՈՒՍԵՐԵՆ ԱՐԻՍԵՐԵՆ ԱՅՐ. ԳՈՒՍԵՐԵՆ ԱՐԻՍԵՐԵՆ ԲՆՈՐՈՒՄ

Է. Ղեկիման

Ա Հ Ա Ջ Ա Ն Գ,
 Ո Ր Ի Ն
 Ջ Ա Ն Ս Ա Ց
 Ա Շ Խ Ա Բ Հ Ը

1982 թուականին Երևանում ուսուցիչներին ամբողջական թարգմանութեամբ տառադրան անդամ յուս անտա. աւարտագրի գրող Յրանց Վերֆելի՝ սրանից յետոն աւարտ առաջ գրած «Մուսա լեւոն Բաւաստան օրը» վեպը: Այդ հրատարակչութեան առաջարկը գրել է սոցիալիստական աշխատանքի հերոս Միխայիլ Դաղիցը: Դա փաստաթղթերով ու ակամատեսներին վերահայտարարելով վաւերացուած մի գործ է, որը պատմում է 1915-1916 թուականներին թուրքական կառավարութեան կողմից հայերի մասսայական բնաջնջման և վերջիններիս հերոսական դիմադրութեան մասին, և որը կարգաւիս միազնում է մարդու բանականութիւնը և ցուէց կըրկըււււււ սիրտը:

«Հայկական ջարդեր», այս ստեղծանաւից խոսքերն արդէն ջնշուել են մեր ժամանակակիցներից շատերի յիշողութիւնից (միայն թէ ոչ հայերի): Մինչդեռ գրանց տակ թաղուած են արեան ծովեր, ակելի բան մէկուկէս միլիոն անջուրից մահով մեռցուած անմեղ զոհեր: Թագնը-

ած է նորագոյն պատմութեան սկզբին կատարած ամենամեծ ոճբազորութիւնը, որը ճանապարհ շարժեց զբանից տակի վատթորի՝ հիտիերեան դաշտնութեան առջև:

Չի կարելի խորագրէս գնահատել Վերֆէլի վէպը՝ առանց ըմբռնելու նրանում նկարագրուած ողբերգական իրողարձուութիւնների սոցիալ-պատմական դրդապատճառները եւ առանց ծանօթ լինելու զրոյի օգտագործած փաստական նիւթին: Նախկինում ցածուցրիւ այդ նիւթն այժմ հանրագումարի է բերուած «Հայ»-ըի ցեղասպանութիւնը Օսմանեան կայսրութեան մէջ ժողովածուում (պրոֆ. Մ. Ներսիսեանի խմբագրութեամբ, Երեւան, 1966 թ.):

Նրա էջերից յանձնում են խոշտանգւած մարդկանց ու բռնադատներ, անբնականայնի դազանութիւնների պատկերներ եւ ստիպում են սոսկումից ու զղուանքից փակել աչքերը...: Եղթարուած, իրարու վրայ դարձուած ու կենդանի խարկուած մարդիկ, քառատուած երկիւսներ, ժողովածուներից հանուած մանուկներ, մասսայական բռնութիւններ ու զնդակահարութիւններ...: Բոլոր այս ոճբազորութիւնները կատարուել են զխաւորացիս ճակատահարութեանց ժամանակ: Թալանւած, մեղի եւ ուժասպառ մարդկանց շարասիւնները ձգուել են թուրքիայի ճամբաներով, յետեւից թողնելով անթող գիւղիկներ ու թարձ արեան դրոշիչ հոս: Մահը դարանակալ սպասել է նաեւ հրաշքով փրկուած ու մինչեւ Միջագետքի համակենտրոնացման ճամբաները հասած մարդկանց: «Հալիպից մինչեւ Բաղդադ Թրանս Կասովում են սովից ու ցրտից: Ներքին թալան իրենց ամէն, հիւժուած մարմիններով մտնում են քայլով կմախք-անիր»:

— Գրել է ականատեսներից մէկը: Ժողովածուի նիւթերը վկայում են, որ ազգանամուական բորբոքում կըրճերն աստղին հերթին շանթարդել են եւ զել թուրքիայի աշխատաւոր մասսաների սոցիալական դժգոհութեան կամար, որոնք զնալով աւելի ու աւելի էին համոզուած «Երիտթուրքեր» դաշանի միութեան պարագլուխների 1908 թուականին հուշա-

կած դիկտատուրայի հակաժողովրդական լինելու մէջ: «Երիտթուրքեր» առաջնորդները վախենում էին տարբեր ազգերի աշխատաւորութեան դասակարգային համեմատութիւնից եւ այդ պատճառով էլ հրաման են արձակում, որ հային պաշտպանող ամէն մի թուրք կը կտրուի՝ իր իսկ տան առջև: Բնակչութեանը հրահանգում է կոտորել բարեկամ ու հարեան հայերին, բայց ժողովածուի նիւթերը յիշատակում են նաեւ այն թուրքերի, զրոյի ու արարների մասին, ովքեր հըրաժարուել են այդ հրամանը կատարելուց եւ սպասուած են սուել հալածականներին: Ինչպէս աստիարանում նշում է պրոֆ. Մ. Ներսիսեանը, այն ժամանակայ թուրքական կառավարութեանը յաշուուած է թալանի ու սպանութեան մղել միայն հասարակութեան ամենախոտաւորացի խաւերին ու քրեական տարրերին:

Պատմական փաստերը ցնցող համոզականութեամբ խոսում են նաեւ այն մասին, որ հայերի ցեղասպանութեանը կրել է կազմակերպուած բնոյթ: «Տեղակախութեան մայրը մտնում է...: Որոշուած է հիմնովին բնաջնջել թուրքիայում ապրող բոլոր հայերին: Ուշադրութիւն մի դարձրէ՛ք ո՛չ տարիքին, ո՛չ սեռին, ո՛չ խնդիրին», — ցուցում է սուել ներքին գործերի մինիստր Թալէաթը Հալէպի նահանգապետին յղած դազանի հետադրում: «Պէտք է արմատախիլ անել հայ ժողովրդին, որպէսզի ոչ մի հայ չմնայ մեր երկրում...: Մեր գործադրութիւնները պէտք է կրեն համընդհանուր բնաջնջման բնոյթ», — յայտարարել է «Երիտթուրքեր»ի ահաբան Նազըմ բէյը: Նոյնքան կատարելի էին նաեւ «Երիտթուրքեր»ի մեկ դարագլուխների՝ Թուրքիայի փաստացի վարչապետ Ինօկերի եւ գեներալ Ջեմալ փաշայի հրահանգները: Մարդասպաններին յաշուում է Արաջին Համաշխարհային պատերազմի տարիներին իրողործել իրենց չարանեղ պլանները եւ ոչ չբնաջնջել Արեւմտեան Հայաստանի բնակչութեան մեծ մասին: Հայերի ցեղասպանութեանը պէտք է դառնալ Օսմանեան կայսրութեան սարածքում ապրող միւս նշուած ազգերի բնաջնջման նախորդան-

քը: Գաղտնի խորհրդակցութեան ժամանակ պլանաւորուած է յոյների, բուլղարացիների, սերբերի, ալբանների, արաբների, վրացիների, լեւզեզների բնաջնջումը: «Մեմօ» յեղափոխականներս, յսնունք բուրձ ազգի ստեղծելով օսումնամ պնտաքիւն, պարտաւար ենք մեր հայրենիքը մաքրելու խորք ու օտար միւս բոլոր ազգերից», — նրան ձայնակցել է «տեղաւանութեան» յանձնաժողովի պարագլուխներից մէկը:

Վաւերագրերը չմոռանալով՝ վերադառնանք Վերֆէլի վէպին: Նրանում նրկարագրուած իրադարձութիւններն իրականում տեղի են ունեցել 1915 թուականին, Միջերկրական ծովի Հիւսիս-արեւելեան ափին: Հինգ հազար հայ զիւլագի շրջապատում են կամուրջ մահու գնալ եւ լեռնոտ մի վայրում դիրք են մտնում ու կազմակերպում իրենց պաշտպանութիւնը: Թուած է, թէ սա մեծ ողբերգութեան ընդամէնը մի դրուագն է, բայց վէպում ներկայացնելով պատմական մի շարք անձնատրուութիւնների՝ Էնվերին, Թուլաթին, Ջեմալին, ցեղասպանութեան յայտնի հակառակորդ գերմանացի քահանայ Բ. Լեփսիուսին, Վերֆէլն իր ստեղծագործութիւնը դարձրել է պատմական յայտնի պատատ: Աւելին. այդ վաւերագրական երկի գործող անձինք են դարձել փիլիսոփայական խոր գաղափարների կրողներ, կենսական տարբեր դիրքորոշումների ախպիկ ներկայացուցիչներ:

Վէպի գլխաւոր շերտը քաջարի Գարբէլի Բաղրատեանն է, որը դեռեւս «տեղաւանութիւնից» առաջ գիտակցում է, որ մարդասպանի համար հասկանալին միայն զէնքի լեզուն է: Թուրքական հպատակի պարտաւորութեամբ նա վաղուց ծառայել էր օսմանեան բանակում եւ այժմը արդէն կարող էր ուսուցի իր փորձն օգտագործել մուսալիսցիների պաշտպանութեան գործում: «Մեկ ինչո՞ւ անպայման մահ», — ազատամբելուց առաջ քաջայերում է նա երկմտողներին: Բաղրատեանի համարձակ յայտնի արդարանում են: Հերոսաբար յառ մղելով թուրքական զորամասերի եւ ոստիկանների գրոհները, լեռան պաշտպանները համարեա՛ երկամ-

անայ դիմադրութիւնից յետոյ մտերքում գտնուող Փրոնսիական ռազմանաւերով փոխադրուած են Եգիպտոս:

Վերֆէլի վէպը էպիկական ստեղծագործութիւն է: Նրա հերոսները ո՛չ միայն Դիմադրութեան ղեկավարներ են, այլեւ թէ՛ Հարիւրաւոր շարքայնի մարտիկներ, թէ՛ հայ կանայք, որ կողք կողքի կուտն են իրենց Հայրերի ու ամուսինների հետ, թէ՛ պատանիներ: Ընթերցողի յետողութեան մէջ անընկելօրէն դրոււում է շեւհերով գրուածի տեսարանը, երբ համարեա՛ առանց գիտմութեքի մտայած մուսալիսցիները Մպարտակի զառիսատրոնների պէս դիւնում են նաւթով թաթախուած ու բոցավառուած ճիւղերով եւ յոռ են շարտում իր յազիւնակը վաղատամ ըմբոշխնող թշնամուն: Ժողովրդական Համախմբութեանն ու մասնախկան խոնդավառութիւնը դառնում են ճմուռալեռան հրաշքի դիւխաւոր պատճառները:

Դիմադրութեան հերոսներին հակադրուած են շարին շնդդիմանալու կողմնակիցները. դրանցից է աւագերէց Նոխուրեանը, որն իր հօտին յորդրում է ենթարկուել իշխանութեան՝ «տեղաւանութեան» վերաբերեալ հրամանին եւ իր հետ մահու է տանում Հարիւրաւոր մարդկանց: Հեղինակը հակակրօնքով է ներկայացրել նաեւ գեղադրած Գրիգորին, որն իր ողջ կեանքը նուիրել է գրքերին եւ խորասուզուել անուրջների երեւակայական աշխարհը: «Թող ես մնամ ինձ ինձ...: Թող ինձ սպանն, ես դա չեմ ցկատի: Ով հատել է այս նշմարտութեանը, մա նորից իւր եզրուց կը ստեղծի մեզ ողջ աշխարհ», — պնդում է Մուսա լեռան այդ Դիմադրողները: Գրողը զայրոյթով է պատմում նաեւ անարխիստ Կիլիկիանի մասին, որը, ի վերջոյ, դատաւիք է դատուում: Ճիշտ է, նա ճմանկուց փչացած հոգին է, դեռ երկիսայ եղած ժամանակ ջարդի օրերին ակնատես է եղել Հարազատների կոտորածին, բայց, միեւնոյն է, նրան ներում չկայ: Բաղրատեանի գնդակը հասնում է դաւաճանին:

Պատմելով հայ ժողովրդի կրած տառապանքները մասին, Վերֆէլը միանգա-

մայն արդարացիորէն յիշատակում է նաեւ
այն թուրքերին, ովքեր չեն գարձել շա-
րագործներէ կործակիչներ եւ «ճեմք չը-
տա՛ք նրանց, նրանք մեր հղալընքն են»
ասելով՝ փորձել են պաշտպանել Հայե-
րին:

«Մուսա լիւրան Էռաուսուս օրը» վէպը
յարարերականօրէն հազուադէպ երեւոյթ
է Համաշխարհային դրականութեան մէջ:
Գրողը ներկայացնում է առասպանքը մի
ժողովրդի, որը, թուով է, շատ հեռու է
իրենից, բայց նրա իւրաքանչիւր խօսքը
յազէցած է կարիկցանքի, դժուրեան ու
պատմական հոգեհարազատութեան զգա-
ցումով: Հրայտիօրէն որսալով հայերի
ազգային բնաւորութեան առանձնախա-
կութիւնները, Վերֆէլը միտմանակ
կարողացել է իր վէպին սալ Համամարդ-
կային հնչողութիւն:

Ինչպէ՞ս է դա յաջողուել նրան: Հար-
ցի պատասխանը շատ բանով առնչուում
է գրողի կենսագրութեանը: Ծնուած լի-
նկով Պրազայի ունեւոր հրեաներից մէկի
ընտանիքում եւ աւարտելով տեղի գեր-
մանական Համալսարանը, Վերֆէլը դեռ-
եւս վաղ պատանիութեան օրերին հրա-
տարակում է քանաստեղծութիւններ ու
պիեսներ, որոնցում արտայայտում է իր
անհաշտութիւնը սեփականատէրերի առ-
հողի ու եսասէր աշխարհի հետ: Առաջին
Համաշխարհային պատերազմին մասնակ-
ցելով որպէս զինուոր, նա առմիշտ ասում
է միջատերիցն ու բիւրեղատիզմը՝ Ա-
լըտարօ-հունգարական կայսրութեան այդ
երկու իսկական տէրերին: Դա մի պետու-
թիւն էր, որտեղ, Վերֆէլը ժամանակա-
կից Հաշեկի բնորոշմամբ՝ «պարագրաֆը
Խեղդում էր, պարագրաֆն ազաւշութիւն
էր սերմանում, պարագրաֆը սպանում էր
չէր ներում», իսկ գրողի ընկերոջ՝ Կաֆ-
կայի խօսքերով՝ «այն մնում էր կոշտա-
բայիս նրազին»:

Մասնատուած կայսրութեան տապա-
լումը հովութիւն չի բերում Վերֆէլի բո-
լոստ հոգուն, դնալով նա աւելի ու աւել-
ի է գլուխ տոտայիտարիզմի սպառնացող
վտանգը եւ սազնազով է լցում մարդ-
կութեան ճակատադրի հանդէպ: Նա դառ-
նում է էքսպրեսիոնիզմի ակնառու դէմ-

քերից մէկը: Ուս դրական մի ուղղութիւն
էր, որ ծնունդ Առաջին Համաշխարհային
պատերազմից յետոյ եւ աւետից բուժ-
ական քաղաքակրթութեան ճզնաժամը,
1938 թուականից յայտնուելով տարա-
գրութեան մէջ, նա մտերմանում է թու-
մաս Մաննի, Հայնրիխ Մաննի, Լիւն
Յելխտուանդերի եւ ուրիշ հակաֆաշիստ
գրողներէ հետ, դրում է պատերազմի ու
նացիզմի դէմ ուղղուած մի շարք գործեր
եւ ընդհուպ մինչեւ կեանքի վերջը (1945)
մտում է նրանց անհաշտ թշնամին:

Մեր խնդրոյ առարկայ վէպն սուարտ-
ւել է 1938 թուականի Մարտին, Հիւտե-
րի՝ իշխանութիւնը զաւթելուց քիչ անց:
Իր վէպը գրելիս Վերֆէլը ներկայի աշ-
քերով է նայել ոչ հեռուոր անցալին, եւ
հենց դրա մէջ էլ թաքնուած է նրա բազ-
մապլան ստեղծագործութեան յաջողու-
թեան գաղանիքը: Մածօթանալով հայերի
ցեղասպանութեան փաստաթղթերին, Ե-
գիպտոսում եւ Սիրիայում հաբցուելով
անելով Մուսա լիւրան հերոսներով
շատ մասնակիցներ, Վերֆէլն իր ժա-
մանակակիցներից շատ առաջ կանխա-
գուշակեց, թէ ինչ աղէտներ կը բերի գեր-
մանացի ժողովրդին խաբած ու նրան իր
կամքին ենթարկած մի խումբ բախտա-
խընդերներէ դիկտատուրան:

Ի դէմս Հիւտեղի, Հիմլերի, Գէօրին-
կի ու Գէօրելիտի, նա ճանաչեց ինվերի,
Թալէաթի, Զեմալի ու Նազըմի բնաւորու-
թիւնները: Իր գիրքն աւարտած պահին
նա դեռեւս չէր կարող լսած լինել
Հիտլերի՝ 1939 թուականին Լեհաստան
ներխուժելուց ատաջ Օթերպայցուրգում
կայացած խորհրդակցութիւնում արտա-
սանած խօսքերը: «Պէտք չէ արիւշ ուշա-
դրութիւն դարձնել հասարակական կար-
ծիքի վրայ, հարկաւոր է անթիւս պպանի
տղամարդկանց, կանանց ու երեխանե-
րին, պէտք է բնաջինջ անել բոլոր պաւսն-
ներին: Այսօր այլուս ո՞վ է խօսում հա-
յնրի կատարածների մասին» (ընդգծումն
իմն է — ԵՄԻ. Գ.): Բայց նա ասեա թէ
նախագգում էր, որ դրանք ասուելու էին:
Սարսափելի է մտածել, բայց չէ՞ որ այդ
խօսքերը Թալէաթի վերը մէջբերուած հե-
տագրի համարեա՝ բառացի կրկնութիւնն

ին, միայն այն տարբերութեամբ, որ հայերին այժմ փոխարինել էին օլաունները...

Ուսումնասիրելով գերմանական Փաշխանների ծրագրերը եւ հետեւելով նրանց քաղաքական առաջին գործողութիւններին, Վերֆէլը հասկացաւ, որ հայերի ցեղասպանութիւնն ընդամէնը նախորդանքն էր եւրոպական մի շարք ազդերի ու աղբուրների մեծ մասի բնազդնը: Միջազգային անապատների կեդրէ մուտի միջոց նա նշմարեց Մայրասնկի ու Օսմանցիների ուրուսապատկերները, ի դէմս շտեղանութեանը զոհերի՝ հիւժուած, ուսանողի մնացորդներով ու բանալարով իրենց գոյութիւնը պահպանած հայերի, տեսաւ ճորտի ուսուցիչ ապառաջ սարուկներին, կենդանի այրուող հայերի ողբ ու կականի միջոց լսեց Լիդիացայի, Գաղուրայի եւ Մասիսի բնակիչների դեռեւս չարձակութեամբ հառաչանքները:

Իր վէպում ակնարկելով Քալէաթի եւ Ջիմաթի հետագայ ճակատագրերի մասին, պատերազմի աւարտից յետոյ ռազմական արիւնքները Սոսմուրում մահուան դատապարտեց նրանց, եւ թէեւ նրանք փորձեցին թաքնուել Օւրուպայում, բայց, այնուամենայնիւ, իրենց արժանի պատիժն ստացան ժողովրդական վրիժառուների ձեռքով (էնիյրը սպանուեց Կարմիր բանակի զորամասերի ղէմ մղուած մարտում, Միջին Ասիայում, ուր նա փորձեց կազմակերպել բազմաշային շարժում): Վերֆէլը հետաետիքէն նախազգուշացրեց Փաշխասական Գերմանիայի պարագլուխներին իրենց սպասուող դատաւճռի մասին: Չմոռանա՛մ յիշեցնել, որ 1926 թուականին թուրքական դատարանի վճռաւով մահապատժի ենթարկուեց նաեւ Նազըմ բէյը, իսկ «Երիտթուրքեր»ի միութիւնը, ի վերջոյ, դատապարտուեց որպէս ոչնչացիւն ու հակազգային կազմակերպութիւն:

Վերֆէլի մեծագոյն արժանիքը նրա անհանդուրժողականութիւնն էր Փաշխամի նկատմամբ: Ոճրագործներին չպէտք է որհուէ փոխզիջում անել, չի կարելի հաստատել նրանց որեւէ խօսքին, — ահա այս

ճշմարտութիւնն էր, որ դրողը հասկացաւ իր գլխաւոր հերոսի հետ միտին, հերոս, որի խորաթափանցութեան ու հետաետիքութեան շնորհիւ հազարաւոր մարդիկ փրկուեցին ստոյգ մահէ: «Մուսա լիքում քառասուն օրը» քաշարի դերք է, որը մարդկութեանը կոչ է անում ի սէր բարութեան դիմուած մենամարտի մէջ մտնել շարքի ղէմ: Հակառակ յոռետեսներին, Վերֆէլն ապացուցեց հայերի մարտունակութիւնը, դահիճներին ընդդէմանալու նրանց պատրաստակամութիւնը: Դա համապատասխանում էր պատմական ճշմարտութեանը: Երկնք Սասունի ապրտամարտեան զոհուած, բայց թըլնածուն անձնատուր լիցած հերոսներին, յիշեց նաեւ Վանի պաշտպանութեան բարեբախտ ելըը, որտեղ հայ զինուորները կարողացան դիմանալ մինչեւ ուսական զորքի գալը:

Նկարագրելով Նոխուզեանի խորհրդին հետեւած մարդկանց օտակալի ճակատագիրը կամ ի. Լեփսիուսի՝ էնվերի ու Քալէաթի սիրտը փափկացնելու ազդրդիւն ճիշտը, Վերֆէլն ակնարկում էր նաեւ իր ժամանակուայ Արեւուտքի հասարակական գործիչներին, որոնք ՅՅ-ական թուականներին կոչ էին անում զի զուր տեղը չգրգռել Փաշխասական շեկտատարներին» եւ քարոզում էին զարեւսօրին հաշտեցնելու» քաղաքականութիւն: Հակա֓աշխատների համար անձնապաշտ Կիլիկիանի եւ Գրիգորի կերպարները նոյնպէս ունէին միանգամայն հրատապ իմաստ: Այդ հերձուածողներին հակադրելով իսկական հայրենասէրներին, Վերֆէլն առաջնորդում էր նոյն սկզբունքներով, ինչ որ Ալեքսէյ Տոլստոյը, որը 1941-ի ահեղ Նոյեմբերին ասաց. «Վերայ է հասել համընդհանուր պղտը...: Եւ նոյնիսկ նա, ով կ'ուզեմար նոյնի պէս թաքնուել մութ խորշում, անգամ նա հասկանում է, որ այժմ անհնար բան է մեծակ փրկուելը: Մեր բոյնը, մեր հայրենիքն իշխում է մեր բոյնը զգտցմուճէմնրի վրայ»:

Ուշագրաւ է, որ Վերֆէլի գիրքը համահունչ է Հայրենական մեծ պատերազմի մասին սովետական գրողների որոշ

ստեղծագործութիւններէ: Միտաբիլ Գու-
դինը պատահաբար չի Մուսա լերան հե-
րոսներէն համեմատում Բրեքտի ու Գան-
դուտի, Հաջիմուշկայի ու Օդեսայի, Լե-
նինգրադի ու Մոսկուայի պաշտպաններէ
հետ: «Ենթաց Վերֆելի գիրքը կէս դար
շարունակ պայքարել է մարդկութեան
դանիմների դէմ եւ միմյնս օրս էլ շարու-
նակում է պատմական ազնիւ դերը...:
Այդ գիրքը շարքի մէջ է», — գրում է Գու-
դինը, հակաֆաշիստի ու մարտիկի իր
սեփականից արժէքաւորելով վէպը:

«Մուսա լիքամ Քուսսում օրը կան-
խտեսութիւն — վէպ է, ահապապ —
վէպ: Նման երկ կարող էր ստեղծել միայն
յատուկ կերտուածքի տէր արուեստագէ-
տը, ում սրտում համաշխարհային պատ-
մութեան կարեւորագոյն երեւոյթներից
տառալ թեքում է երկրաշարժացոյցի սը-
լաքը: Ծաշիգմի եւ մասսայական ընս-
ղնջման սպառնալիքը կանխատեսել են ոչ
չատ թուով գրողներ: Գրանցից են Հեր-
բերտ Ուէլսը, Ջեկ Լոնդոնը, Կարել Զա-
պէէլը, Ալեքսէյ Տոլստոյը: Կարելի է եւս
մի ջանի անուն թուարկել: Սակայն Վեր-
ֆէլն ստեղծեց այդ թեմային նուիրուած

ամենազգեցիկ երկերից մէկը: Նրա վէ-
պում մարդկութեան դահիճների դերում
հանդէս են գալիս ո՛չ մարտեցիներ, եւ ոչ
էլ սալամանդրներ, այլ մասսայական կո-
տորածների համար պատասխանատու
կոնկրէտ անձնաւորութիւններ, որոնք
պղծեցին քսաներորդ դարասկիզբը:

Յիշենք, որ հայերի ցեղասպանու-
թիւնը իրենց կոյթներում դատապարտել
են Լիբկնիխտը եւ Կիրովը, Գորկին եւ
Բրիւսովը, Անատոլ Թրանսը եւ Ռոմէն
Ռոլանը, Վ. Կոլարովը եւ Յ. Նանսէնը,
Ի. Լեֆոխուսն ու Տ. Վեպները: Սակայն
դրանք նախազուշացումներ էին, որոն-
ցից, դժբախտաբար, աշխարհն այն ժա-
մանակ անհրաժեշտ եզրակացութիւններ
չսրեց:

Այժմ փոխուել է իրավիճակը: Ծա-
շիգմի ջախջախումից յետոյ աշխարհն ի-
մացաւ թէ՛ արեան եւ թէ՛ ազգայնամոլու-
կան լողունակների գինը: Վերֆէլի գրքի
նոր վերահրատարակութիւնները, մի
գերք, որը հասցէագրուած է թէ՛ ջաջա-
րի հայ ժողովրդին, եւ թէ՛ ժամանակու-
կից ողջ մարդկութիւնը, կը դառնան դրա
ճշմարիտ ապացոյցը:

ԵՈՒ. ՊԵՏՐՈՎՍԿԻ

ԱՐԻՈՒԹԵԱՆ ԲԱՐՁՈՒՆՔՆԵՐԻՑ



Արուեստագէտի ուղին միշտ էլ դժ-
ւարին է :

Եւ որքան մեծ է արուեստագէտը,
այնքան արեւի բարդ ու ողորդակուն է
այդ ուղին, որովհետեւ արուեստագէտը,
իր նիւթն առնելով աշխարհից, պատաս-
խանատու է ամէն ինչի համար, դա նրա
պարտականութիւնն է՝ սեփական համոզ-
մունքի, խղճի առաջ, դա նրա ճակատա-
գիրն է, նրա խղճմտանքն ու օգնութիւնը,
նրա իմացութիւնն ու կանխատեսումը, ո-
րոնք ամբողջութեամբ են սեփական կապ-
տուններն եւ ուսուցիչներն, սեփական ող-
բերութեան փորձով :

Արուեստագէտը տառապում է միայ-
նակ, բայց նրա անհատական ճակատա-
գիրը ընդհանրական է :

Այսպիսին է ինձ ներկայանում նաեւ
Փրանց Վերֆելի տաղանդաւոր անհատա-
կանութիւնը՝ մեր XX դարի արիւնտ
յորձանութիւններով անցած անհանգիստ ու
խռովայն զինքի ստեղծագործական
սիրանքի դժուարին ուղու բոլոր կան-
խատեսումներն ու տառապանքներն մէջ :

Փրանց Վերֆելը ծնունդ է 1890 թը-
ւականին, Պրագայում, Հրեայ Հարուստ
առեւտրականի ընտանիքում : Գիմնազիան
աւարտելուց յետոյ սովորել է Լայպցի-
գում ու Համբուրգում :

Ճշմարտութեան որոնման նրա ըն-
կերներն են եղել կաֆկան եւ էզոն էրվին
Կիլը :

Նա շատ վաղ հիւանդացաւ զորոր
մարդկանցից հագնուելու բարեփոխելու ծա-
նապարհով աշխարհը նորոգելու՝ անբու-
ժելի ցաւով :

Նա զրիտունէութիւնից նետուեց
մարքտիզմին : Եւ մինչեւ ստեղծագործա-
կան հանճարի վերջին մարմնումն աղպէս
էլ ամուր հող չպտաւ իր անհանգիստ որո-
նումների համար :

Նա զրեց բանաստեղծութիւն ու դրա-
մա, ակնարկ ու էսսէ, վէպ ու պամֆլետ
եւ բոլոր ժանրերում էլ թողեց իր խօսքը,
իր արտատո՛ւր անհատականութիւնը,
որն այժմ էլ հետաքրքրում է ոչ միայն
գրականութեան պատմաբանին :

Նա մուհացաւ Կալիֆորնիայում, 1935
թուականին եւ հալածուկների յուսախա-
րութեան կիսախաւարը, որ թիթեակի
յուսաւորուեց յաղթանակի հրաժարու-
թեամբ, ծանրացաւ օտար հողու թաղ-
ւած նրա անիւնի վրայ :

Նա որոնող անհատականութիւն էր,
որ սիրապետում էր կանխազգացման եւ
կուսակցի հազուադէպ ունակութեանը :

Նա XX դարի եւրոպական մշտկոյթի
լաւագոյն ներկայացուցիչների շարքում,
Ռոմէն Ռոլանի ու Քոմաս Մաննի, Լիոն
Ֆէյխտմանի ու Պիեռ Լադերլուիստի
հետ միասին եւ միաժամանակ առաջինն
սկսեց անձնական պայքար ընդդէմ ֆա-
շիզմի : Նա դաժան պայքար էր, մահու
եւ կենաց պայքար :

մանքով ու տաղանալով յաղեցած սրտակեղծ լացը, մարդկային հոգու եւ տիեզերքի ողբը, որն իր յաւերժական հնչողութեամբ ուղղուած է դալիք ժամանակներէ մարդկային բոլոր հոգիներին: Այդ ողբն իմ հոգու մէջ խառնուած է Մայրանկի եւ Օսկենցիմի, Կլոսոքի եւ Բուխենվալդի ողբին, Լիզիցայի եւ Պատինի երգիսաների մէջ:

Բայց Ճրանց Վերժէլն իր դրբում անդրադարձել է ոչ այնքան զոհերին, որքան հերոսներին, ոչ թէ դաժանութեանը պատկօրէն հնազանդուելուն, այլ զիմադրութեանը, դահիճների ոճրադրծութեանն ակտիւօրէն զիմադրուելուն:

Նրա զրքի հերոսը՝ Գարրիէլ Բազրատեանը ծագումով հայ է, հարուստ ծընողների զաւակ, որը հումանիտար փայլուն կրթութիւն է ստացել Ներսիսյան, Թուրքական բանակի սպայ է՝ շքանշանների արժանացած Բալկանեան պատերազմում զործած սիրանքների համար: Նա իր Փրանսուսի կնոջ ու որդու հետ, որպէս մեղած եղբոր կալուածքի ժառանգորդ, փախչից վերադառնում է Թուրքիա՝ Մուսա լիբան ստորոտում գտնուող զիւղը, իր մանկութեան օրրանը, իր հարեանակիցների բնակարանը:

Նա ամէն ինչ ունի՝ փող, ընտանիք, հիւանդի տուն, կալուածք, կայուն դերք հասարակութեան մէջ:

Բայց այդ Թուրքիայ բարեկեցութեան աշխարհը խարխուղում՝ փլուում է չնախատեսուած զէպքերի ճնշման աակ: Ժամանակի Թուրքական բանակի պարալուիներէց մէկը՝ Ինվիկ փայան խաբուութեամբ հաւաքում է հայերի զէնքը եւ, օրէնքից դուրս համարելով, նրանց զէմ է ուղղում կրօնական մոլեռանդների ատելութիւնը, եւ ազգայնամոլ սանձարձակութեան մէջ հրով ու սրով սկսում է հայ ժողովրդի պլանայափ ու ծրագրուած բնաջնջումը:

Եւ Թուրքական բանակի սպայի, քաջազորութիւնների համար Թուրքական շքանշաններ ստացած Գարրիէլ Բազրատեանի վրայից ընկնում է եւրոպական կրօնապաշտօնի պատեանը, ու նա դառնում է իր ժողովրդի զաւակը, եւ զէպքերը նը-

րան դարձնում են զիմադրութեան զեկափար: Նա զիտէ ուղղական գործը: Նա հաւաքում է յրջակայ դիւղերի հայ բնակչութեանը եւ դաշտավայրից առաջնորդում զէպի Մուսա լիու:

Բազրատեանը գտնում է համարիտներ ու զէնք եւ ամբաշինութեան խառնուած կանոններով կազմակերպում պաշտպանութիւնը:

Նա նոյնիսկ ժամանակ չի ունենում անդրադառնալու, թէ ինչպէս է ինքը նըմանում Լէոնիդին, իսկ զինակիցները՝ Թերմոպիլէի ճակատամարտի յոյներին:

Ողջ Թուրքիայի տարածքում ջարդում են հայերին, նրանց թալանում եւ բռնի ուժով տեղահանում են իրենց հայրենիքից, դարաւոր բնօրրանից եւ ջրում են մահաշունչ վայրեր, ուր նրանք սովի ու անապատային անողոք խորշակի տանջանքների մէջ դատապարտուած են մահուան:

Այդ նոյն ձեւով քառորդ դար անց Հիւլիերի հրամանով հսկանականներն էին հրեաներին ու լեհերին, առանձին, զընչուններին ու բոլոր անցանկալիներին զընուլու Օսկենցիմ, Թաւեմարիկ եւ Կլոսոք, ջընու էին զէպի դապախիկները, հորերը, մտուլու, դուպակահարիւլ էին կանանց, երեխաներին ու ծերերին, եւ ողջ Ներսիսյանի օղբ յազենայու էր մարդկային մագերի խանձահոտով:

Ողջ Թուրքիայով մէկ ջարդում են հայերին, բայց կանդուն է մնում Մուսա լիուը, հայոց արիութեան անմատչելի բարձունքը: Լիբան կայաքորը ետ է մըղում Թալէաթի կանոնաւոր զօրքերի դըրոհները: Արիւնով ներկուած, բայց տնընկճելի է մնում Մուսա լիուը: Նրա կայաքորը այլ ելք չունի: Մնում է իր զէրքերում: Պաշտպանում է ու յարձակում: Ողջ աշխարհում մենմենակ, խեղալիութեան բողով բռնուած, չի զիջում մարդկային ոգու արիութեան իր բարձունքը:

Քառորդ դար անց նոյն յամառութեամբ էին զիմադրելու Բրեհաթի եւ Գանգուտի, Հալիմուշկայի եւ Օղեսայի, Լեոնիդարդի եւ Մոսկուայի պաշտպանները: Արիութեամբ արիւնակից բոլոր մար-

դիկ, մարդկային արժանապատուութեան բոլոր հերոսները:

Դիմանում է Մուսա լեռը: Դիմանում է քառասուն օր ու դիւեր՝ առանց հացի ու վառօդի: Մնում է կանգուն եւ կը մընայ աղբիւրին իրեն տոկունութեան օրինակ բոլոր ժողովուրդներին, համայն աշխարհի, ողջ մարդկութեան համար:

Եւ մաւ չկայ Մուսա լեռան հերոսներին, նրանց սիրտնքը կը մնայ դարձաբար, իր իսկ՝ ժամանակի հոգու մէջ:

Այդ սիրտնքը բոլոր ժամանակներին ու բոլոր ժողովուրդներին իր դիտաւարտ արտով, իր հոգու արիութեամբ, իր տաղանդի վարպետութեամբ կտակել է գրող ծրանց Վերֆէլը:

Նա այդ դէրքը գրեց 1933 թուականին: Գրեց իրեն նախազգուշացում ողջ Եւրոպային ու աշխարհին առ այն, որ երկրի երեսին յայտնուել է Հիտլերը, որն իր ետեւից բերում է լափերով աւելի մեծ եւ դաժանութեամբ աւելի խորագիտ շարժը:

Եւ ծրանց Վերֆէլը չսխալուեց ու իր ճակատագրով վարձահատուց եղաւ այդ յայտնութեան համար: Հիտլերը Վերֆէլին վճարեց Աւստրիայից: Նա փոխադրուեց Փարիզ: Հիտլերը նրան վճարեց առանց Փարիզից, եւ նա թափախ Մաննի հետ թաքուն անցաւ Իսպանիա, այնտեղից էլ Պորտուգալիայով՝ Ամերիկա: Հիտլերը կամեցաւ նրան դարձնել վտարակ, բայց նա դարձաւ աշխարհի որդին, մարդկանց երգիչը, այն մարդկանց, որոնց ոչինչ սարսափելի չէ, եթէ իւրաքանչիւր բոլոր դատարան են մեռնել միեւնոց համար:

Ծրանց Վերֆէլի Վուսա լեռան բռնասուն օրը դէրքը արիութեան հիմն է: Բացառիկ սաղանդով է գրուած այն: Գրեի իւրաքանչիւր հերոս ունի իր քնաւորութիւնն ու ձայնը: Այն խելացի ու հեռահար զիւր է:

Վէպը նախանձիխօրէն երկար կեանք կունենայ, որովհետեւ հոգուց բխած, կրթով յագեցած խօսքը դիմացկուն է անգամ այն մարմարից, որի վրայ փորագրուած է:

Այդ դէրքում ապրում եւ գործում են ճանաչման իմաստութիւնը, փորձի դաստիարակը եւ կանխատեսման անդրաշուքիւնը, ընդ որում՝ այն գրուած է, ինչպէս եւ վայել է մեծ գրողին, ոչ թէ միտումնաւորութեամբ, այլ օբյեկտիւ ճշմարտացիութեան այն չափով, որը դէրքը զարմնում է իր ժամանակի հոգեւոր երեւոյթ:

Հրազդանի արժին յառնում է Յեղասպանութեան տխուր յուշարձանը: Այնտեղ, խոնարհուած սիւների տակ, ինչպէս յաւերժութեան քարէ արձիւղի մէջ, վառուած է յիշողութեան յանրձեռնական կրակը, եւ հնչում է հոգեպարար երաժշտութիւն, լուսաւորելով մարդկային հոգին:

Բայց, այդ յուշարձանից բացի, քաղաքից դուրս, էրմիտէին տանող ճանապարհին, Մուսա լեռ գիւղում, հենց այն գիւղում, ուր ապրում են Մուսա լեռան պաշտպանների շառաւիղները, կայ մի այլ՝ Մուսա լեռան հերոսներին նուիրուած յուշարձան: Այն յառնում է բլրի դազարին որպէս խիզախութեան աշտարակ, կառուցուած կարմիր տուֆից: Նրա ճակատային մասում քանդակուած է թեւաւորած արձիւ՝ իրեն մարդկային հոգու արիութեան ու գեղեցկութեան խորհրդանշան:

Այդ յուշարձանը ժողովուրդն է կառուցել: Եւ ամէն տարի Մուսա լեռան Յաղթանակի օրը այստեղ հաւաքուած են հերոսների ժառանգները եւ լուս երգում են սալիս՝ մարդկային եղբայրութեան ճամբով տանել սիրանքի էտաֆէտը:

Սրբառաւ տուֆի կարմիր որմանքի վրայ դեռեւս չի փորագրուած Մուսա լեռան եւ ոչ մի հերոսի անուն: Դրանք դեռ կը գրուեն: Անխտի բոլորինը: Այդ տուններին շարքում կ'ուղչի տեանել նաեւ ծրանց Վերֆէլի անունը, մի մարդու, որը վերակերտեց այդ սիրտնքը բոլոր մարդկանց ու բոլոր ժամանակների համար:

Նա արժանի է դրան:

ՄԻՆԱՍԻԼ ԴՈՒԴԻՆ

26 Յուլիս 1939



Բաց նամակ

Ֆ Ր Ա Ն Ց

Վ Ե Ր Ց Է Լ Ի Ն

Ո՛րվ ՏԵՐ, ԴՈՒՆ ՈՐ ՍՈՒՐԲ ԵՍ ԵՒ ՃՀԱՄԱՐԻՏ, ՏԱԿԱՌԻՆ ՄԻՆՉԵՒ Ե՞ՐԲ ՊԻՏԻ ՉԴԱՏԵՍ ԵՒ ՄԵՐ ԱՐԻԻՆԻՆ ՎՐԷԺԸ ՊԻՏԻ ՉԼՈՒԾԵՍ ԵՐԿՐԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԷՆ:

(ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ, 8, 10)

«ՄՈՒՍԱ ԼԵՐԱՆ 40 ՕՐԵՐԸ»

1939 Յունիս 23ի Փրանքելթուրք համաձայնութեամբ՝ Ճրանսա տէր կանգնեցաւ Ալէքսանտրէթի այն գերեզմանատան, ուր ամփոփուած են նշխարները իր զինուորներուն. այդ ափ մը տարածութիւնը ան չյանձնեց թուրքին, այլ պահեց իրեն: Այդ գերեզմաններուն վրայ պիտի ծածանի Փրանսական եռագոյնը, եւ անոնց վրայ պահապան պիտի կանգնի Փրանսացի պաշտօնեան: Ճրանսա չխորհեցաւ սակայն այն միւս գերեզմանատան մասին, որ կը զարդարէ Մուսա-տաղի մենաւոր կառարը: Մուսա խնկարանը այն միւս նահատակներու, որոնք քառասնօրեայ հերոսապատումին իրենց կեանքը զոհեցին՝ նաեւ ի փառս Փրանսական եռագոյնին...

Նրէկ՝ հարազատներ էին անոնք, մինչ այսօր՝ օտար...
Նրէկ՝ սուրբեր եւ նահատակներ էին, մինչ այսօր՝ յիշմունքի իսկ անարժան կմախքներ...

Երէկ Յրանստ մեծարանքի մէջ կը բանար անոնց Յուշարձանը եւ երդում կու տար երբեք չմոռնալ զիրենք եւ իրենց արհար գատը, մինչ այսօր կը լքէր այդ սրբարանն, ուրկէ ոչ ոքի այլեւս որեւէ վտանգ չէր սպառնար...

— Ինչպէ՛ս, դաւաճանել մեր Յախառակներուն, քշնաւիսն ձգել անգամ անոնց նշխարները...

Ամէ՛ն, ամէ՛ն բան, բայց երբեք այս մէկը:

Ու Մուսա-տաղցին իր հոգիին մէջ նոր դաշինք մը չկնքեց թուրքին եւ ֆրանսացիին հետ:

Կրակի տուաւ իր շէն գիւղերը, առաւ իր ձեռքը բահն ու բրինջ եւ ելաւ լեռան կատարը:

Սրբութեամբ քանդեց քար քարի վրայ բարձրացած Յուշարձանը, նորէն փորեց հերոսներու գերեզմանը, մէկիկ-մէկիկ ժողովեց անոնց նշխարները, եւ այս անբաւ հարստութիւնը, որ իր փառքը, իր պատիւը եւ իր գանձերուն գանձը կը կազմէր, առաւ հետը եւ բերաւ իր նոր պատուպարանը:

Եւ այժմ հանգիստ է իր խիղճը, եւ փրկուած է իր պատիւը:

Վաղը աւելի՛ շքեղ մեծարանքներու մէջ եւ աւելի՛ մեծափայլ հանդիսութիւններով ան նոր Յուշարձան մը պիտի ըլլայ՝ իր քաջերու տարուշանը միշտ վառ ու կենդանի ընելու համար:

**

Մուսա-տաղցին տարագիր է այսօր. ան լի բուռերով ոսկի չունէր երէկ՝ երբ հայրենիքի մէջ էր, ու չունի մա՛նաւանդ այսօր՝ երբ գաղթական է...

Իր միակ գանձարանը՝ իր հաւատքն է եւ իր ստեղծարար բազուկը:

Մուսա-տաղցին, ճիշդ է, մեկնեցաւ իր հայրենիքէն, սակայն իր ետին ձգեց միայն անոր մարմինը, բայց երբե՛ք ոգին...

Այս ոգին անբաժան է իրմէ, որովհետեւ ամէն շարժուն մուսա-տաղցի անշարժ Մուսա-տաղ մըն է, բեկոր մը կենդանի հայրենիքէն, որուն հմայքը, որուն մեծ սէրն ու անմեռ հաւատքը զինք միշտ կենդանի կը պահեն:

Հեռագիրները լուր բերին, որ երբ մուսա-տաղցիներու առաջին կարաւանները եկած եւ գիւղ առ գիւղ վրաններ տնկած են իրենց յատկացուած նոր հողերու վրայ, անմիջապէս գիւղերուն աւազները խմբուած եւ անուններ տուած են իրենց նոր օթեւաններուն:

— Եռզուեւո՛ւք, Պիթիա՛ս, Հապիպլի՛...:

Սրբացած անուններ, որոնք կը հնչեն նոյնքան հզօր ու շքեղ, որքան ամէնէն սուրբ բառերը մարդկային լեզուի մէջ...

Տուած են այդ անունները իրենց նոր օթեւաններուն այն խոր հաւատքով, որ օր մը կրկին պիտի դառնան հայրենիք, կըրկին պիտի շէնցնեն զայն եւ դարձեալ ու վերստին լոյսը վառեն իրենց մարած օճախներուն մէջ:

Ու եթէ պատահի, որ անդարձ ըլլայ իրենց մեկնումը հայ-

բենիքէն եւ անկատար մնայ իրենց մեծ երազը ընգմիշտ, այդ պարագային, տարագրութեան մէջ, օտար ամբարձու վրայ, գէթ վառ կը մնայ հորը այն մեծ ոգիին, որ հայրենի գիւղերը կը պարփակէին իրենց մէջ:

Մշտապէ՛ս սիրելի գրագէտ, ինչպէս կը տեսնէք, մուսատաղցին, անգամ իր սեւ օրերուն եւ իր ծանր պարտութեան մէջ, արժանի մնաց այն մեծ զգացումին, որ դուք տածեցիք իրեն հանդէպ:

Ազգերու, ինչպէս եւ անհատներու արժանիքները երեւան կու գան ո՛չ միայն յաղթանակներու, այլեւ՝ պարտութեանց մէջ:

Իր յաղթական օրերուն ձեր հօր երգին արժանացած մուսատաղցին ցոյց տուաւ, որ ան արժանի է այդ երգին նաեւ իր պարտութեան օրերուն:

Մարդկային հերոսութիւններէն այս ամէնէն յուզիչը թող մխիթարանքի աղբիւր դառնայ ձեզ համար ու միշտ վառ պահէ ձեր հոգիին մէջ այն մեծ սէրը, որ գուք ունեցաք դէպի հնազոյն ազգի մը մէկ քաջարի բեկորը:



Ինչո՞ւ այս նամակը ձեզի. համագրային սուգի այս մուսուս արիւնոտ օրերուն ինչո՞ւ ձեր հայեացքը կը դառնայ դէպի ձեզի, եւ ինչո՞ւ ձեր անունը կու գայ մեր բոլորիս շրթներուն...

Ֆրանց վերփե՛ղ եւ Մուսա-տաղ. — երկու լուսեղէն սիրահարներ, որոնք օր մը ամէնէն անսիրտական եւ ամէնէն անշահախնդիր սիրոյ մէջ միաձուլուեցան իրարու՝ յաւերժարար զոյգ մնալու եւ իրարմէ՛ երբեք չբաժնուելու համար:

Այս խաւար օրերուն հարագատի արցունք կ'որոնենք՝ միասնաբար մեր սուգը սզալու եւ ցաւակիցի արցունքներուն մէջ ձեր մխիթարանքը գտնելու համար:

Եւ մեզմէ՛ ո՞վ աւելի արցունք ունի հերոսական Մուսա-տաղի համար, քան դուք, որ մեզմէ՛ ոչ նուաղ սիրեցիք զայն եւ մեզմէ՛ շատ աւելի ծառայեցիք անոր:

Հայկական աշխարհացրիւ Սփիւռքի մէկ ծայրէն միւսը, արեւելքէն արեւմուտք եւ հարաւէն հիւսիս, հայկական բոլո՛ր երգիկներէն ներս եւ բոլո՛ր բերաններու մէջ այսօր մէկ նուիրական անուն կը հոլովուի միայն, — ՄՈՒՍԱ-ՏԱՂ...

Ու կը գգանք, համոզուած ենք ու գիտենք, որ այդ անուան զուգահեռ հարիւր հազարաւոր հայկական բերաններ կը հոլովեն նուիրական այլ անուն մը եւս, — ՖՐԱՆՑ ՎԵՐՓԵՂ...

«ՅՈՒՍԱՐԵՐ»

(Հատուած)

— Ն. Ճ Ա Պ Ր Ի

Ճ Ե Պ Ե Լ

Մ Ո Ւ Ս Ա



Արաքսական է ձեպել Մուսան: Սակայն պարագաները պայն դրած են բուրգ հողին վրայ: Արաքսական է ձեպել Մուսան եւ պիտի վերազարնայ ան գիրկը մայր հողին, որովհետեւ ան տուած է ազատութեան համար պայքարող հերոսներ եւ մարտիրոսներ:

Արեւան եւ լուսնին միջեւ, անս նուած քեզ կը յիշեմ,
Ձիթեմի կանանչին մէջ, բնկողմանած քեզ կը յիշեմ,
Յիշատակդ աւ յաշերդ, դեռ շատ քարս եմ ինծի համար,
Սէզ ժայռերուդ շուքերն հսկայ, դեռ հովանի՛ ինծի համար:
ձեպել Մուսա, դուն հայր, դուն մայր, գորովագուրք.
ձեպել Մուսա, դուն սէր, դուն յայտ, կեանքիս մէջ մուրք.
Ես՝ քեզ մուկք, ես՝ պատարագ, ձեպել Մուսա:

Հեռու եմ եւ քեզմէ աչօք, հեռացած եմ եւ ակամայ.
Հեռացած եմ սիրոյդ համար, պատմութիւնս դուն լաւ գիտես,
Պատմութիւնն իմ տնկանքներուս, իմ պայքարիս՝ ծանօթ է քեզ.
Ազատութեան սերն է միայն,

digitised by A.R.A.R.@

Ազատութեան, անկախութեան :
 Գիտեմ որ դուն, հագատարն ես, թէ՛ մարտիկին, թէ՛ հերոսին-
 անայ ի քեզ, գիտնալով որ, մաս կը կազմես դուն այդ խումբին,
 Ծկալ ի քեզ, որ միասին, նստիմք, յիշեմք օրերը հին,
 Նստիմք, յիշեմք, երբ-անք դեպ' ես
 Երբ-անք մինչեւ Հայկ Նահապետ :
 Բայց յտարուինք այդ յուշերով,
 Չծուլանանք, հիմն՝ յիշելով :
 Որչափ քեզէ՛ ես հեռացայ, սիրեցի ես քեզ աւելի՛ :
 Որչափ քեզի՛ ես մոտեցայ, վախ՛ զգացի ես աւելի՛ :
 Մտնեալով քեզ աւելի՛
 Յիշողութիւնս զգայուն լաց ու արցունք կու տայ ինձի :
 Քու կարօտիդ համբերելով
 Չփնայան արհեստ մով :
 Հերոսներուդ հետ սպանուած, իմ յեզուովս յիշեցի քեզ՝
 Պատարեցան արհեստ քաց՝ զոց արհեստով յիշեցի քեզ :
 Կողերուս տակ միշտ գտնուող, երազ դարձար, հար հրակէզ,
 Քեզով կ'ապրիմ, դիտելով քեզ :
 Կը ճանամ, քեզ կ'երագիտ
 Ու կ'արթնամ, քեզ կը յիշեմ : |
 Կը տեսնեմ քեզ, արքուն թէ՛ քուն,
 Կը տեսնեմ քեզ, մարտի ճամբուն :
 Երագելով, յիշելով յար,
 Չեմ դռնամար, չեմ գռնամար :
 Կը վախճամ քեզ ունեհայտ երկրորդ անգամ,
 Կը վախճամ քեզ կորսնցնելու երկրորդ անգամ :

Ճէպէլ Մուսա, կը հարցունեմ դեռ ես ինձի,
 Ե՞րբ պիտի գայ օրը այն սուրբ, ուր գիրկ գիրկի ողջագուրուիմք :
 Հեռու ըլլաւ, թէ՛ մօտ ինձի՛ ես քու մօտըդ եմ տեսկան,
 Ու ես քեզով կ'ապրիմ միայն :
 Ու երբ արհեստ քեզ փնտռեմ,
 Ու երբ արհեստ քեզ գտնեմ,
 Ես կը մնամ յեղին, մոլորուն :
 Սիրտիս մէջ բոց, սիրտիս մէջ՝ հար :

Ճէպէլ Մուսա, երկարեցաւ գիշերը լուս
 Երբ յիշեցի վտար գուրջին արարքն անուր :
 Միտքս, հագիս, շատ յոգնեցուց, օտարութիւնն անտանելի,
 Յուսով եմ որ, ժամանակը, քեզ կը բերէ, մօտ աւելի :
 Ու կը վախճամ որ ժամանակն, մեզ տխրորէն, դարձեալ բաժնէ :
 Դարձեալ բաժնէ ու ցուցքնէ,
 Սիրտս-սիրտըս... ու արիւմէ :
 Թող մօտ ըլլամք մեմք իրարու
 Ու ես ապրիմ ծառերուդ տակ,

Ապրիմ լուսնի շագերուդ տակ,
 Շնչեմ բայբեզ, անյագօրէմ
 Ու լիսնամ ծաղիկներէդ:
 Ձի տեսքը յիտ, քու ծառերուդ
 Բուն կը բերէ իմ աչքերուս,
 Երբզ կու տայ իմ կոպերուս:
 Ես այդքանով կը գոհանամ,
 Յոյս-իրատուց քեզ կը օտանամ... կը գոհանամ,
 Չունենալով բռնապետ մը... կը գոհանամ:
 Ես մարդ մըն եմ, ամէն լեզուով ու բարբառով
 Ժամանակի, միջոցի մէջ, քեզ կը պոռամ անբող ուժով,
 Բարիքներդ; քիւր անհամար
 Բարիքներդ, մարդոց համար:
 Տեսնո՞ւ ինձի սիրտ, ուժ կու տայ,
 Ինչպէս տեսնո՞ւ՝ զիս ծնողիմ.
 Տեսնո՞ւ ինձի սիրտ, ուժ կու տայ
 Չեմ թշուտ անանկազին,
 Չեմ գաղթական,
 Թափառական:
 Չունիմ ես տեղ, չունիմ ես վայր:

Ճէպէլ Մուսա,
 Ա՛յ կը բաւէ, դարձիր արար, դարձիր գրկիմ քու մայր հողիմ,
 Ձի գիտեմ որ դուն հայարս ես, այլ՝ ազորմած,
 Չես հանդուրժեք, չարիմ, վատիմ:
 Ու յարդառատ այգիներդ
 Ու լեռներու յիտ ծառերդ
 Ու հովտիմ մէջ, ծաղիկներդ
 Կ'աղաչակեմ, կ'արձագանգեմ՝
 Մենք, արար եմք,
 Մենք եմք... մենք... եմք...:
 Եթէ քեզմէ հեռանամ ես
 Տուն կը գտնեմ եւ բնտանիք
 Երեսնեան ռոտանիմ մէջ:
 Եթէ քեզմէ հեռանամ ես
 Միրտս հանդարտ է, չունի կարիք
 Երեսնեան ռոտանիմ մէջ:
 Հոն կը գտնեմ, ոչ չարդ, ոչ տեղ, սպանալիք
 Այլ կը գտնեմ, կեանքի համար, միայն բարիք:
 Ամէն հայ, հոն, քեզ կը յիշէ:
 Եթէ քեզմէ հեռանամ ես, Ճէպէլ Մուսա,
 Հերոսներդ՝ տես պատանդ, վզիդ վրայ,
 Քու գոհերդ, վզիդ վրայ, պատանդ մնան,
 Տես անո՞ւք ալ, հերոսներ եմ, ինձի մտն,
 Մի՞նչու որ գայ, մէկտեղու՞մի պահն սրբագան,

Հրաշքով մը՝ անիրական.
 Ու միանամք մեմք երեքով,
 Ու մեկտեղուինք մեմք բովեքով:
 Ժողովուրդն այս ապերախտ չէ,
 Մատնիները սակայն կ'ատէ,
 Ան կը սիրէ որ աշխարհն այս ժպիտ ըլլայ,
 Եւ կ'ընէ իր անկարելին որ ան ժպտի:

Մասիս լեռներն, լոյսեր տեսայ,
 Երեւանի բարձունքներէն, արեցնող բոյրեր առի-
 Ու կեցած հան, եւ քեզ տեսայ, ճէպէլ Մուսա,
 Տեսայ լեռն, ամբողջ կարմիր, հուր, գեղամի,
 Զի վարդերը բարձրմաւէտ, արիւն, արիւն խմած էին.
 ...Գեա տաք էին...:

Ու այդ արեամբ, տաք ու անպիտ
 Թող զերմանայ, սա մարդկութեան սիրտը անխիղճ:
 Եւ ուռզուած, գաւակներուդ այդ արիւնով
 Հողն այս կարմիր, պապեմեղան,
 Գարձաւ պարտաւ, հող սրբազան:
 Եւ չեմ մտնար, երբ գայ օրը
 Երբ գայ օրը, մեծ հատուցումն,
 Պիտի գոջայ ռոտիս դաժան,
 Պիտի փնտոէ խօսքեր աման,
 Պատուակներ արդարացումն:
 Պիտի սողայ, պիտի մեզէ զինք յաւիտեան
 Արիւնն իր սեւ, առհասարակ,
 Պիտի գգայ, այն ժամանակ,
 Թէ ինչ է ցաւն, ինչ է տանջումն:
 Պիտի լայ սն:
 Իսկ եւ անհող, պիտի չսրբեմ արցունքներն իր,
 Ու չգրամ արցունքներուն, դառնաւ եւ բիրտ, անկարեկիր,
 Ու հարց չտամ իր կռակներուն:
 Ան չգրաց իմ ծնողքիս
 Մանուկներուն ու ծերերուն:
 Ամէն վերք, գոր վատը թողուց մարմնիս վրայ,
 Արիւն կու լայ,
 Ամէն դաշտն, որ թաղուեցաւ, մօր թէ մանկան սրտին վրայ,
 Արիւն կու լայ:
 Ու գտնելով այս բոլորը անբասկան
 Իր ոտքերովն, ազատու ու թաց, կռիկտեց ամ
 Ճակտիմ վրան, անմեղ մանկան,
 Ուր արիւնը կու լայ անձայն:

Օրերն ահա, Մեծ Գալիլիին, լի, յգի են,
 Վերադարձիդ եւ հատուցման օրը ահա.

Պիտի ընաւ գուք չունենամ,
 Ու քարկոծեմ
 Քարեր նետեմ,
 Քարեր նետեմ,
 Կայտեր շինեմ,
 Կայտեր շինեմ,
 Վրադ դիզեմ:
 Թէ պատասի որ ես մտնամ, չկարեցամ,
 Ժամանակը, ըլլայ պիտի, անգուք, դաժամ:
 Պիտի գաս գուք խնդրես ինձմէ:
 Ու ես պիտի գուք չունենամ,
 Որովհետեւ դուն չունեցար, գուք՝ այգերուս,
 Ես ալ պիտի գուք չունենամ, քա՛ւ այգերուդ:
 Դուն նստիս չառ ու ես խնդամ,
 Ու քեզ նստեմ գիրկը այն *ժեռ խամանակին*, Մեծ Գալիլիան,
 Որ ամենէն արգարայտա դատաւորն է, վատասելիին:
 Եթէ նայմիսկ, տկարութեամբս, քեզ գտեացնեմ
 Զգոհանաւ պիտի նորէն,
 Մինչեւ չերթաս, չգործադրես
 Արդարութիւն,
 Մինչեւ չերթաս ու չխնդրես
 Ներողութիւն
 Քու գոհերէդ:
 Սակայն, մինչ այդ, դուն կը մնաս, ստրուկ, գերի,
 Երեւ տիրոջ՝ անխոցելի...
 Արդարութեան, քու գոհերուդ, ժամանակին.
 Ու խոնարհիս անոնց ատաջ
 Միշտ ծնկաչոք, միշտ չարեքոսք,
 Դէմքդ՝ հազիւ,
 Դէմքդ՝ գետին:

Քարգ. Ն. Փ.

Հալէպ



ԼՈՑՍ ՏԵՍԱՆ

ԼՈՑՍ ՏԵՍԱՆ

ՏՐԱՆՑ ՎԵՐՅԵԼ

Մ Ո Ւ Ս Ա

Տ Ա Ղ Ի

Ք Ա Ռ Ա Ս Ո Ւ Ն

Օ Ր Ե Ր Ը

— Հատոր Ա. —

- Անթիլիաս, 1984, 347 էջ, բարձրարակ տպագրութիւն:



— Հատոր Բ. —

- Անթիլիաս, 1984, 267 էջ, բարձրարակ տպագրութիւն:



— Հատոր Գ. —

- Անթիլիաս, 1985, 327 էջ, բարձրարակ տպագրութիւն:

(Թարգմանեց՝ ՏՌԳՔ. Բ. ՓԱՓԱՉԵԱՆ)

ԼԻԲԱՆԱՆ

Հատավաճառ 12 Լ. Ո.
Տարեկան բաժնեգին 125 Լ. Ո.

ՍՈՒՐԻԱ

Հատավաճառ 15 Ս. Ո.

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

Տարեկան բաժնեգին 40 Ամերիկեան տոլար

بَاكِينُ
مجلة شهرية ، ادبية وفنية علمية
المدير المسؤول
السيد ازيقن كارنيك قزائجيان
PAKINE
REVUE MENSUELLE
LITTÉRAIRE & ARTISTIQUE
Propriétaire
Dr. A. KAZANDJIAN
•
Բ Ա Գ Ի Ն
ԱՄԱՍԳԻՐ
ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ
ԵՒ ԱՐՈՒԵՍԻ
Խմբագիր
ԳՕՂՈՍ ՍՆԱԳԵԱՆ
Խմբագրության անդամներ
ՅԱՐՈՒԹԻՆ ԳԵՐԳԵՐԵԱՆ
ՍԱՐԳԻՍ ԿԻՐԱՆՈՍԵԱՆ
Վարչական պատասխանատու
Թ. ՏԵՐ ԽԱՉԱՏՈՐԵԱՆ
B. P. 11 - 8404 - Beyrouth - LIBAN
Tel. 296898